ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

21

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԻՍԻԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

(Ա.Թ.Ա. I ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2009

902(479.25)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ АРМЕНИИ

21

ЖОРЕС ХАЧАТРЯН

ГРОБНИЦА СИСИАНА
(ВТОРАЯ ПОЛОВИНА I В. ДО Н. Э.)

Ереван
Издательство "Гитутюн" НАН РА
2009

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

A III 77787

THE ARCHAEOLOOICAL MONUMENTS AND SPECIMENS OF ARMENIA

21

ZHORES KHACHATRYAN

THE TOMB OF SISIAN
(SECOND HALF OF THE 1st CENTURY B.C.)

Yerevan
NAS RA "Gitutyun" Publishing House
2009



ՀՏԴ 941(479. 25): 902/ 904
ԳՄԴ 63.3(2 Հ) +63.4
Խ - 282

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների թեկնածու
Ի.Ա.Կարապետյան

Գրախոսներ՝ պատմական գիտությունների
թեկնածուներ Ն. Գ. Հակոբյան, Ա. Ֆ. Նախշքարյան

Խաչատրյան Ժորես
Խ - 282 Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես).- Եր.: «Գիտություն» ՀՀ ԳԱԱ, 2009.- 124 էջ:

Աշխատությունը նվիրված է Սիսիանում պատահարար բացված (մ.թ.ա. I դարի երկրորդ կես) վերնախավին պատկանող դամբարանի ճարտարապետության, թաղման ծիսակատարության մեզ հասած նյութերի ուսումնասիրությանը: Ցույց է տրված եզակի այդ դամբարանի նշանակությունը Հայաստանի հելլենիստական մշակույթի ուսումնասիրության համար, վերնախավի հակումներն ու ճաշակը:

Աշխատանքը նախատեսված է հնագետների, ազգագրագետների, պատմաբանների ու արվեստագետների համար:

ISBN 978-5-8080-776-5 ԳՄԴ 63.3 (2 Հ)+ 63.4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2009

ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1970թ. նոյեմբերի 29-ին Սիսիան ավանի Շհարստան (քաղաքատեղի) կոչվող վայրում՝ «Զոհաբերության» բլրի մոտ, որտեղ պահպանվում են հին պարիսպների և շենքերի հիմնապատերի հետքեր, տուն կառուցելու համար հիմքեր փորելիս բացվում է մի դամբարան: Փորողները, նկատելով դամբարանի ծածկի սրբատաշ սալերը, բացված հուշարձանի մասին անմիջապես համապատասխան մարմիններին հայտնելու փոխարեն, ջարդում են դրանք, անցք բացում և մտնում ներս: Հանելով մի քանի ոսկե զարդեր, արծաթե թասեր, կահույքի բրոնզե և երկաթե մեծ քանակությամբ մասեր, պղնձե և կավե անոթներ՝ խառնիխուռն լցնում են պարկի մեջ և թաքցնում:

Դամբարանի բացվելը հայտնի է դառնում իշխանության տեղական մարմիններին: Շրջանային դատախազության և ոստիկանության համատեղ գործողությունների շնորհիվ իրերի մի մասը վերադարձվում է: Բացված դամբարանի մասին հայտնվում է Հայկական ԼՍՀ Գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտ և Հայաստանի պատմության թանգարան:

Դեկտեմբերի 2-ի վաղ առավոտյան մենք արդեն Սիսիանում էինք: Ծանոթանալով դամբարանից հանված նյութերին՝ նկատեցինք, որ դրանց մեջ կան բազմոցի կամ մահիճի բրոնզե ոտքեր և այլ մասեր՝ երկաթե և փայտե միջուկով, բրոնզե աշտանակի արծաթե թասեր, արծվանիշ մեդալիոններ, կնոջ գլխիկ՝ դարձյալ արծաթից, գավազանի ոսկե գլխիկ (որը սխալմամբ թագի մաս էր համարվել), երեք ոսկե ապարանջան, որոնցից մեկն առյուծագլուխ (որը ջարդել, բաժանել էին երկու մասի), ոսկե մատանի, կրծքազարդի երկու կախիկ, պղնձե կաթսա, կավե անոթներ և մատանիների ակեր՝ քարերից ու ապակուց: Այս նյութերին ծանոթանալուց հետո շրջանային կազմակերպությունների օժանդակությամբ ձեռնամուխ եղանք հուշարձանի պեղումներին:

Մինչև դամբարանի ներսի ուսումնասիրությունը սկսելը, պեղումներ կատարվեցին նրա վերին հարթակում:

Դամբարանը ծածկված էր լավ մշակված երեք կրաքարե սալերով, որոնց վրա նստած էր հողի և մոխրի հաստ շերտ, իսկ սալերի շուրջը, մանավանդ արևելյան և հյուսիսային հատվածներում, շարված էին մեծ չափերի հում աղյուսներ: Սալերի և աղյուսների շուրջ՝ բավականաչափ ընդարձակ տարածության վրա, 13-25սմ հաստությամբ մոխրաշերտ էր, մեջը՝ մեծ քանակությամբ կավե փոքր կարասների, կճուճների, սափորների և այլ անոթների բեկորներ:

Դամբարանում պահպանված էր կավե թրծած դագաղը (սարկոֆագ), ՝ երկարությունը՝ 1.15մ, լայնությունը՝ 57սմ, խորությունը՝ 60սմ, զարդարված պարանաձև երեք ուռուցիկ գոտիներով: Դագաղի կափարիչը երկարուկ է, տաշաաձև, 14.5սմ խորությամբ:

Ներսում պեղումներ կատարելիս (պեղող հնագետ՝ Ժ.Խաչատրյան), պարզվեց, որ փորելու ժամանակ նրա մեջ թափվել էին զգալի քանակությամբ հող և քարի ջարդոն: Թեև գանձախույզները խառնել էին դամբարանի ներսում եղած հողը, այնուամենայնիվ նախնական հողաշերտի ստորին մասը պահպանվել էի, և հնարավոր դարձավ պարզել որ շարք իրերի սկզբնական տեղադրությունն ու դասավորությունը:

Պեղումներով հայտնաբերվեցին մահճի և գահույքի առանձին մասեր, դաշույններ, նիզակի ծայրեր, նետասլաքներ, դանակներ, կավե անոթների բեկորներ, ոսկե զարդեր (գավազանի գլխիկ, երեք մատանի, ականջօղ, կրծքազարդի յոթ կախիկ և այլն), կապարանման նյութից պատրաստված տղամարդու գլխաքանդակ, մատանիների ակեր, մեծ թվով ուլունքներ՝ տարբեր գույնի ու տեսակի քարերից, ապակե մածուկից, մետաղե կոճակներ, քաբե կնիք՝ զինվորի և արջի պատկերներով, մեկ ոսկե և 14 արծաթե դրամներ:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Սիսիանի շրջանային կազմակերպություններին և նրանց բազմաթիվ աշխատակիցներին անհետացած նյութերի որոնման ու հայտնաբերման, ինչպես նաև պեղումներ կատարելու ընթացքում ցուցաբերած անգնահատելի օգնության համար:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ բացվել է իշխանական դամբարան՝ կառուցված մեզնից 2000 տարի առաջ: Իր կառուցվածքով այս դամբարանը մի ուշագրավ հուշարձան է: Նրա վերին հարթակում վառված հում աղյուսների և ընդարձակ տարածություն բռնող հսկա մոխրաշերտի առկայությունը՝ մեծ քանակությամբ խեցեղեն բեկորներով, թերևս վկայում է, որ դամբարանում թաղումները կատարվել են դիակիզման ծիսական արարողությամբ:

Չի բացառվում, որ դամբարան-հուշարձանն ունեցել է նաև զոհաբերության արարողությունների կամ սրբավայրի նշանակություն: Դամբարանի ներսում գտնվեցին ոսկորների անհնշան մնացորդներ և մարդու մեկ ատամ: Ըստ դամբարանային նյութերի՝ այստեղ թաղված են եղել տղամարդ և կին: Նախնական այս դիտարկումները պետք է ճշգրտվեին նյութերի հետագա ուսումնասիրությամբ:

Մի բան պարզ էի, որ բացվել է երկհազարամյա հնության դամբարանային նշանավոր հուշարձան՝ գիտական մեծ արժեք ներկայացնող առատ նյութերով, արվեստի աչքի զարնող գտածոներով: Արծաթե թասերից մեկը մաքրելիս երևաց արամերեն արձանագրություն:

Դամբարանի հայտնաբերումը Լիսիանում, որքան պատահական, նույնքան և բացատրելի է: Լիսիանը հնագույն ժամանակներից եղել է Սյունիքի իշխանների նստավայրը, և բնականաբար այստեղ պետք է գտնվեին նրանց պալատական, պաշտամունքային կառույցները, կալվածքները, ինչպես և դամբարանները: «Զոհաբերության» կոչվող բլուրը զննելիս հայտնաբերվեցին կավե կարասների և այլ անոթների բեկորներ, որոնցից մի քանիսը, անշուշտ, հասակակից էին դամբարանին, իսկ մյուսներն ավելի ուշ ժամանակների էին: Սիսիանը եղել է

քաղաքատիպ բնակավայր, ուստի նրա ավերակների վայրը հեռագայում կարող էր (քաղաքատեղի) կոչվել: «Զոհաբերության» բլրից և բացված դամբարանից շուրջ 300մ դեպի հարավարևելք՝ «Շիարստանում», եղել է և մի եկեղեցի, որի ավերակներում հայտնաբերված կղմինդրներից դատելով՝ կարելի է ասել, այն կառուցվել է VII դարից ոչ ուշ: Սիսիան ավանի հյուսիսարևմտյան ծայրում մինչ օրս կանգուն է VII դարի եկեղեցական առավել նշանավոր կառույցներից մեկը՝ Ս.Հովհաննես եկեղեցին, Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ դրվատելով Սյունի վանքի «չքնաղ, նորակերտ ձևով կառուցված գմբեթահարկ եկեղեցին», այն կոչում է ս. Գրիգոր (այժմ տեղացիներն անվանում են սբ. Հովհաննես): Եկեղեցուց ոչ հեռու Սյունյաց իշխաններբը կառուցել էին «Տուն աբքունի և ապաստանք իշխանանիստ»,- շարունակում է պատմիչը:

Նորահայտ դամբարանը լրացնում է Սիսիան ավանի աչքի ընկնող հուշարձանների շարքը, միաժամանակ վկայում է տեղում, մանավանդ «Զոհաբերության» բլրի վրա և Շիարստանում պեղումներ ձեռնարկելու, բացված հուշարձաններբն անաղարտ ու իրնամքով պահպանելու անհրաժեշտության մասին:

ԴԱՄԲԱՐԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Պեղումները պարզեցին, որ դամբարանը ստորգետնյա սրբատաշ, տարբեր երկարության, 20-23սմ հաստության կրաքարե սալերով կանոնավոր և ինքնատիպ շարվածքով կառուցվածք է (աղ. I_{3-5})՝ ուղղանկյուն հատակագծով, ներսի չափերն են՝ 2.10X1.80 մ, բարձր. 1.66 մ (չափագրությունը կատարել է Սիսիան ավանի ճարտարապետ Մ.Դանիելյանը): Պատերը դրված են նախապես պատրաստված սալահատակի վրա: Առուտը (74X69սմ) արևմտյան կողմում է՝ հարավային պատին կից, փակված ավելի վոքրաչափ քարերով: Դրանք, ըստ անհրաժեշտության, կարող էին հանվել և նորից տեղադրվել: Արևելյան և արևմտյան պատերի քարերը՝ չորրորդից սրսչև յոթերորդ շարքը, 4 - 20 սմ առաջ դնելու հետևանքով դամբարանի վերին մասն աստիճանաբաբ նեղանում է մինչև 65 սմ և փակվում լավ մշակված 150X70X24 սմ չափերի երեք սալերով (աղ. $I_{,1}$ $II_{,1}$): Սալերի վրա հում աղյուսներով (63X49X20 սմ) պատրաստված է մոտ 25մ^2 մակերեսով հարթակ, որի վոա բացվեց երկու խարիսխ (աղ. I_2):

Հայաստանում «կեղծ թաղով» դամբաբանները հանդես են գալիս մ.թ.ա. II հազարամյակում և հարատևում են մինչև մ.թ.ա. VI դարը: Ըստ որում, հանդիպում են երկու, երեք և չորս կողմից աստիճանաձև նեղացող ծածկով դամբարաններ: Այդպիսի դամբաբաններ հայտնաբեբվել են Օշականում,[1] Սևանի ավռգանում, Արագածի լանջերին, Լոռիում,[2] Սիսիանի տարածքում, Իշխանասաբում և այլուր: Հսկաների տնեբը («Օղուզի տներ»), ինչպես ժողովուրդն է անվանում, կառուցված են հսկայական քարերով, առանց շաղախի. դրանք, երեք կողմից (իսկ դոլմենները, որոնք եբկարավուն են՝ եբկու կողմից) աստիճանաձև նեղանալով, ծածկվում են հսկայական սալերով, Քաբերի տձևության պատճառով հնարավոր չէր ուղիղ անկյուններ ստանալ, ուստի ստացվում է կամաբի ձև:[3]

Համեմատաբար ավելի կանոնավոր շարվածք ունեն Լոռիում պեղումներբով բացված, միջին բրոնզի շրջանին վերաբերող № 1 և № 6 դամբաբանները: Դրանք ուղղանկյուն են, պատեբը շարված են անմշակ, բայց կանոնավոր ձևեր ունեցող մեծ սալերով, Առաջինի չափերն են՝ հատակագծում 6,70x2,92մ, բարձր. 2,60մ, եբկրորդինը՝ 5,50x3մ, բաբձր. 3մ: Երկու դամբարանների պատերն էլ, որոնք բաղկացած են յոթ շարքից, սկսած եբկրորդից, երկայն-

---

[1] *С.А.Есаян*, Находки урартских изделий в Ошаканском могильнике. "Древний Восток и мировая культура", М., 1981, с. 94.
[2] *С.Г.Деведжян*, Лори-Берд, 1. Результаты раскопок 1969-1973гг. Ереван, 1981, с. 19, 20, 24.
[3] *Ա.Ղորամանյան*, Նյութեր եայկական ճարտարապետության պատմության, I, Երևան, 1942, էջ 378, նկ. 279, հավելվածներ 381-403:

քով, երկու կողմից աստիճանաձև նեղանում են մինչև 1.55մ և ծածկվում հսկա սալերով:[4] Կամոյի շրջանի Կարմիր գյուղում բացված ուրարտական մ.թ.ա. VII դարի դամբարանը ուղղանկյուն հատակագծով ծածկված է անկյուններում ձգված, աստիճանաձև նեղացող կոպիտ քարերով:

Ենթադրվում է, որ «կեղծ թաղը» հայկական ճարտարապետության մեջ լայնորեն կիրառվող գլխատների ու հազարաշենների գմբեթավոր փայտե ծածկերի նախատիպն է:[5] Վերջիններս իրականացվում էին այնպես, ինչպես Կարմիր գյուղի վերոհիշյալ ուրարտական դամբարանը: Հազարաշեն ծածկերի հնագույն օրինակներ հանդիպում են և Կարմիր բլուրի մինչուրարտական բնակավայրում:[6]

Լաստիճանաձև նեղացող ծածկով քարաշեն, աղյուսաշեն դամբարաններ հայտնի են նաև Հին աշխարհի տարբեր երկրներում՝ Եգիպտոս (II դինաստիա), Մարի, Ուր (III հազ.), Քիշ՝ վաղ դինաստիական շրջան,[7] Լիիրոս կղզի[8] (կիկլոպյան դամբարաններ) և այլուր:

Ծածկի այդ ձևը շատ տարածված է եղել նաև հունական աշխարհում՝ Փոքր Ասիա, Թրակիա, Էտրուրիա, հատկապես Հյուսիսային-մերձսևծովյան շրջաններում[9], որտեղ այդ կառուցվածքը կատարելության է հասցված: Բոսփորում դրանք հանդես են գալիս մ.թ.ա. V դարի վերջերին առավել զարգացած ձևերով, իսկ IV դարում Պանտիկապեում ու նրա շրջակայքում դառնում են ամենատարածված ձևերից մեկը և հարատևում մինչև մ.թ. I դարը:[10] Հանդիպում են երկու, երեք և չորս կողմից նեղացող, աստիճանաձև ծածկերով դամրարաններ: Վերջինիս փայլուն օրինակներից է Կերչի մոտ բացված «թագավորական կուրգանը»:

Բոսփորում դրանց հանդես գալու մասին կա երկու տեսակետ: Առաջին, որ դրանք համարվում են այսպես կոչված էգեյան թոլոսների[11] (Աարեոսի դամրարան) հետագա զարգացումը, իսկ թոլոսները լայնորեն տարածված էին Հունաստանում մ.թ.ա. II հազարամյակի կեսերից մինչև IX-VIIդդ.: Հունաստանում այդ շրջանում փորձեր են կատարվել կառուցելու նաև աստիճանաձև ծածկով ուղղանկյունաձև դամրարաններ, բայց տարածում չեն ստացել: Միքենյան թոլոսների սկզբունքները շարունակվեցին Էտրուրիայում և Փոքր Ասիայում մ.թ.ա. VII-VIդդ., այսինքն՝ մինչ Թրակիայում դրանց հանդես գալը: Ենթադրվում է, որ այդ ավանդույթը Բոսփոր է անցել Թրակիայից և Փոքր Ասիայից,[12] որոնց հետ Բոսփորյան թագավորու-

---

[4] *Ս.Դանեղյան*, Լոռի բերդի № 2 դամբարանը, ՊԲՀ, 1972, № 2, էջ 267, նկ. 1: *С.Г.Деведжян*, Указ. соч., с. 19, 20, 23, 24, рис. 3.
[5] *С.В.Вартанян*, Азарашен и его значение в армянской архитектуре, ВОН, 1967, № 6, с. 7.
[6] *А.А.Мартиросян*, Город Тейшебаини, Ереван, 1961, с. 25, 30, рис. 9 а, б.
[7] *Г.Чайлд*, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, с. 144, 223, 229, 233, 237, Всеобщая история архитектуры в 12 томах, Архитектура Древнего мира, 1, М., 1970, с. 199, рис. 2.
[8] *Г.Чайлд*, У истоков европейской цивилизации, М., 1952, с. 86, рис. 25.
[9] *М.Ростовцев*, Античная декоративная живопись на Юге России, СПБ, 1914, с. 109 и сл.; *В.Ф.Гайдукевич*, Боспорское царство, М.-Л., 1949, с. 245-274; Его же, Боспорские города, Уступчатые склепы, Эллинистическая усадьба, Илурат, Л., 1981, с. 6-52; *В.Д.Блаватский*, О происхождении боспорских склепов с уступчатыми перекрытиями,-СА, 1955, № XXIV, с. 29-53; *А.Н.Карасев*, Архитектура.-"АГСП", М.-А.., 1955, с. 204-214; *Г. Цанова*, *Л.Гетов*, Тракийската гробница при Мъглеже.-"Археология", кн. 2, 1973, с. 15-29; *В.И.Цехмистренко* и *В.Э. Кунин*, Склеп с уступчатым покрытием в районе царского кургана близ Керчи.-МИА, № 69, 1959, с. 251-254; *Д.С.Кирилин*, Трехбратные курганы в районе Тобачикского озера.-"Античная история и культура Средиземноморья и Причерноморья", А, 1968, с. 178-188.
[10] *М.Ростовцев*, Указ. соч., с. 139 и сл. 148.
[11] Հատակագծում շրջանաձև կառուցվածք ունեցող շինություններ:
[12] *В.Ф.Гайдукевич*, Боспорское царство, с. 262-265, его же, Боспорские города, с. 50-52; ВИА, с. 194, рис. 35.

թյունը սերտ կապերի մեջ էի: Երկրորդ կարծիքն այն է, որ այդ ավանդույթը ոչ մի կապ չունի Միկենյան թոլոսների հետ: Այն առաջացել է տեղական ցեղերի մոտ գոյություն ունեցող, փայտե դամբարանների ձևերից, որ հունամետական վերնախավը շարունակել է մերձկուրանյան վրանաձև ծածկերով դամրարանների ավանդույթները՝ պարզապես փայտե կառուցվածքները փոխարինելով քարով:[13]

Վերոհիշյալ կարծիքներից առաջինն ավելի համոզիչ է թվում: Այդ ձևերն, արևելքում ավելի վաղ են հանդես գալիս, ուստի «կեղծ թաղով» ծածկի ակունքները պետք է փնտրել այնտեղ: Շատ հավանական է, որ միկենյան թոլոսներն իրենք կրած լինեն Առաջավոր Ասիայում և Եգիպտոսում գոյություն ունեցած այդ տիպի ծածկերի ազդեցությունը, թեև բացառված չեն իրարից անկախ դրանց հանդես գալը և զարգանալը: Փոքր Ասիայում՝ խեթական[14] աշխարհում (Խաթուշաշ), Լիդիայում և այլուր,[15] «կեղծ թաղով» քարե և աղյուսե[16] կառույցներ, դամբարաններ մ.թ.ա. II-I հազարամյակում հաճախ են հանդիպում: Ուշ շրջանի այդօրինակ կառույցներից ուշադրության արժանի են Անկարայից 40կմ դեպի արևմուտք գտնվող Կարալարում[17] 1933թ. բացված, չորս կողմից ասաիճանաձև նեղացող «կեղծ թաղով» դամբարանները («C»), որոնց ճիշտ ժամանակը որոշված չէ: Վ.Ֆ.Գայդուկևիչը ենթադրում է, որ դրանք վերաբերում են հելլենիստական շրջանին:[18]

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, ապա վերոհիշյալ դամիարանները (մ.թ.ա. II հազարամյակից մինչև մ.թ.ա. VI դար) թույլ են տալիս ենթադրել, թե գործ ունենք ծածկի սույն ձևի ստեղծման ու զարգացման առանձին կենտրոնի հետ: Կարելի է ենթադրել միայն, որ նման ծածկ ունեցել են Քսենոփոնի «Անաբասիսում» նկարագրված (մ.թ.ա. V դարի վերջ) հայկական բնակարանները,[19] Դարանաղյաց ու Անգեղ տուն գավառում թաղված հայ թագավորների[20] և Էրզրումի երկաթուղու շինարարության ժամանակ՝ 1917թ., Հասան-Ղալայում բացված հելլենիստական դարաշրջանների դամիարանները:[21] Հնագետներին չի հաջողվել դրանք տեսնել կանգուն վիճակում, որովհետև շրջակայքի բնակիչները քանդել և տարել էին քարերը: Պահպանվել էին միայն սալահատակը և պատերի առաջին շարքի քարերի մի մասը: Պաաերը շարված են եղել բաց մոխրագույն, մուտ 0.5մ բարձրությամբ սրբատաշ սալերից, առանց շաղախի, միայն անկյունային քարերն են միացվել ծիծեռնակապոչ կապերով: Սալարկը, որը գտնվում էր դամբարանի սալահատակ վրա,

---

[13] ***Д.Блаватский***, О происхождении Боспорских склепов с уступчатыми перекрытиями.-СА, XXIV, 1955, с. 37-38.

[14] ВИА, с. 242, рис. 25; E.Akurgal, Die kunst der Hethiter. München, 1961, Abb. 73; E.Klengel und H. Klengel. Die hethiter und ibre Nachbarn. Eine kulturgestchichte kleinasien von Çatal Hüyük his zu Alexander dem Grossen. Liepzig, Koehier, Amelang, 1970, Abb. 30.

[15] ***С.А.Кауфман***, Об уступчатых склепах Боспора.-"Сообщение Института истории и теории архитектуры АН СССР", № 6, 1947, с. 22-23; ***В.Ф.Гайдукевич***, Боспорские города, с. 51; ВИА, с. 251, рис. 42.

[16] ***J.de Morgan***, Recheches archeologoques, Fouilles a Suse.- Pans, 1896, vol. I, s. 114.

[17] Remzi Oguz Arik et J.Coupry. Les tumuli de Karalar et la sépulture du roi Déiotaros II.,-"Revue archéologique", 1935, T. VI, Juillet-décembre, p. 136-140, fig. $4_{8,9}$.

[18] ***В.Ф.Гайдукевич***. Боспорское царство, с. 527, прим. 64.

[19] Xen. Anab., IV, 25.

[20] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, գ. III, իէ; ***Փաւստոս Բիւզանդ***, Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, դպր. IV, 24:

[21] ***С.В.Тер-Аветисян***. Курганы Хасан-Калы.-"Известия Кавказского историко-археологического института", том IV, Тифлис, 1926, с. 73-76, рис. 1.

շարված էր նույն քարերով (երկ. 2մ, լայն. 1,5մ): Բացելիս դամբարանը կանգուն է եղել, սակայն փայտե ծածկի հետքեր չեն նկատվել:

Երկրորդ դամբարանաբլրի պեղումները պատերազմի պատճառով չեն ավարտվել: Սակայն պեղումների ղեկավար Ս.Վ.Տեր-Ավետիսյանի կարծիքով երկու դամբարանաբլուրները իրար նման են, վերաբերում են մ.թ.ա. III-IIդդ. և կրում են հելլենիստական մշակույթի ակնհայտ ազդեցությունը:[22]

Ուշ հելլենիստական Հայաստանում «կեղծ թաղն» օգտագործել են ոչ միայն քարե, փայտե, այլև հում աղյուսե կառուցվածքներում: Աղյուսաշար նմանատիպ դամբարանները են հայտնաբերվել պատմական Հայաստանի Շակաշեն (Սակաշենե) գավառում [23] (վերաբերում են մ.թ.ա. և մ.թ. I դարերին):[24]

Ենթադրվում է, որ Փարաքարի աշտարակաձև շինությունը ևս ունեցել է «կեղծ թաղ»:[25] Սակայն նրա աշտարակաձև մյուս շինությունների ոչ լինելը[26] և ծածկի հարցը վրճելի են: Այսպիսով, մենք տեսնում ենք «կեղծ թաղով» ծածկի ավանդույթների շարունակական գոյատևում Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազարամյակի կեսերից մինչև մեր օրերը: Ենթադրվում էր, որ Սիսիանի դամբարանն ունեցել է նաև վերգետնյա կառույց,[27] մինչդեռ, ինչպես վերը տեսանք, երկրորդ հարկ չի ունեցել: Հայտնաբերված խարիսխները որևէ կապ չունեն շինության հետ, դրանք ծառայել են իբրև զոհասեղաններ, որովհետև. ա) հայտնաբերված խարիսխներից մեկը կրաքարից է, մյուսը՝ բազալտից. բ) որձաքարե խարսխի վերնամասը կրակից սևացած է. գ) դրանք թեև գտնվել են իրենց նախնական տեղում (in situ), բայց դամբարանի և միմյանց նկատմամբ սիմետրիկ չեն դասավորված. դ) դամբարանի վրայի աղյուսաշար հարթակը գրեթե անվնաս էր, և վերգետնյա այլ կառույցի հետքեր չեն նշմարվել. ե) «կեղծ թաղով» ծածկված հայտնի դամբարաններից և ոչ մեկը (Փոքր Ասիա, Թրակիա, Բոսփոր կամ էտրուրիա), երկրորդ հարկ, այսինքն՝ վերգետնյա կառույց չեն ունեցել: Խարիսխներն իրև զոհասեղաններ օգտագործելու փաստն ու սովորույթը լայնորեն տարածված են եղել Արտաշատի ուշ հելլենիստական և մ.թ. առաջին դարերի դիակիզումով կատարված թաղումներում:

Մ.թ.ա. III-Iդդ., երբ Հայաստանի կապերը ավելի սերտացան հելլենիստական աշխարհի հետ, հայկական մշակույթը, այդ թվում շինարվեստը, կրեցին հելլենիստական մշակույթի բաբեբար ազդեցությունը: Թաղման ձևերի մեջ մուտք գործեցին հելլենինտական տարրեր, «կեղծ թաղով» դամբարաններն ավելի կատարելագործվեցին:

---

[22] Նույն տեղում, էջ 84:
[23] Այժմյան Կիրովաբադից հարավ՝ Խանլար տանող ճանապարհին:
[24] *Я.И.Гумель*.Сырцовые гробницы Азербайджана и их датировка.-СА, 1940,
[25] *С.С.Мнацаканян,* Композиция двухярусных мартириумов в армянском раннесредневековом зодчестве, ИФЖ, 1976, № 4, с. 215.
[26] *Գ.Տիրացյան,* Փարաքարի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Առաջավոր Ասիայում, ԲԵՀ, 1970, № 1, էջ 238:
[27] *С.С.Мнацаканян,* նշվ. աշխ., էջ 216:

ԹԱՂՄԱՆ ԾԵՍԸ

Ամսիանի դամբարանը Հայաստանի ուշ հելլենիստական շրջանի թաղման ծեսերի՝ դիակիզման, թաղման կրակի շուրջը կատարված հոգեհացի, զոհաբերության և հեղման արարողությունների մասին լավագույնս պատկերացում տվող հուշարձաններից է:

Դամբարանի վրա չթրծված խոշոր աղյուսներից (6.3x49x20) մոտ 25մ² մակերեսով հարթակ է պատրաստվել՝ դամբարանի ապահովության, փչացումից և օտար աչքից հեռու պահելու, ինչպես նաև վերոհիշյալ ծեսերը կատարելու համար (աղ.I,2):

Թաղումը կատարվել էր դիակիզման եղանակով, որից առաջացած մոխիրը լցվել էր դամբարանում տեղադրված կավե սարկոֆագի մեջ (երկ.՝ 115 սմ, լայն.՝ 57սմ, խոր.՝ 60սմ):

Դատելով վառված աղյուսներից՝ կրակը բավականին մեծածավալ և ուժեղ է եղել: Ինչպես խեցեղեն իրերն են վկայում, դիակի հետ կրակի վրա դրվել են նաև նրա անձնական իրերի մի մասը՝ օծանելիքի անոթներ և այլն: Այսինքն՝ նախքան դիակիզումը կատարել են լվացումներ, մաքմինն օծել անուշահոտ յուղերով, իսկ դատարկ անոթները դրել հետը:

Դիակիզումն, իբրև թաղման ծես, ընդունված է եղել Հին աշխարհի շատ ժողովուրդների կողմից՝ խեթեր, հույներ, հռոմեացիներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիակիզումը նորություն չէր և Հայաստանում: Հանդիպում է դեռևս վաղ և ուշբրոնզեդարյան, երկաթի և վաղ հայկական դարաշրջաններում: Այդպիսի թաղումներ պեղվել են էջմիածնի շրջանի Շրեշ բլուրում և Աբովյանի շրջանի Էլար գյուղում:[28] Էլարի դամբարանների մի մասում դիակն այրել են հենց գերեզմանափոսում, անասունների հետ միասին, իսկ մյուսներում զտնվել են այրված ոսկորներով, բրոնզե և երկաթե առարկաներով աճյունակալ սափորներ: Դամբարանների պատերին նկատելի են ծխի հետքեր: Հավանաբար այստեղ ևս դիակիզումը կատարվել է տեղում: Դիակիզմամբ դամբարաններ հայտնաբերվել են նաև Զվարթնոցի[29] շրջակայքում, Լոռիում, Ոսկեվազում, Սևանի ավազանում[30] և այլուր:

Ծովակում բացված դամբարաններն անտաշ քարերով պատած ստորգետնյա կառույցներ են: Դրանց պատերի քարերը սևացած են, որը տեղում դիակիզում իրականացնելու արդյունք է: Այստեղ այրված կմախքների հետ մեկտեղ հայտնաբերվել են բրոնզե և կավե իրեր: Դրանց մեջ կան և ընտանեկան (տղամարդու, կնոջ, երեխայի) թաղումներ: Երբեմն դիակների հետ այրել են նաև զոհաբերվող եզներ, ոչխարներ, ծիեր և այլն: Կան դամբարաններ, որոնք

---

[28] ***Եր.Լալայան***, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի, 1928, № 3, էջ 94 և հտ.:
[29] ***Աշխ.Քալանթար***, Հին Վաղարշապատի պեղումներ, Երևան, 1931, էջ 44:
[30] ***Եր.Լալայան***, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 110 և հտ.:

ցածր սիջնադպատերով բաժանվում են երկու մասի:[31]

Դիակիզումը հատուկ է եղել նաև ուրարտացիներին: Ալթին-Թեփեի (Ոսկե բլուր) ստորգետնյա շքեղ բնակարանաձիգ դամբարանների կողքին առկա են Նոր Արեշի և Մալաքլուի դիակիզումով դամբարանները: Դրանք հանգուցյալի աճյունը պարունակող աճյունասափորներ են ուրարտական տիպի (կարմրավուն) և դամբարանային պարագաներ պարունակող կճուճներ, որոնք դրվել են հատուկ փորված (ինչպես Նոր Արեշի կոլումբարիում) և բնական փոսերի մեջ (Մալաքլուում): Ժայռերի ճեղքերը փակել են մանր քարերով, իսկ աճյունասափորները ծածկել տուֆ սալաքարերով:[32] Դիակիզումը կատարվել է տեղում: Այդ են վկայում իրերի վրա այրվածքի հետքերը:

Մ.թ.ա. VI-Vդդ. դիակիզումով հետաքրքիր կուրգան է պեղվել Շամշադինի շրջանի Գյոգլու կոչվող վայրում:[33] Հելլենիստական շրջանի դիակիզումով թաղումներ հայտնաբերվել են նաև Գառնիում և Արտաշատում: Գառնիում դիակիզումը գույքի հետ կատարվել է տեղում՝ կարասի մեջ:[34] Թաղման ծեսը դիակիզումով, հոգեհացով և զոհաբերություններով Արտաշատի հարավարևելյան դամբարանադաշտի բնորոշ ձևն է:

Այսօր դժվար է ճշգրիտ պատասխան տալ այն հարցին, թե ինչու են այրել մահացածի դիակի: Այս առիթով մասնագետները տարբեր կարծիքներ են հայտնել: Հունաստանում դիակիզման դրդապատճառներն ուսումնասիրող գիտնականները կարծում են, թե այն արդյունք էր քոչվորական և ռազմական կյանքի ոչ բնականոն պայմանների, որոշակի կրոնական աշխարհայացքի, նեխող մարմնի նկատմամբ ունեցած նողկանքի, հոգու երկյուղի, հոգուն օգնելու ցանկության:[35]

Հնում գոյություն են ունեցել թաղման բազմազան ձևեր: Սերվիոսը «Էնեականի» մասին տված բացատրություններում ասում է, թե եգիպտացիները դիակը մշակում, մումիա էին դարձնում, որպեսզի հոգին երկար ժամանակ չբաժանվի մարմնից, իսկ հոմեացիները, ընդհակառակը, վառում էին այն, որպեսզի հոգին արագորեն բաժանվեր մարմնից և շտապ վերադառնար իր նախնական վիճակին:[36] Սակայն մարդիկ աշխատել են ամեն կերպ իրենց ծանը վիշտն արտահայտել, նվիրատվություններ ու զոհաբերություններ կատարել, հնարավորինս հարմարավետ կացարաններ կառուցել, ուրիշ այլ միջոցներով սիրաշահել ննջեցյալի հոգին, որպեսզի նա իրեն լավ զգա անդրշիրիմյան աշխարհում և կենդանի մարդկանց աշխարհ վերադառնալու ցանկություն չունենա, չչարանա ու չվնասի նրանց: Միևնույն ժամանակ նրանք կարծում էին, թե բարեկամական հարաբերություններ պահպանելով և մշտապես հոգ տանելով եանգուցյալի հոգու մասին՝ կարող էին նրա բարյացակամությունը շահել և օգուտ-

---

[31] *Եր.Լալայան*, Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք, Ազգագրական հանդես, գ. 15, 1907, էջ 166-173, 175 և հտ.:

[32] *Հ.Մարաիրոսյան, Հ.Մնացականյան*, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 1958, № 10, էջ 63 և հտ.: *Б.А.Куфтин*, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, ВГМ, т. XIII-B, Тбилиси, 1943, с. 4 и сл.

[33] *С.А.Есаян*, Погребения VI-Vвв. до н-э. в горах Шамшадина, СА, № 3, М., 1965, с. 229 и сл.

[34] *Ժ.Դ.Խաչատրյան*, Դիակիզումը Հայաստանում (մ.թ.ա. II-մ.թ. IIIդդ.), ՀՍՍՀ ԳԱ, ԼՀԳ, 1975, № 2, էջ 57-69:

[35] *Е.Г.Каспанян*, Грунтовые некрополи Боспорских городов VI-IVвв. до н.э. и местные их особенности, МИА, № 69, Москва-Ленинград, 1959, с. 271-273.

[36] *E.Rode*, Psyche, Bd. I, Leipzig, 1898, էջ 30, ծան. 4.

ներ ստանալ: Դրա համար էլ աշխատում էին կրակի միջոցով հնարավորինս արագ ոչնչացնել մարմինը, որպեսզի կտրվեր մեռյալի հոգին կենդանի աշխարհի հետ կապող թելը:

Հայաստանում դիակիզումը գոյատևում է մինչև քրիստոնեության ընդունումը, թեև նրա հետքերը վերապրուկային ձևով հարատևել են մինչև XXդ. սկզբները: Ըստ թաղման ծեսի՝ ածուխի կտորները և մոխրի մնացորդները համարվում էին կրակով չար ոգիներին վախեցնելու, նրանց փախցնելու, գերեզմանը նրանցից մաքրելու միջոց: Ինչպես նշեցինք, Սիսիանի և Արտաշատի դամբարաններում թաղման արարողությունը կատարվել է թաղման կրակի շուրջը, որն ուղեկցվել է զոհաբերություններով և հոգեհացով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում գոյություն են ունեցել զոհաբերության բոլոր ձևերը:[37] Սևանի ավազանի դամբարաններում դիակների հետ միասին հայտնաբերված եզան, ձիու և այլ կենդանիների վառված ոսկորները վկայում են, որ այստեղ առկա է թաղման ծիսակատարության ժամանակ կատարված արյունոտ զոհաբերության ամենահին ձևը, երբ կենդանուն մորթելուց հետո ննջեցյալի հետ միասին ամբողջությամբ այրում էին: Այդպիսի զոհաբերություն է նկարագրում նաև Հոմերոսը,[38] ըստ նրա՝ զոհաբերության ժամանակ նախապատվությունը տրվում էի ցուլերին և խոյերին: Հայաստանում ևս եզը, ձին ու խոյը եղել են զոհաբերության ամենահարգի կենդանիները:

Սիսիանի և Արտաշատի դամբարաններում ներկայացված է արյունոտ զոհաբերության ավելի ուշ ձևը, երբ կենդանուն մորթում էին զոհասեղանի վրա, միսը ուտում, իսկ մնացորդները կոտրատած ամանեղենի հետ զցում կիակի մեջ կամ գերեզմանի վրա:

Լուկիանոսը Հաբոնի ոերանով պատմում է թաղման արարողության ժամանակ մատուցված փառահեղ ճաշերի, դինու, մեղրի ու կաթի հեղման մասին, երբ մեռածների հոգիները, թռչելով չոբս կողմ, հագենում էին գինու, յուղի, ծխի հոտից:[39] Ծիսակատարության ժամանակ կատարվող զոհաբերությունները՝ հոգեհաց, հեղումներ և այլն, այնքան խոր արմատներ են ունեցել ժողովրդի մեջ, որ վերապրուկային ձևով շարունակվել են մինչև մեր օրերը:

Դիակիզումն, անշուշտ, տեղական հին ավանդույթների շարունակությունն է: Սակայն, և՛ դիակիզումը և՛ Հայաստանի հելլենիստական շրջանի ու մ.թ. I-IVդդ. թաղման մյուս ձևերն ու ծեսերը որոշ ընդհանրություններ ունեն մերձավորարևելյան և այլ հելլենիստական երկրների թաղման ծիսակարգի հետ: Այսպես, ընդհանուր էին կարասների և կավե սարկոֆագների մեջ թաղելու սովորությունը, հոգեհացի ժամանակ անոթների բեկորները և սննդի մնացորդները թաղման կրակի մեջ նետելը, ննջեցյալի բերանին կամ ձեռքում դրամ, կավե արձանիկները, թռչնի կամ քարե ձվեր[40] (Արտաշատ, Սիսիան, Դաբոյնք),[41] վեգեր դնելը և այլն:

Այդ ընդհանրություններն, ամենայն հավանականությամբ, արդյունք էին հաբևան հել-

---

[37] *В.С.Зеленчук*, Очерки молдавской народной обрядности, Кишинев, 1959, с. 38; *Г.К.Завойко*, Верования и обычаи великорусов Владимирской губернии, ЭО, 3-4, М., 1914, с. 97); *В.Хорузина*, К вопросу о почитании огня, ЭО, 3-4, 1906, М., 1907, с. 159).

[38] *Հոմերոս*, Ոդիսական (թարգմ. Ս.Կրկյաշարյանի), Եր. 1957, էջ 146: Նույնի՝ «Իլիական» (թարգմ. Հ.Հայմարդումյանի), Եր., 1955, էջ 146:

[39] *Lucian*, Charon, 22.

[40] Հունաստանում այն կապվում էր թաղման հետ, համարվում էր ամեն հնչի սկիզբը և ծառայում էր որպես մաքրագործող զոհաբերություն:

[41] *С.В.Тер-Аветисян*, Курганы Хасан Калы ("Известия Кавказского историко-археологического института"), Т. IV, Тифлис, 1926, с. 80.

լենիստական երկոների հետ ունեցած սերտ կապերի ու փոխազդեցությունների:

Կավե սարկոֆագը տեղավորված էր արևելյան պատի երկայնքով՝ ուղղակի սալահատակի վրա: Այն պատրաստված է խոշորահատիկ կարմիր կավից՝ լավ չթրծած թուխ միջուկով: մակերեսը պատած է դեղնավուն անգորով, փայլեցրած: Իրանը հարդարված է տարբեր հեռավորության վրա տեղադրված, պարանաձև երեք ուռուցիկ գոտիներով: Հորիզոնական կտրած պսասի եզրերը վնասված են, հավանարար դռան բացվածքի փոքր չափերի կամ էլ ծանր կափարիչով ծածկելու պատճառով:

Սարկոֆագներում թաղելու սովորույթը գալիս է ուրարտական ժամանակներից: Քարե սարկոֆագներ գտնվել են Արգիշտիխինիլիում, Ալթին-թեփեում:[42] Օշականում հայտնաբերված կավե սարկոֆագի (երկ.՝ 114սմ, լայն.՝ 56սմ, խոր.՝ 26սմ) մի կողմը լայն է, մյուսը՝ նեղ և ունի եռանկյունաձև տեսք: Այն բաժանված է եղել մասերի և դրվել է 27 կմախքների գլխի տակ: Թվագրվում է մ.թ.ա. VIդ. սկզբով:[43] Մ.թ.ա. VIդ. հետո՝ մինչև մ.թ.ա. I դ. կեսերը, կավե սարկոֆագներ մեզ հայտնի չեն, թեև հելլենիստական շրջանի տուֆե, հարթ ծածկով սարկոֆագներ գտնվել են Գեղադիրում:[44] Սիսիանի կավե սարկոֆագն իր ձևով առնչվում է Պերսեպոլիսի[45] և Նեմիուդ դաղի[46] հելլենիստական շրջանի կավե սարկոֆագներին: Այդպիսիք հանդիպում են Աշուրում:[47] Լայն տարածում են ունեցել և Արևելքում: Հայտնաբերվել են Դուրա-Էվրոպոսում.[48] Տիգրիսի ափի Սելևկիայում,[49] Քիշում,[50] Բաբելոնում,[51] Միջին Ասիայում,[52] Վրաստանում,[53] Ադրբեջանում[54] և այլուր:

---

[42] ***Б.Б.Пиотровский***, Искусство Урарту, Л., 1962, с. 24.

[43] ***С.Есаян, А.Калантарян,*** Позднеурартское погребение Ошаканского могильника, ИФЖ, 1976, № 3, с. 269; ***С.Есаян,*** Находки урартских изделий в Ошаканском могильнике, Древний Восток и мировая культура, М., 1981, с. 96, рис. 79, 6.

[44] ***Ժ.Դ.Խաչատուրի***, Հնագիտական հայտնաբերումներ Գեղադիրում, ԼՀԳ, 1966, № 1, էջ 83, 84, նկ. 1:

[45] ***E.F.Schidt***, Persepolis vol. II, Chicago, 1957, pl. 86-88; ***R.Ghirshman,*** Les fouilles de Suse 1946-1951, Revue des Arts, 1951, III, p. 188.

[46] ***David and Joan Oates***, Nimrud 1957, The Helienistic settlement, Iraq, vol. XX, p. 2, 1958, pl. XXVII..

[47] ***Andrae W. And Lenzen H.,*** Die Partherstadt Assur, Leipzig, 1933, Taf. 43, d, h, 45, a-f, 47, h, i.

[48] ***N.P.Toll,*** The Necropolis, the Excavations at Dura-Europos. Preliminary Report of the Ninth season of work 1935-1936, New Haven, London, 1946, pp. 95, fig. 3-5, pl. XXVII-XXVIII.

[49] ***L.Waterman***, Second Preliminary Report upon the Excavations at Tel Umar, Iraq, Ann Arbor, 1933, p. 48, pl. XVI_2; ***Antonio Invernizzi***, The Excavations of Tell Umayr, Mesopotamia, II, 1967, Tonno, fig. 11; ***M.C.Cavallero***, The Excavations at Choche " Mesopotamia", II, 1967, Tonno, p. 54, f, fig. 37-42.

[50] ***S.Langston***, Excavations at Kish, vol. I (1923-1924), Paris, 1924, p. 87-89, pl. XXIII, № 3.

[51] ***N.P.Toll,*** The Necropolis, p. 95; ***E.Strommenger***, Grabformen in Babylon, Bagdader mittellungen, Band 3, 1964, Berlin, Abb. 3, 4.

[52] ***Г.А.Пугаченкова***, Новое в изучении Дальверзин-Тепе (к истории бактрийско-кушанской городской культуры), СА, № 4, М., 1971, с. 201, рис. 14

[53] ***Н.В.Хоштария,*** Археологические исследования Уреки, Археологические находки в сел. Даблагоми и Агаяани, СА, V, 1940, с. 396 и сл.

[54] ***Ф.А.Османов,*** Бассейн рек Геокчай-Гирдманчай-Ахсучай в античное время (предварительное сообщение), СА, М., 1975, с. 194, рис. 6.

ԴԱՄԲԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՀՈՒՅՔ

Կահույքագործությունը փայտամշակության կարևոր ճյուղերից է: Հայտնի է տակավին վաղնջական ժամանակներից, երբ մարդը զգաց բազմոցի, բազկաթոռների, գահավորակների կարիքը: Կահույք սկսեցին պատրաստել ոչ միայն սովորական փայտատեսակներից, այլև ընտիր ու թանկարժեք փայտից, շատ հաճախ ընդելուզած թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղե բաղադրիչներով, զարդարված զանազան քանդակներով ու գեղակերտ այլ հորինվածքներ:

Թեև գրավոր աղբյուրները հարուստ են կահույքին վերաբերող տեղեկություններով, հատկապես արքայական շքեղաշուք բազմոցների, մահիճների, գեղակերտ գահերի, գահավորակների ու բազկաթոռների «բազմականների» կամ «բազմակալների», որոնց վրա դրվում էին ասեղնագործ «բարձեր»,[55] բայց դրանց պատկերատեսի և ձևերի մասին մենք քիչ բան գիտենք: Սակայն այս հարցում մեզ օգնության են գալիս հնագիտական նյութերը՝ իբրև բացառիկ վեայություններ տվյալ ժամանակի կահույքագործության, գեղագիտական ճաշակի և ոճական դրսևորումների ու ընբռնումների աղբյուր:

Սիսիանի իշխանական դամբարանում (մ.թ.ա. Ի դ.) պահպանված կահույքի մնացորդները բազմատեսակ են՝ պատրաստված բրոնզից, մաս առ մաս ձուլելու եղանակով, հղեված են և լավ փայլեցված: Այնուհետև առանձին մասերը հավաքել են երկաթե կենտրոնական ձողի վրա, իսկ նրանց մրջև մնացած դատարկ տարածությունը լցրել հատուկ շաղախով, երկաթե ձողերը միացնող ղեր կատարելուց բացի, ոտքերին հաղորդել են ամրություն: Ժամանակի ընթացքում երկաթե ձողերը ժանգոտվել են և պատճառ դարձել բրոնզե մասերի ճաքելուն և փչանալուն: Վերակազմությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն տարբեր տրամագծեր: Ընդհանուր առմամբ նկատելի է ոտքերի ստվերանկարների ասիմետրիկ նեղացում, որոնք կտրուկ անցումներով, երբեմն սահունորեն նեղանում են, երբեմն էլ ուռուցիկ ձևեր ընդունում՝ զանգակների, օղակների, հորիզոնական առևակոսների տեսքով՝ առաջացնելով լույսի ու ստվերի ներդաշնակ խաղ: Ոտքերն իրար են ամրացվել Ո-աձև բրոնզե լայնակի ձողերով՝

[55] *С.Т.Еремян*, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, Москва, 1953, № 3, с. 27-31.

հարդարված ակոսավոր զարդերով (աղ.III_{1-7}):

Երևանում հայտնաբերված կահույքի ոտքերի, ուռուցիկ մասերի տրամագծերը քիչ ավելին են և ունեն նման բարդ ձևավորում:

Սիսիանում հայտնաբերված կահույքի ոտքերի ուռուցիկ մասերը համեմատաբար փոքր տրամագծեր ունեն: Դրանք փայտե ձևավոր միջուկի վրա պատած բրոնզե թիթեղներ են, որոնց վրա պահպանված են մեխերի անցքերը: Մեգ են հասել նաև փայտե միջուկի առանձին հատվածներ պատրաստված հաստոցի վրա: Վերջիններս, ամենայն հավանականությամբ, բազմոցի (թախտի, մահիճի) և բազկաթոռի առջև դրվող ցածր աթոռակների ոտքեր են:

Կահույքի արտաքին տեսքի վերաբերյալ պատկերացում են տալիս Արտաշատում, Գառնիում և Արմավորում հայտնաբերված կավե արձանիկները, որոնց վրա պատկերված են նման և այլ տիպի բարդ ձևավոր ոտքերով թախտեր, բազկաթոռներ և ցածր աթոռակներ: Այդ տեսակետից առավել ուշագրավ են մոր ու մանկան կավե արձանիկները, որտեղ մայրը նստած է ձևավոր ոտքերով բարձր բազկաթոռին, ոտքերի տակ՝ ցածր աթոռակ՝ դարձյալ ձևավոր ոտքերով:[56] Որոշ օրինակների վրա աթոռակ կա նաև մոր ծախ կողքին կանգնած երեխայի ոտքերի տակ[57]:

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում բարձր թախտին նստած, մոր ու մանկան արձանիկը՝ կիսապառկած սաղմարդու, երրեմն էլ թախտի մոտ ցածր աթոռին կանգնած սրինգ նվագող երեխայի հետ:[58] Թախտերն ունեն ձևավոր հաստ ոտքեր, որոնք վերևից ներքև նույն լայնությունն ունեն: Հորիզոնական առևակոսներով ոտքերի կենտրոնական լայն գոտին հարդարված է ծաղկաշղթա զարդերով (աղ. II, $_3$):

Թախտին նստած կամ կիսապառկած սաղմարդու պատկերով Արտաշատում և Գառնիում[59] հայտնարերված կավե արձանիկների վրա թախտի ոտքերը ձևավոր են, բայց առանց կենտրոնական գոտու ծաղկաշղթայի: Այսպիսով, Արտաշատից, Սիսիանի իշխանական դամբարանից և Երևանից հայտնարերված կահույքի մնացորդները թախտի (աղ. $III_{,5}$), բազկաթոռի (աղ. $III_{,3}$), բարձր աթոռի (աղ. $III_{,6}$) և նրանց առջև դրվող ցածր աթոռի մանրամասներ են (աղ. $III_{4,7}$): Ակնհայտ է, որ կավե ածանիկների վրա պատկերված են աստվածներ և աստվածացված հերոսներ, հետևապես կասկածից վեր է, որ վերոհիշյալ հայտնագործությունները ևս վերնախավը կողմից օգտագործվող հանդիսավոր, շքեղ կահույքի մանրամասներ են:

Հ.Ա.Բեյքերը ուսումնասիրելով կահույքի ծագումն ու զարգացումը (մ.թ.ա. 3100-475թթ.) եգիպտական, հունական, մերձավորարևելյան կահույքի ձևերը, պատրաստման հնարները, գտնում է, որ բարդ ձևավոր ոտքերով կահույքը նախ ձևավորվել է մերձավորարևելյան

---

[56] ***Ժ.Դ.Խաչատրյան***, Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, ԼՀԳ, 1977, № 5,տախտ.I,1,3, 8: Նույնի՝ Անահիտ դիցուհու պաշտամունքն ու սատներառությունը Հայաստանում և նրա աղերսները հելլենիստական աշխարհի հետ, ՊԲՀ, 1985, № 1, աղ. I, 4,5:

[57] ***Ж.Д.Хачатрян***, Об античной коропластике Армении, ВДИ, 1979, № 3, табл. I, 3; ***Ժ.Դ.Խաչատրյան***, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977թթ. պեղումները), Երևան, 1981, տախտ. XXII:

[58] ***Ժ.Դ. Խաչատրյան***, Անահիտ դիցուհու պաշտամունքը Հայաստանում, նկ. 1.2, նույնի՝ Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, տախտ I, $_6$:

[59] ***Ժ.Դ.Խաչատրյան***, Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, տախտ. II, $_2$:

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

տարածաշրջաններում, կոնկրետ՝ Միջագետքում (XIII-XIIդդ.):[60] Մ.թ.ա. VIII դ. բարձր աթոռներ հայտնի են Ասորեստանում (Նինվե),[61] Պաղեստինում[62] աթոռ և թախտ՝ մ.թ.ա. VII-Vդդ. (Հորդանանի թանգարան): Կահույքագործության միջագետքյան-ասորեստանյան ավանդույթները շարունակում են գոյատևել և Աքեմենյանների օրոք: Պերսեպոլսի գանձարանի և սյունազարդ դահլիճի բարձրաքանդակներում Դարեհ Մեծը (I), Քսերքսես I-ը պատկերված են նման, բարդ ձևավոր գահին նստած, ոտքերը ցածր աթոռին դրած:[63]

Նույն պատկերը նկատելի է հունգարացի գիտնական Դ.Կեսի[64] աշխատության մեջ, որտեղ կահույքի ծագումն ու զարգացումը ավելի լայն հենքի վրա են քննարկվում: Ըստ Դ.Կեսի՝ ասորա-բաբելական կահույքը հարդարվել է բուսական և կենդանական, ինչպես նաև երկրաչափական, օղակաձև ոսկե և բրոնզե զարդապատկերներով: Պարսիկները, նվաճելով այդ երկրները, կահույքի ինքնուրույն ոճ չստեղծեցին, այլ շարունակեցին ասորա-բաբելականը, սակայն, ավելի շքեղ հարդարանքով:[65] Քսերքսեսից վերցրած հույների ավարի մասին խոսելիս Հերոդոտոսը (IX, 80, 82) նշում է նաև ոսկե, արծաթե, ոսկեջրած և արծաթաջրած մահիճների (թախտի) ու սեղանների մասին:

Լեյլակյան դրամների վրա պատկերված թիկնակով և առանց թիկնակի գահերը հելլենիստական շրջանում կահույքի այդ տեսակի ավանդույթների շարունակության վեայությունն են:[66] Անտիոքոս II-ի և Լեյլակրոս II-ի Շոշում կտրած դրամների դարձերեսին Զևսը նստած է նույնատիպ գահի վրա:[67] Ամաստրիսի՝ մ.թ.ա. 300-285թթ. թվագրվող քաղաքային դրամների դարձերեսին Զևսը կրկրն պատկերված է նմանատիպ գահի վրա:[68] Հելլենիստական շրջանի բարդ, ձևավոր կահույքի ոտքեբ և մասեր են հայտնաբերվել Այ-Խանումում:[69] Միրինայի կավե արձանիկների վրա պատկերված են նման ոտքերով գահավորակներ, մահիճներ և նրանց առջև դրված ցածր աթոռակներ:[70]

Բարդ, ձևավոր ոտքերով կահույքի աքեմենյան ավանդույթները շարունակվել են Պարթևստանում: Այդ են վեայում բրոնզե բարդ, ձևավոր (զուգահեռներով և օղակներով) ոտքերի մասերի հայտնաբերումը Մասջիդ-ի Սուլեյմանի մեծ տաճարից:[71] Բրոնզե ոսկեզօծ նմանատիպ ոտքերի մանրամասներ գտնվել են Շամիի դամբարանում[72] (մ.թ.ա. IIդ.), որը, ինչպես ենթադրվում է, պատկանել է շքեղ թախտի, իսկ հետագայում օգտագործվել իբրև թաղ-

---

[60] ***H.S.Baker***, Furniture in the ancient world. Origins, evolution 3100-475 B.C., Newyork, P. 216-217, fig 349.
[61] Նույն տեղում, էջ 224:
[62] Նույն տեղում. նկ. 361, 362:
[63] Նույն տեղում, էջ 226, նկ. 365: ***E.E.Schmidt***, Persepolis I, Chicago, 1953, pl. 77-78, 96-98, 104-111, 119-123; Памятники мирового искусства, М. 1968, рис. 291-293.
[64] ***Д.Кес***, Стили мебели, Будапешт, 1981, с. 5-31, табл. 5, 61-75.
[65] Նույն տեղում, էջ 30, 31:
[66] ***H.Seyrig***, Trésors du Levant Anciens et Nouveaux, II, Paris, 1973, pl. 9, 5, 1-5, 10, 5-18, 19, 21, 22 և այլուր:
[67] ***G.Rider***, Suse, sous les Seleucides et les Parthes. Les trouvaieles monétaires et l'histoire de la ville, Paris, 1965, pl. $II_{1,13.15}$.
[68] ***E. Babelon*** et ***Th. Reinach***, Recueil, général des monnales greques d'Asie Minuere, T.I, Pont et Paphlagonio, Paris, 1925, pl. $XVIII_{1,2.4-6}$.
[69] ***H.P.Frankfort***, Fouilles d'Ai Khanoum, III, Mémoires de la délégation Archéologique Française en Afganistan, T. XXVII, Paris, 1984, s. 107-116, pl. 9, pl. I_{4-24}.
[70] ***E.Pottier et S.Remach***, La nécropole de Myrina, Paris, Thonn, 1887, vol. 2, pl. XXXIII, XXXVI, XL.
[71] ***R.Ghirshman***, Terrasses Sacrées de Barci-é Néchandeh et Masjid-ı Soialman, Mission de Susiane Mémoires délégation archéologique Iran, T. XVI, vol. I, vol. II, Paris, 1976, voi. II, pl. 60 g., Mis. 250, 259, 288, 289.
[72] ***A. Stein***, Old Routes of Western Iran, London, 1940, p. 141-143, pl. II.

ման մահիճ: Փղոսկոե շքեղ կահույքի մանրամասներ հայտնաբերվել են պարթևական Նիսայում, որոնք, ըստ վերակազմության, եղել են գահավորակի և թախտի մասեր (Գ.Ա.Պուգաչենկովան գտնում է, որ դրանք պատկանել են Միհրդատ I–ին, մ.թ.ա. 171-138թթ.):[73]

Միհրդատ II-ի (մ.թ.ա 123-88թթ.) դրամների դարձերեսին Արշակը պատկերված է նման բարդ ձևավորում ունեցող ոտքերով գահավորակի նստած,[74] իսկ Հրահատ III-ից (մ.թ.ա. 70-57թթ.) սկսած՝ թագավորները մշտապես պատկերված են նման գահավորակների վրա:[75]

Հռոմեացիները ընդօրինակելով հունական կահույքի կերտվածքը, դրանք հարդարել են փայտե և մետաղե գեղակերպ (պլաստիկ) գարդատարրերով: Ի տարբերություն հունականի՝ հռոմեական կահույքի որոշակի տեսակներ՝ աթոռներ, մահճակալներ ունեն բրոնգե գանգակաձև, օղակաձև և այլ բարդ հնարանքի ոտքեր:[76] Ենթադրվում է, որ դրանք էտրուսկներին բնորոշ տեխնիկական հնարքների ազդեցության արդյունք են: Սակայն նկատի ունենալով դրանց պատրաստման ժամանակը և այն, որ այդօրինակ ոտքերով կահույքն Արևելքում վաղուց էր հայտնի, կարելի է մտածել, թե ոտքերի այդ հորինվածքը ընդօրինակվել է արևելյան կահույքից:

Լնտիկ շրջանում կահույք պատրաստվում էր փայտից, քարից, մետաղից և ոսկորից: Վերջիններս կրկնում էին փայտե կահույքի ձևերը: Քարե կահույքը հանդիսավոր բնույթ ուներ և տեղադրվում էր հասարակական շենքերում ու հարուստների տներում:[77] Հրողություն է, որ VII-IVդդ. Մերձավոր Արևելքի երկրներում,[78] Հունաստանում[79] և էտրուրիայում[80] կահույքի մեջ օգտագործել են մետաղե զարդեր, սակայն դրանց զանգվածային կիրառությունը լայն տարածում ստացավ միայն հելլենիստական շրջանում:[81] Իսկ ուշ հելլենիստական շրջանից սկսվում է նաև մետաղե կահույքի աղտադրությունը, որի վառ արտահայտությունն է Հայաստանում հայտնաբերված վերոհիշյալ կահույքը: Իրերների թագավորը՝ որպես նվեր, Պոմպեոսին ուղարկում է ոսկե մահիճ, սեղան և գահ:[82]

Քարե և մետաղե կահույքի կիրառությունը մեծացավ հատկապես Դելոսում[83] և Իտալիայում,[84] հանրապետության վերջում և վաղ կայսրության շրջանում: Բայց մ.թ. I դ. աստիճանարար նորառոճ դարձավ փայտե կահույքը:[85] Պլինիոսը թվարկում է մի շարք ծա-

---

[73] ***Г.А.Пугаченкова***, Трон Митридата I из парфянской Нисы, ВДИ, 1969, № 1, с. 161-171, рис. 1-9.
[74] Նույն տեղում, էջ 164,165, նկ. 6:
[75] Նույն տեղում, նկ. 6 в, г; ***Morgan*** De ***F.*** Manuel de numismatique Onentale, Pans, 1923-1936, նկ. 143, 3, 5-9, 12-14. էջ 141, նկ. 180-182, էջ 168-170:
[76] ***Д.Кес***, նշվ. աշխ., էջ 53-56, տախտ. 11, 140, 150, 152; ***P.Gusman***, Pompei, La Villa-les moeurs-les arts, Pans, 1899, s. 117; ***A.de Ridder***, Les bronzes antiques du Louvre, T.II, Paris, 1915, pl. 119, 3673; ***Richter G.*** Ancient Furniture. A history of Greek, Etrascan and Roman furniture, Oxford, 1926, fig. 299, 308-310.
[77] ***В.Д.Блаветский***, Мраморный трон из Пантикапея, Советская Археология, 1957, № 2, с. 249. ***Durm f.*** Die Baukunst der grelchen. Lelpzig, 1910, s. 463.
[78] ***H.S.Baker***, նշվ. աշխ., էջ 224, նկ. 361, 362, ***Д.Кес***, նշվ. աշխ., էջ 29-31:
[79] ***Д.Кес***, նշվ. աշխ., էջ 46; ***Н.И.Сокольский***, Деревообрабатывающее ремесло в античних государствах Северного Причерноморья, Москва, 1971, с. 87-89.
[80] ***Д.Кес***, նշվ. աշխ., էջ 50:
[81] ***Robinson S.***, Couches and beds of the Greeks, Etruscans and Romans, Chicago, 1905, p. 42, 50-51; ***Сокольский Н.И.***, նշվ. աշխ., էջ 87, 92, 112.
[82] ***Плутарх***, Помпей, XXXIV, Сравнительное жизнеописание, т. II, Москва, 1963 (пер. ***Г.А.Стратановского***).
[83] ***W.Deonna***, Le mohilier délien. "Dèlos", XVIII, Pans, 1938, s. 1-63; Plin., Nat. Hist., XXXIV$_{4, 9}$, XXXII, $_{144, 151}$.
[84] ***Н.И.Сокольский***, նշվ. աշխ., էջ 87; ***М.Е.Сергеенко***, Ремесленники древнего Рима, Л., 1968, с. 30.
[85] ***М. Е.Сергеенко***, նշվ. աշխ., էջ 30-33:

ոատեսակներ, որոնցից պատրաստում էին կահույք:[86] Այդ ժամանակ փայտամշակության տեխնիկան այնքան էր զարգացել, որ կահույք պատրաստում էին նաև ավելի էժանագին փայտից, ապա երեսպատում թանկարժեք փայտե նրբաշերտով: Ըստ Պլինիոսի՝ Հռոմում հյուսնը ուներ իր արհեստին անհրաժեշտ գրեթե բոլոր գործիքները:[87]

Հայաստանում ևս կահույքի գյուտերը նորություն չեն: Ամենահին հայտնագործությունները վերաբերում են ուշ բրոնզի շրջանին: Գտնվել են Լճաշենի դամբարաններում և համարվում են թաղման մահիճներ:[88] Դրանք ուղղանկյունաձև մեծ թախտեր են՝ կլոր ոտքերով և կաշեփոկե հյուսածո նստատեղերով (1.2-1.5մX0.6-0.8մ): Նմանատիպ թախտեր հայտնի են Ցամաքաբերդի, Արթիկի,[89] Ռեդկին-լագերի[90] դամբարաններից: Ռեդկին-լագերի մահճի ոտքերը կարճ են և քառակուսի (բարձր.՝ 20սմ, երկ.՝ 1.23սմ, լայն.՝ 60սմ): Մի փոքր այլ է Օշականի[91] վաղ երկաթի դամբարանում (№ 78) հայտնաբերված բազկաթոռի ձևը: Ցածր ոտքերը վերևում քառակուսի են, իսկ դեպի ներքև կլորանում և հաստանում են (55-77սմ): Նստատեղը ցանցաձև գործած կաշեփոկից է եղել: Ուշագրավ այս բազկաթոռը ևս համարվում է թաղման մահիճ:[92]

Ուրարտական կահույքը ներկայացնող նյութերն ավելի առատ են: Կարմիր բլուրում գտնվել են վառված փայտե աթոռների մնացորդներ: Դրանք վերին և կենտրոնական մասերի բրոնզե հատվածներն են:[93] Խոշոր գահի բրոնզե, ոսկեզօծ ոտքեր են հայտնաբերվել Թոփրախ-կալեում,[94] հարդարված կենդանակերպ և այլ տիպի շքեղ քանդակներով[95]: Ուրարտական բազկաթոռների (գահերի) վերաբերյալ մեզ պատկերացում են տալիս նաև Թոփրախ-կալեում և Կարմիր բլուրում գտնված ոսկե, արծաթե զարդարանքի առարկաները՝ մեդալիոններ և մահիկաձև կրծքազարդ, որոնց վրա պատկերված է գահին նստած աստվածուհի:[96] Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Սարգոնի պալատի պատերը հարդարող Մուսասիրի տաճարի թալանը ներկայացնող պատկերաշարը, որտեղ թալանված թանկարժեք իրերի շարքում հանդիպում է Սիսիանի գահը հիշեցնող շքեղակերտ մի գահավորակ, որի պատվանդանի ոտքերն աստիճանաբար բարակում են և ունեն հորիզոնական շրջանաձև օղակներ:[97]

Լևարգոն Երկրորդը Աշուր աստծուն ուղղած իր ձոն-նամակում, նկարագրելով Մուսասիրի տաճարից տարած թալան-ավարը (714թ.), հիշատակում է նաև փղոսկրե մահճակալի, արծաթ-ոսկեպատ մահիճի՝ ընդելուզված զանազան թանկարժեք քարերով, սեղանի և

---

[86] *Plin.*, Nat. Hist., XVI, 231-233.
[87] Նույն տեղում:
[88] *А.О.Мнацаканян*, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956г., СА, 1957, № 2, с. 147.
[89] *Т.С.Хачатрян*, Материальная культура древнего Армика, Ереван, 1963, с. 23.
[90] *F.Bayerns*, Untersuchuangen über die altesten, graber-und Schatzfunde in Kaukasten, Berlin, 1885, s. 13.
[91] *С.А.Есаян, А.А.Калантаряан*, Ошакан, I, Основные результаты раскопок, 1971-1983 гг., Ереван, 1988, с. 103-104, 123, табл. CXIX-CXX.
[92] Նույն տեղում, էջ 104, տտխտ. CXVIII:
[93] *Б.Б.Пиотровский*, Искусство Урарту VIII-VIвв. до н.э., Л., 1962, с. 54, рис. 25.
[94] Նույն տեղում, էջ 44:
[95] Նույն տեղում, էջ 45-54, նկ. 11-24:
[96] *Б.Б.Пиотровский*, Искусство Урарту, էջ 84-85, նկ. 48-50:
[97] *Б.Б.Пиотровский*, Искусство Урарту, նկ. 10:

սև փայտե բազկաթոռի մասին:[98]

Վաղ հայկական շրջանի կահույքի գյուտեր մեզ հայտնի չեն, սակայն այդ բացը լրացնում է Քսենոփոնը «Անաբասիս»-ում: Նա վկայում է, որ երբ հույները գրավեցին Տիրիբազոսի վոանը, նրա մեջ այլ իրերի թվում ավար վերցրեցին նաև «արծաթե ոտքերով մահիճներ ու ըմպանակներ»:[99] Նշված թախտերը, ամենայն հավանականությամբ, ունեցել են աքեմենյան կահույքի ձևերը և հարդարված են եղել նույն եղանակով:

Արտաշատից, Սիսիանից, Երևանից, Մրենից հայտնաբերված կահույքի մանրամասները և կավե արձանիկների կահույքի պատկերները պատկերացում են տալիս մ.թ.ա. IIդ.-մ.թ. IIդ. սիջև ընկած ժամանակաշրջանի շքեղ կահկարասու մի քանի տեսակների մասին: Թիկնակով գահ, ինչպես վերը տեսանք, ուրարտական շրջանում արդեն գործածական էր: Սիսիանի գահավորակը բազկաթոռ է, իսկ Երևանինը արմունկները հենելու հորիզոնական ծողեր չունի: Ինչ վերաբերում է կավե արձանիկներին պատկերված գահերին, դրանք բազկաթոռներ են, սակայն պատկերների ճակատային լինելու պատճառով մանրամասները հստակ չեն, ուստի դժվար է որևէ պարզաբանում տալ դրանց կառուցվածքի վերաբերյալ:

Մովսես Խորենացին Արտաշեսի թաղման արարողությունը նկարագրելիս նշում է, ***«Դագաղքն էին, ասէ, ոսկեղէնք, գահոյքն և անկողինքն բեհեզեայ և պատմուճանն մարմնովն՝ ոսկեթել. թոգ կապեալ ի գլուխն, և զէն ոսկւով առաջի եղեալ և զգահոյիւքն շուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն...»***.[100]

Ագաթանգեղոսը հիշատակում է, որ Տրդատը արքունիքից ոսկեջրած զահավորակներ է ուղարկում Հռիփսիմեին (IIIդ.): ***«եւ անդէն յարքունուստ վաղվաղակի ոսկիապատ գահաւորակս սպասաւորք հանդերձ հասուցանէին առ դուրս հնձանին, ուր էին վանք նոցա արտաքոյ քաղաքին»***:[101] Հայաստանի վերոհիշյալ գահերն իրենց ձևերով թերևս նման են սելևկյան դրամների վրա պատկերված գահերին, որոնք ավելի ցածր են և չունեն արմնկակալներ, ուստի դրանց առջև ոտքեր դնելու համար ցածր աթոռակ չի դրվել:[102]

Կարմիր բլուրի՝ աթոռի գյուտից պարզ երևում է, որ Սիսիանի տիպի բարձր աթոռները վաղուց էին գործածական: Այն իր անմիջական աղերսներն ունի Պոմպեյից և այլ վայրերից հայտնաբերված հռոմեական աթոռների ձևերի[103] հետ (մ.թ.ա. IIդ.-մ.թ. Iդ.):

Գահը, բազկաթոռը, եթե զերազանցապես հանդիսավոր-պաշտոնական ընդունելությունների համար էր, ապա թախտը (մահիճը) կահույքի ամենաանհրաժեշտ տեսակներից մեկն էր: Սիսիանի թախտը, ճիշտ է, բավականին շքեղ տեսք ունի, սակայն իր շքեղությամբ զիջում է կավե արձանիկների մի խմբի վրա պատկերված թախտին: Վերջինիս ոտքերի կենտրոնական գոտին հարդարված է ծաղկաշղթայաձև զարդով: Թախտը տարածված էր Հին Արևելքում (Եգիպտոսում), Հունաստանում, Իտալիայում և այլուր: Այն ոչ միայն շքեղ կահույք էր, այլև օգտագործվում էր հանգստանալու, քնելու, ճաշելու, խնջույքների ժամանակ (Ար-

---

[98] ***И.М.Дьяконов***, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2, с. 332.
[99] ***Անաբասիս*** (թարգմ. Ս.Կրկյաշարյանի), Երևան, 1970, IV, IV, 20, 21 (էջ 94):
[100] ***Մովսես Խորենացի***, II, 60:
[101] ***Ագաթանգեղայ***, Պատմութիւն Հայոց, Երևան, 1983, § 166:
[102] ***Г.А.Пугаченкова***, նշվ. աշխ., նկ. 6 б, в, г; 8.
[103] ***Д.Кес***, նշվ. աշխ., նկ. 140, 150:

տաշատի կավե արձանիկներից մեկի վրա, կիսապառկած տղամարդու ձեռքին կանթարոս կա): Հույները հանգուցյալին տանից մինչև գերեզման տանում էին մահճի կամ դիակառքի վրա, որով և թաղում էին:[104] Դատելով Լճաշենի, Արթիկի, Ցամաքաբերդի, Ռեդկին-լլագերի և Օշականի թաղման ձևերից կարելի է ենթադրել, թե այդ սովորությունը տարածված էր և Հայաստանում: Սիսիանի դամբարանում դիակիզումից հետո մոխիրը լցրել են կավե դագաղի մեջ, դրել թախտին: Թախտը Արևելքում օգտագործվում էր նաև պետական կարևոր որոշումներ ընդունելիս, կիսապառկած կամ թիկնած:[105]

Թանգ-ի Սարվակի մ.թ. 200թ. թվագրվող պարթևական բարձրաքանդակի վրա պատկերված է թագավորը՝ դափնեպսակը ձեռքին (իշխանության խորհրդանիշը), իր վասալների հետ, թախտին կիսապառկած:[106] Այս նույն սովորությունն ունեին և հույները ու հռոմեացիները:[107]

Թախտին կիսապառկած դիրքով մնալու համար, ինչպես վեայում[108] են գրավոր աղբյուրները ու Հայաստանում հայտնաբերված կավե արձանիկների պատկերները, եղել են ոատուկ ձևավորված շքեղ բարձեր:

Հայաստանում գահավորակի և թախտի առջև, ոտքերի տակ դրվող ցածր աթոռակներ օգտագործել են դեռևս ուրարտական շրջանում: Ակն հետագայում լայնորեն տարածվել է ոչ միայն հետուրարտական Հայաստանում, այլև ամիողջ անտիկ աշխարհում: Թեև ուրարտական շրջանից հետո՝ մինչև մ.թ.ա. IIդ., Հայաստանի անտիկ շրջանի կահույքն իրար հետ կապող փաստական նյութեր չունենք, սակայն կասկածից վեր է, որ նախորդ շրջանի ավանդույթները շարունակվել են և հետագա դարերում:

Կնշանակի՝ կահույքագործությունն ու նրա հետ կապված արհեստները գտնվել են գարգացման բարձր մակարդակի վրա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անտիկ դարաշրջանում ավանդական հնարները հարստանում էին հելլենիստական առաջավոր տեխնոլոգիաներով: Կահույքագործության մեջ լայնորեն կիրառվում է հաստոցը: Ակնհայտ է, որ Սիսիանի, Երևանի բարդ ձևավոր ոտքերով, Մրենի մահճի նման գլխատեղի երեսպատման քանդակազարդ հարդարատարր ունեցող և աղբյուրներում հիշատակվող արծաթե կամ ոսկեջրած կահույքի արտադրությանը, բացի հյուսնից, մասնակցում էին և մետաղագործության, հատկապես գեղաքվեստական մետաղի տաբբեր բնագավառներում հմտացած արհեստավորներ:

Աետաղագործությունը Հայաստանում երևան է եկել V-IV հագարամյակում և արդեն ուրարտական շրջանում հասել է գարգացման բարձր աստիճանի: Այդ են վկայում ինչպես ասորեստանյան տեքստերը, այնպես էլ հնագիտական նյութերը: Ուրարտական մետաղե արտադրանքը արտահանվել է դեպի հյուսիս՝ Մայկոպ (Կելերմես), Սիրիա, Միջագետք (Կարքեմիշ, Ասորեստան), Մարաստան, Իրան, էգեյան աշխարհ, Էտրուրիա:[109] Հայաստանն ուներ

---

[104] ***Н.И.Сокольский***, նշվ. աշխ., էջ 90:
[105] ***Г.А.Пугаченкова***, նշվ. աշխ., էջ 170:
[106] ***R.Ghirshman***, Iran Parthians and Sassanians, Thames and Hudson, 1962, p. 54, fig. 67.
[107] ***Д.Кес***, նշվ. աշխ., էջ 57:
[108] ***Փավստոսի Բիւզանդացւոյ***, Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, IV, 2:
[109] Այդ մասին տես՝ ***Б.Б.Пиотровский***, Ванское царство, с. 161-164, գրականությունը նույն տեղում:

երկաթի, պղնձի, ոսկու, կապարի, անագի և այլ հանքավայրեր:[110] Հումքի առկայությունը բագա է ստեղծել մետաղագործության հետագա զարգացման համար:

Արտաշատը՝ լինելով առևտրական և արհեստագործական խոշոր քաղաք, կահույքագործության հիմնական կենտրոններից մեկն էր: Այդ է փաստում կահույքի բարդ, ձևավոր ոտքեր ձուլելու գիպսե երկփեղկանի կաղապարի մի փեղկի գյուտը (պահպ. մասի երկ.՝ 25սմ, զանգակաձև ուռուցիկ մասի տրամագիծը՝ 10սմ) Արտաշատի VIII բլրի առաջին շինարարական շերտում (մ.թ.ա. 189/188թթ.-մ.թ. 58թ.):[111] Անտիկ շրջանի նման կաղապար ուրիշ վայրերից մեզ հայտնի չէ: Կաղապարի գյուտը խոսուն վկայությունն է Հայաստանում գեղարվեստական բրոնզ ձուլելու զարգացածության մասին: Հայաստանը մ.թ.ա. II-I դարերում ուներ արհեստաճյուղի այդ բնագավառում իր կողմից մշակված փորձ ու ավանդույթներ: Հայաստանի անտիկ շրջանի հուշարձաններում, մասնավորապես Արտաշատում[112] և Սիսիանում[113] հայտնաբերվել են գեղարվեստական մետաղի բարձրարվեստ շատ նմուշներ,[114] հալոցներ, տարբեր տիպի գարդեր ձուլելու կաղապարներ և այլն, որոնք գալիս են հաստատելու մեր պատմիչների վեպությունները: Ագաթանգեղոսը, խոսելով հեթանոսական աստվածների մասին, ասում է. ***«...ճարտար ձեռքերով սարքած արձաններ են, մի քանիսը փայտ են, ուրիշները՝ քարե, պղնձե, արծաթե կամ ոսկե»***:[115] Նա նշում է նաև դրանց պատրաստման եղանակները, որ ***«ոմանք կոփածո են, ուրիշները՝ կոռածո, ոմանք խարտոցած, ուրիշները՝ ձուլածո...»***:[116]

Սիսիանի գահավորակը, Արտաշատի կաղապարը և բոլոր մյուս գտածոները թույլ են տալիս ասելու, որ տեղացի կահույքագործ վարպետները ոչ միայն հմուտ և ճարտար էին իրենց արհեստում, այլև ունակ բավարարելու Հայոց արքունիքի և վերնախավի աճող նրբաճաշակ պահանջարկը:

ԱՇՏԱՆԱԿՆԵՐ

Լուսավորության միջոցներից առանձնակի ուշադրության արժանի գտածո աշտանակները երկուսն են: Մեկը երկաթից է, վատ պահպանված: Մեզ հասել է միայն առանցքի ծողը ոտքերին միացնող հատվածը: Մյուսը, որը համեմատաբար լավ է պահպանված, պատրաստված է երկաթե միջուկի վրա բրոնզե թիթեղ փաթաթելու և գոդելու

---

[110] Նույն տեղում, էջ 164:

[111] ***Ժ.Դ.Խաչատրյան, Ա.Գ.Կանեցյան***, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը. ԼՀԳ, 1974, № 9, էջ 76, 80:

[112] ***Բ.Ն.Առաքելյան***, Ակնարկներ, տախտ. XCIII, XCIV, XCVI, XCVIII, ***Б.Н.Аракелян***, Арташат I, Основные результаты раскопок 1970-1977гг., Ереван, 1982, табл. XLIII-XLV, ***Ժ.Դ.Խաչատրյան***, Հայաստանում հայտնաբերված արևմտահոմեական մետաղյա առարկաներ, ԼՀԳ, 1984, № 10, էջ 73:

[113] ***Ж.Д.Хачатрян***, Художественные изделия из серебра эллинистического времени, II Международный симпозиум по армянскому искусству, Ереван, 1978, с. 1-11. ***Ժ.Դ.Խաչատրյան***, Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները (մ.թ.ա. IIդ.-մ.թ. Iդ.). ԼՀԳ. 1978, № 5, էջ 46-56, տախտ. I, II, ***Zh. D.Khachatrian***, Silver bowls and basins of Armenia in the late Hellenistic Period, Iranica Antiqua, vol. XXIV, 1989, p. 297-308, pl. I-II.

[114] ***Ж.Д.Хачатрян***, Гарни, V, Античный некрополь (результаты раскопок 1956-1976гг.), Ереван, 1976, с. 105-106, рис. 41, табл. XXI.

[115] ***Ագաթանգեղոս***, § 71:

[116] Նույն տեղում, § 522:

հնարանքով: Երկաթե միջուկի քայքայումն էլ պատճառ է դարձել բրոնզե թիթեղի խաթարմանը: Ձողի վերին ծայրում ամիացված է բրոնզե ծանծաղ ափսե, որում և սյրվել է յուղը (ձեթը): Ներքևում ձողը հենվում է գեղեցիկ ձևավորած երեք կենդանաթաթ ոտքերի վրա: Այն հիմքում ունի եռանկյունի թիթեղ՝ սուր ծայրերով ուղղված դեպի ոտքերի կենտրոն: Թիթեղի տակից դեպի ոտքեր դուրս են գալիս փորագիր, աստիճանաբար վեր բարձրացող տերևազարդեր: Մինչև ծունկ հասնող ձողը կեղծ վոլյուտայի ձևով ետ ու առաջ է ծալվում: Կճղակը ուղիղ կենտրոնում ունի ակիս:

Հայաստանում աշտանակների գործածությունը հայտնի է տակավոն ուրարտական ժամանակներից: Ուրարտական գեղեցիկ ձևավորված աշտանակներ հայտնաբերվել են Թոփրախ-կալեում,[117] Կարմիր բլուրում[118] և այլ վայրերում: Դրանց վերին մասում զետեղված է թաս՝ հենված առյուծի կամ բաղի բերանից դուրս եկող ցլի կճղակներին: Հետուրարտական շրջանում հնագիտական գտածոներում աշտանակներ արդեն չեն հանդիպում, համենայն դեպս մեզ հայտնի չեն: Դրանք կրկին հանդես են գալիս մ.թ.ա. I դարում: Այդ շրջանի աշտանակներ հայտնաբերվել են նաև Արտաշատում, Գառնիում, Շիրակում, Կարսի մարզի Նախճավան[119] գյուղում: Վերջինս գտնվել է հողային աշխատանքների ժամանակ: Ի.Ա.Օրբելուն հաջողվել է տեսնել, չափագրել ու լուսանկարել գտածոն: Պահպանվել է միայն աշտանակի ոտքը: Այն ադեղնաձև իջնում և պարուրաձև պտտվելով միանում է գեղաքանդակ, ճկուն ծալված այծի ոտքին, որի կճղակը դրված է դատարկ խարսխի վրա: Պարուրաձև, վոլյուտան ծածկված է ականթի տերևով: Կ.Վ.Տրևերը Նախճավանի աշտանակի ոտքը համեմատում է Հերկուլանումից գտնված աշտանակների հետ, հանգամանալից քննարկում զարդաձևերի ոճական առանձնահատկությունները և հայտնում, որ Նախճավանի աշտանակի չէր կարող մ.թ. II դարի սկզբից ուշ լինել:[120] Թվագրում է Օգոստոսյան շրջանով: Նախճավանի աշտանակի մանրամասները առավել հաճախակի հանդիպողներից են հունա-հռոմեական[121] հուշարձաններում, ուստի շատ հավանական է, որ այն ունի իտալիկյան կամ էտրուսկյան ծագում: Վերջիններս կերտում էին գործնական և բարձրաճաշակ աշտանակներ՝ իրենց նշանակիությանը համապատասխան: Այդ և էտրուսկյան բրոնզե մյուս ստեղծագործությունները մեծ ազդեցություն ունեցան հռոմեական գեղարվեստական բրոնզի վրա:[122]

Գառնիի աշտանակը երկաթից է և պարզ կառուցվածք ունի: Գտնվել է մ.թ. II-III դդ.

---

[117] ***C.F.Lehmann-Haupt,*** Matēriałien zur alteren gesshichte Armeniens und Mesopotamiens "Abhandlungen der Königl. gesselschuft zu Göttingen Phil.-Hist. Kl", IX, 3, 1906, s. 93; Zeichn 63; ***Б.Б.Пиотровский,*** Искусство Урарту, А., 1962, с. 55, рис. 26, ***E.Akurgal,*** Urartälsche und Altiranische Runstrentren, Ankara, 1968, s. 34, 53, 54, 56, 70, Tab. XXXIII$_{a,b,c,d}$, XXXIV$_{,B}$.

[118] ***Б.Пиотровский,*** Кармир-блур I, Ереван, 1950, с. 69-70, рис. 42.

[119] ***К.В.Тревер,*** Бронзовая ножка канделябра из Нахчавана ("Известия российской академии истории материальной культуры"), Т. I, Петербург, 1941, с. 261-264; ***Ժ.Դ.Խաչատրյան,*** Հայաստանում հայտնաբերված արևմտահռոմեական մետաղյա առարկաներ, ԼՀԳ, 1984, № 10, էջ 73, աղ. I$_{2,4}$:

[120] ***К.В.Тревер,*** նշվ. աշխ., էջ 261-264.

[121] Նույն տեղում, էջ 263, 264; ***H.W.Wolters,*** Catalogue of the bronzes, greek, roman and etruscan in the British Museum, London, 1899, № 774; ***F.Magi,*** Bronzi aggeti van, La racolta Benedetto, Gugliemi nell museo gregonano etrusco, parte II, Citta del Vaticano, 1941, s. 50, 177, tav. 50.

[122] ***Д.Кес,*** Стили мебели, Будапешт, 1981, с. 50.

շերտում:[123] Այն պատրաստված է կոելու եղանակով: Քառանկյուն ծողի վերին մասն ավարտվում է թասով, իսկ ներքևինը նստած է ոտքերի միացման հատվածում արված եռանկյունաձև հիմքի վրա, որտեղից էլ տափակ ոտքերը, հորիզոնական և ապա ղեպի վեր ծգվելով, ծունկ են տալիս և կենդանու ոտքի նման իջնում, ավարտվում ոլորվող վերջավորություններով:

Գառնիի աշտանակն, անշուշտ, ներմուծված աշտանակների տեղական պարզ ընդօրինակությունն է:Գառնիի աշտանակի նման տափակ ոտքերով երկաթե և բրոնզե աշտանակներ հայտնաբերվել են նաև Մինգեչաուրի կարասային թաղումներում:[124] Մինգեչաուրի գտածոներից մեկն ունի ձևավոր ոտքեը, վերին մասում՝ թաս: Կ.Վ.Տրևերն իրավամբ դրանք համարում է ներմուծված աշտանակների տեղական ընդօրինակություն:[125]Բրոնզե և երկաթե աշտանակները լայն տարածում ունեին անտիկ աշխարհում: Հայտնի էին հատկապես իտալիկյան և էտրուսկյան աշտանակները, որոնք ունեին գեղեցիկ ձևավորում և հարդարված էին տարբեր տեսակի մանր գարդաքանդակներով:[126] Կտրվածքում կլոր ծողերը մեծ մասամբ կոում են առևակոսներ: Սիսիանի աշտանակի ոտքերը որոշակի նմանություն ունեն Պրիենայում[127] և Պոմպեյում[128] գտնված, ինչպես նաև Լուվրում[129] և Քեմբրիջում[130] պահպանվող նմուշների հետ, և այն կարելի է համարել ներմուծված իտալիկյան աշտանակների ընդօրինակություն: Թվագրում է մ.թ.ա. I դարով: «Ոսկիվ զարդարված աշտանակների...», «հրարորոք աշտանակներ»-ի մասին վկայում է Ագաթանգեղոսը (§ 159, 750):

---

[123] ***Բ.Ն.Առաքելյան***, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության (մ.թ.ա. VI-մ.թ. IIIդ.), Երևան, 1976, էջ 87, տախտ. CV_2:

[124] ***Г.И.Ионе***, Мингечаурские кувшинные погребения с оружием, Краткие сообщения института истории и материальной культуры, вып. 60, 1955, с. 59, рис. 23, 5; ***Т.И.Голубкина, М.М.Расулова***, О связах древних кавказских албанцев со странами древнего мира, "Ученые записки", Аз. Гос. университета, Серия истории и философии, 1967, № 3, с. 81, табл. $I_{1,2}$.

[125] ***К.В.Тревер***, Очерки по истории и культура Кавказской Албании (IVв. до н.э.-VIIв.н.э.), М.-Л., 1959, с. 148, рис. 6.

[126] ***F.Magi***, նշվ. աշխ., tav. 50, 2a, 3a, 4a և այլուր.

[127] ***Th. Wiegand und H.Schrader***, Priene, Berlin, Georg Reime, 1904, s. 383, alb. 484.

[128] ***A. Mau***, Pompeji in Leben und Kanst, Leipzig, 1908, fig. 217; ***E.Pernice***, Gefässe und Geräfeaus bronze, Die Hellenistiscbe Kunst in Pompeii, Band IV, Berlin und Leipzig, 1925, Verlag von Wolter de Gruyter, s. 47, 49, 54, 55, alb. 58, 59, 61, 70.

[129] ***A. de Ridder***, Les bronzes antiques du Louvre, Pans, 1915, Tome II, pl. 113, № 3173, pl. 112, № 31, 54, 3155, 3159, 3161, 3162.

[130] ***G.M.A.Richter***, Catalogue of Greek Antiquities Dumbarton Oaks collection, Cambndge, 1956, p. 43, pl. XVIc.

ՈՍԿԵ ՏԱՐԲԵՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՎ ԶԱՐԴԵՐ

Հելլենիստական Հայաստանում ոսկին, ոսկուց, արծաթից և բրոնզից պատրաստված, ոսկեջրած իրերն ու առարկաները շարունակում են մեծ դեր խաղալ մարդու կյանքում: Ոսկին ոչ միայն թանկարժեք մետաղ էր, այլև ինքնատիպ սրբություն: Դրա պատճառն, անշուշտ, ոսկու չժանգոտվելու և փայլը չկորցնելու հատկանիշն էր: Այն համադրվում էր արևի, իսկ արծաթը լուսնի հետ: Ոսկուն վերագրվում էր աստվածային ծագում: «Ոսկին ոչնչացնել հնարավոր չէ, քանի որ այն Զևսի զավակն է»:[131] Հայոց Անահիտ աստվածուհին կոչվում էր ոսկեծին, ոսկեմայր,[132] ոսկեհատ դիցուհի: Հաճախ ոսկու մոգական առանձնահատկությունը և կիրառական նշանակությունը համատեղվում էին: Այդպիսիք էին անտիկ շրջանի ոսկե բոլոր առարկաները ու զարդերը: Օրինակ, ոսկե կնիք մատանու կիրառական, գեղարվեստական և պաշտամունքային հատկանիշները սերտորեն կապված էին[133]: Ոսկոն մի շատ կարևոր հատկություն էլ ուներ: Այն իր փափկության և ճկունության շնորհիվ հեշտ էր ենթարկվում մշակման:

Հելլենիստական շրջանում. հատկապես մ.թ.ա. II-I դարերում, ձգտումը դեպի շքեղություն մեծ չափերի էր հասնում: Մարդիկ իրենց շրջապատում էին գեղարվեստական բարձրաճաշակ իրերով ու պերճանքի առարկաներով, նորոգում տների հարդարանքը: Խոհանոցային հասարակ մետաղե և կավե սպասքը փոխարինվում էր արծաթով[134] ու ոսկով: Հարստության չափանիշ էր դառնում արծաթե գեղարվեստական իրերի մեծ քանակի: Նշանավոր վարպետների գործերը շուկայում բարձր գին ունեին: Այդ են հավաստում Պլինիոս Ավագը[135] և մյուս անտիկ հեղինակները: Նման երևույթներ դիտարկվում են և Հայաստանում:

Հելլենիստական դարաշրջանի հուշարձանների պեղումները ցույց են տալիս, որ Հայաստանում հայտնաբերված ոսկե և արծաթե գեղարվեստական իրերը հիմնականում վերնախավային պատկանելիության են, հասու հարուստ ու միջին կարողության տեր քաղաքացիներին:

Հայաստանի անտիկ դարաշրջանի ոսկու, ոսկե իրերի ու պերճանքի առարկաների մասին մեզ որոշ տեղեկություններ են հաղորդում հունա-հռոմեական աղբյուրները և վաղմիջնադարյան հայ մատենագիրներր դեպքերի բերումով թագավորական և տաճարական գանձերի

---

[131] *О.Я. Неверов*, Античные перстни (VIв. до н.э. – IVв.), Ленинград, 1978, с. 4.
[132] *Ագաթանգեղոս*, § 809:
[133] Նույն տեղում:
[134] *М.Е. Сергеенко*, Ремесленники древнего Рима, с. 36.
[135] *Plin., Nat.* Hist., XXXIII, 47-51, 51-5 (*Gaius Plinws Secundus* (Major), Naturalis Histona, I-X, Cambndge- London, 1947-1963)

մասին խոսելիս: Այդ կցկտուր տեղեկությունները եզակի վկայություններ են անդարձ կորած գանձերի մասին: Համենայն դեպս մի բան պարզ է, որ ոսկին ու արծաթը ընդգրկել էին կենցաղի բոլոր բնագավառները: Վերնախավն օգտագործում էր ոսկեպատ գահավորակներ, զենքեր, ոսկե սպասք՝ գավաթներ, թասեր, պատառաքաղներ, գդալներ, պերճանքի առարկաներ, ոսկեթել, ոսկեհուռ դիպակներ, հանդերձանք, դեկորատիվ հարդարանք, մեծ ու փոքր արձաններ և այլն:

Անտիկ հուշարձանների՝ Գառնի, Սիսիան, Բենիամին, Աինգեչաուր, Արմավոր և Արտաշատ մայրաքաղաքների ու այլ հնավայրերի պեղումներով կամ պատահաբար հայտնաբերված զտածոները թեև եղածի չնչին մասն են, սակայն բավարար են ուսումնասիրելու Հայաստանում ոսկերչության զարգացման փուլերն ու ուղիները, որոշելու դրանց կարևորությունը արհեստագործության և կենցաղի բնագավառում: Տեղական և հելլենիստական երկրներից ներմուծված նյութերը հնարավորություն են ընձեռում լիարժեք պատկերացում կազմելու առևտրական–տնտեսական կապերի, մշակութային ընդհանրությունների ու տարբերությունների, բնակչության գեղագիտական ճաշակի և նորագույնի ընկալումների վերաբերյալ:

Գավազանների գլխիկներ

Սիսիանի ոսկե առարկաների խմբում առանձնանում են երկու կոսագնդաձև գարդեր, որոնք ընդունված է համարել գավազանների գլխազարդեր (որպես իշխանության նշանակ), (աղ. XV,1,2) կամ դաշույնների, ակոնակի դաստակո գլուխներ:[136] Իրարից տարբերվում են միայն չափերով ու կշռով (I, լայն.՝ 3.7սմ, բարձր.՝ 2.7սմ, 2, լայն.՝ 4սմ, բարձր.՝ 2.5սմ): Պատրաստված են կաղապարում ձուլելու եղանակով: Գավազանի գլուխների մակերեսին ռելիեֆ զծերով պատկերված են մի շարքի վրա դասավորված երևակայական երեք գալարուն գիշատիչներ (վիշապներ): Դնչերը հիշեցնում են առյուծի դունչ (խիստ ոճավորված), աչքերի մեջտեղից անցնում է բաժանման թումբ, որը՝ դեպի պոչը նեղանալով՝ ոլորվում է: Գլուխները հարդարված են ոսկու մեջ ագուցված, նուրբ կանաչավուն փիրուզներով, աչքերը կլոր են՝ ընդելուզված տոպազներով, իսկ թաթերի մատների (չոբսական) եղունգները ընդգծված են, սուր ծայրերը ներքև ուղղված փիրուզներով: Փիրուզի նուրբ կապտավուն երանգները ոսկու հետ տալիս են հաճելի ներդաշնակություն: Ենթադրվում է, որ Սիսիանի գավազանի գլուխները ներմուծված են արևելքից և ծագումնարանական սերտ կապեր ունեն սակո-սարմաթական ոճի արտադրանքի հետ[137]: Նման երևակայական գիշատիչներով հարդարված գլխակալներ մեզ հայտնի չեն, սակայն կիսագնդաձև նմանօրինակ զարդեր՝ այլ պատկերներով, գտնվել են Բակտրիայում՝ Թիլյա-թեփեում[138], որոնք վերագրվում են մ.թ.ա. I դ. վերջերին, այսինքն՝ ժամանակակից են Սիսիանի գավազանի գլուխներին: Դրանք պատրաստված են նույն եղանակով, ընդելուզված են փիրուզ քարերով: Սիսիանի գլխակալների գիշատիչները և

---

[136] *Բ.Ն. Առաքելյան*. Ակնարկներ, էջ 83, տախտ. XIX,1; ***J. Khatchatrian***, Arménie, Trésors de l'Arménie ancienne des origines au IVe siecle, Nantes. 1996, № 239 a, b.

[137] ***М.О. Зардарян***. Торгово-экономические связи Армении с эллинистическим миром в III – I вв. до н.э., Автореферат канд. дисс., Ереван, 1986, с. 10.

[138] ***V. Sarianidi***. Bactrian Gold, from the excavations of the Tillja-Tepe necropolis in North Afghanistan. Leningrad, 1985, Fig. 149-152

դրանց պատկերման կերպը բնորոշ են այսպես կոչված «Սիբիրյան կենդանական ոճին»: «Սիբիրյան կենդանական ոճի» ձևավորման կենտրոնի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան[139]: Սակայն գիտնականներից ոչ մեկը չի ժխտում հինարևելյան, միջագետքյան արվեստի ազդեցությունը դրանում:

Վերջին տասնամյակներում, հատկապես Թիլյա-թեփեի թագավորական թաղումներից հայտնաբերված նյութերը թույլ են տալիս ավելի հաստատակամորեն խոսել Բակտրիայի՝ որպես սկյութա-սարմաթական արվեստի ձևավորման կենտրոններից մեկի մասին: Առաջավորասիական գեղարվեստական այդ կենտրոնը, ըստ ճարտարապետական մոնումենտալ ձևերի մշակման, քարի փորագրության, գլիպտիկայի, գեղարվեստական որոնզի, քարի փորագրության և ոսկերչական արվեստի կենտրոն, ձևավորվել է դեռևս մ.թ.ա. II հազարամյակում, որի ակունքները գնում են դեպի Իրան, Հյուսիսային Միջագետք և Փոքր Ասիա: Թիլյա-թեփեի ոսկե գտածոների անչափ մեծ քանակությունը (20 հազար), դրանց ձևերի և հարդարանքի ոճական ընդհանրությունը վեսյում են Բակտրիայի կենտրոնական շրջանում ոսկերչական հզոր կենտրոնի առկայության մասին, որի արտադրանքը ոչ միայն արտահանվել է, այլև իր որոշիչ ազդեցությունն է ունեցել ողջ քոչվորական աշխարհի մշակույթի վրա[140]:

Կարելի է վստահորեն ասել, որ Սիսիանի գլխակալները ևս ներմուծվել են բակտրիական այդ կենտրոնից՝ Թիլյա-թեփեից, որի նյութերի հետ ունեն ոչ միայն ձևաբանական ու ոճական, այլև տեխնիկական ընդհանրություններ: Ինչպես գիտնականներն են նշում, այդ շրջանում սկյութա-սարմաթական ոսկերչական արտադրանքն աչքի էր ընկնում հատկապես փիրուզե[141] ներդիրների առատությամբ[142]: Սոգդիանա երկրի, Հունա-Բակտրիական թագավորության, Բակտրա (կամ Զարիասպ, որից հայկական Զարասպա) մայրաքաղաքով, քուշանական այս և Լուտերիկե կոչվող թագավորությունում իշխում էր Աշշակունիների դինաստիայի Կարենի- Պահլավի ճյուղը[143], որոնց հետ Հայաստանը կապված էր առևտրական ճանապարհներով: Միջին Ասիայի հետ ունեցած կապերը հավաստում են Արտաշատի V բլրում հայտնաբերված սոգդերի տաղագով գերիներ[144] պատկերող կնքադրոշմները, այսպես կոչված սկիզբ ու վերջ չունեցող, կյանքը խորհրդանշող[145] նշանակնեբով նույն բլրից գտնված պղնձե

---

[139] ***В.И. Сарианиди***, Храм и некрополь Тилля тепе, с.147.

[140] ***Е.Е. Кузьмина***, Бактрия и эллинистический мир в эпоху до Александра, Античность и античные традиции в культуре и искусстве народов Советского Востока, Москва, 1978, с. 198, 199; ***В.И. Сарианиди***, Храм и некрополь Тилля тепе, с. 138, 148-151.

[141] Արաբ և պարսիկ պատմիչները թագավորներին արժանի քարեր են համարում միայն երկուսը՝ ռուբինը և փիրուզը: Փիրուզ պարսկերեն նշանակում է հաղթանակ, հաղթող: Այն նույնիսկ Սասանյան թագավորներից մեկի անունն էր՝ Պերոզ: Ֆիրդուսին ասում է. "Пируза да будет победоносной судьба, այսինքն "У победоносного да будет победоносная судьба": Փիրուզայի ամենախոշոր հանքավայրը գտնվում է Իրանում՝ Նիշապուրից հյուսիս-արևմուտք՝ Սադաշ գյուղում և դրան հարող Միջին Ասիայի շրջաններում: Այն նմանեցվում է երկնքի հետ և տարածված է Մերձավոր Արևելքում: Ոչ մի քար այդպիսի մեծ դեր չի կատարել մարդկանց սնահավատության մեջ և բուժական իմաստով, ինչպես պարսկական փիրուզը: Փիրուզային վերագրվում են թալիսմանի խորհրդավոր հատկանիշներ, չար աչքից և քնած ժամանակ վախից պահպանող: Փիրուզ կա նաև Հայաստանում, բայց ոչ այդ որակի ու քանակի; ***А.Я. Борисов, В.Г. Луконин***, Сасанидские геммы, Ленинград, 1963, с. 9-10; ***Фирдоуси***, Шахнаме, т. VI (Перевод Ц.Б. Бану-Лахути и В.Г. Берзнего), Москва, 1989, с. 587, ссыл. 92.

[142] ***В.И. Сарианиди***, Храм и некрополь Тилля тепе, с. 152.

[143] ՀԺՊ, հ. II, Երևան, 1984, էջ 26, ծան. 22, 23:

[144] ***Ժ. Խաչատրյան***. Հայ-իրանական մշակութային կապերն ըստ Արտաշասի կնքադրոշմների: Դաս արվեստի հանրապետական 7-րդ գիտական կոնֆերանս: Զեկուցումների թեզեր, Երևան, 1995, էջ 28; ***Z'ores Khachatrian***, The archives of sealings found at Artashat(Artaxata). Bulletin de correspondance hellenique, Suppl. 29, 1996, p. 367, fig. $5_{a,b}$, pl. 73; Arménie, Trésors, fig. $210_{a,b}$

[145] ***В.И. Сарианиди***, Новый центр древневосточного искусства, Археология старого и нового света, Москва, 1982, с. 83-84, рис. 7,2.

քառանկյուն դրամը՝ ուշ պարթեական (II դ.) ընդօրինակություն, կտրված է Հնդկա-Քուշանական աշխարհում[146]:

Ուշ անտիկ Իրանում Սասանյանների իշխանության գլուխ անցնելուց հետո սերտանում են Հայաստանի ռազմաքաղաքական կապերը[147] քուշանների հետ, ինչպես «Խոսրով Մեծ»-Տրդատ II (216-256) և Վարդանանց պատերազմի ժամանակ:

Ապարանջաններ

Ապարանջան կամ առպնջան, զարդ դաստակե կամ բազկի, արմունկոց վար կամ վեր:[148] Լինելով պատվական զարդերից՝ ապարանջան կոել են հասարակության բոլոր խավերը, անկախ տարիքից և սեռից: Ժողովուրդն ինչպես մատանիներին, այնպես էլ ապարանջաններին տվել է հատուկ իմաստ: Այն իմաստավորել է դիրք, իշխանություն. «...առք կգործածէին ապարանջան ի նշան թագավորության»:

Առավել ուշագրավ ոսկե ապարանջաններն են: Դրանցից մեկը[149] պատրաստված է հետևյալ կերպ: Քառակուսի կտրվածքով բրոնզե լարը ոլորելուց հետո վոան հագցրել են ոսկե բարակ թիթեղից պատրաստված խողովակ, որին դրվագելու միջոցով տվել են բրոնզե միջուկը ոլորուն ձև:[150] Ապա ոլորուն ակոսների միջով՝ ոսկե հյուսված թելեր են փաթաթել: Ապարանջանի ծայրերն ավարտվում են առյուծագլուխներով (աղ. XV,3): Առյուծները ունեն ուռուցիկ արտահայտիչ աչքեր, կնճռոտ ճակատ, փարթամ բաշ՝ հարդարված փորագիր կետազարդերով, Առյուծագլուխները կենտրոնում միանում են օվալաձև ակնարանով, ընդելուգված կնքաքարով (գեմմա): Ակն եղել է շարժական և միաժամանակ ծառայել է որպես փական: Ամիացվել է առյուծների բերանին վահանակե վերևում գոդված օղակների միջոցով, սողնակների օգնությամբ: Վահանակը վերևում և ներքևում եզերված է ռելիեֆ հատիկաշարերով, Ակնարունը հարթ մասով զոդված է ապարանջանին:

Ապարանջանն իր հորինվածքով առայժմ եզակի է հայաստանյան գտածոներում, սակայն նման հնարքներով կերտված ոսկե և արծաթե ապարանջաններ, մանյակներ և այլ զարդեր մեծ քանակությամբ հայտնաբերվել են անտիկ աշխարհի տարբեր հուշարձաններում: Օրինակ՝ Կուլ Օբայում բացված սարկոֆագներից մեկում տղամարդու վզից կախված է եղել ոսկե առյուծագլուխ մանյակ,[151] իսկ բազկեն՝ զանգվածեղ ապարանջան՝ պատրաստված նույն եղանակով, ինչ նախորդը: Խնդրո առարկա ապարանջանների այս տեսակն, ամենայն հավանականությամբ, պատրաստվել է Բոսփորյան թագավորության ոսկերչական արհեստա-

---

[146] Դրամը որոշել է Ս. Զարդարյանը:
[147] ՀԺՊ, II, էջ 26, 27, 37, 38, 41:
[148] Բառարան սուրբ գրոց, էջ 45:
[149] *Բ.Ն.Առաքելյան*, Սկնարկներ..., էջ 83, գուն. տախտ. XIX$_2$: Այսաեղ ապարանջանը ներկայացված է թերի վիճակում, չկան օվալաձև մեդալիոնը և փոսիկներով փաթաթված բարակ լարը:
[150] Բարձր.՝ 7.4սմ, լայն.՝ 9.2սմ, քաշը՝ 93.4 գր.:
[151] *М.И. Артамонов*, Сокровища скифских курганов, Прага-Ленинград, 1966, табл. 205; *В.Г. Петренко*, Украшения Скифии VII-III вв. до н.э., Москва, 1978, Археология СССР, САИ Д 4-5, с. 46, табл. 35, 2, 2а.

նոցներից մեկում, հույն վարպետի կողմից:[152] Բացառվում է, որ նույն արհեստանոցի արտադրանք կարող է լինել Սոլոխի հայտնի մանյակը[153]: Նման կենդանագլուխ ոսկե, արծաթե ապարանջաններ և մանյակներ հանդիպում են նաև Թեմիր Գորայի[154] սկյութական դամբարանի նյութերում (մ.թ.ա. V-IVդդ.), Տովստովա դամբարանում[155] (Օրջոնիկրձե քաղաքի մոտ): Նմանատիպ տարբեր կենդանիների գլուխներով ավարտվող ապարանջաններ հայտնաբերվել են Փոքր Ասիայում,[156] Մակեդոնիայում,[157] Դուրա-Էվրոպոսում[158] (վերջինս ունի քարե կնիք), Կոբանում[159] և այլուր: Էրիտրիայից գտնված առյուծագլուխ ոսկե ապարանջանները (Մետրոպոլիտեն թանգարան) թվագրվում են մ.թ.ա. IVդ. վերջով-IIIդ. սկզբով[160] և այլն[161]: Վերոհիշյալ բոլոր ապարանջաններն ու մանյակները վերաբերում են մ.թ.ա. V-IIIդդ. սկզբներին: Ենթադրվում[162] է, որ Սիսիանի ապարանջանը ծագումնաբանական կապեր ունի սակրսարմաթական տարածաշրջանի արտադրանքի հետ: Սակայն Իրանից և նրանից արևելք ընկած շրջաններից նման տեխնիկայով ու հարդարանքով, ոսկուց և այլ մետաղներից պատրաստված ոչ մի ապարանջան, մանյակ կամ այլ զարդ մեզ հայտնի չէ: Հետևաբար, Սիսիանի ապարանջանն ունի փոքրասիական[163] ծագում: Չի բացառվում նաև, որ ապարանջանը կարող էր կերտված լինել Հայաստանում օտար ոսկերչի կողմից, ոռնագաղթված Տիգրան II-ի արշավանքների ժամանակ փոքրասիական, սիրիական հելլենիստական նշանավոր կենտրոններից, ոչ հույն պատվիրատուի համար: Ինչ վերաբերում է Սիսիանի գտածոյի ոճական որոշ տարբերություններին, ապա դրանք սոսկ ավելի ուշ ժամանակի պատկանելու արդյունք են:

Հայաստանում հայտնաբերվել են հելլենիստական շրջանի արծաթե և բրոնզե կենդանագլուխ, այդ թվում նաև առյուծագլուխ ծայրերով շատ ապարանջաններ:

Երկրորդ ապարանջանը ևս պատրաստված է նույն եղանակով:[164] Բրոնզե կտրվածքում կլոր լարի վրա փաթաթված է ոսկե բարակ թիթեղ (աղ.XV_4): Ապարանջանի կրդերը կենտրոնից դեպի ծայրեր աստիճանաբար լայնանում են և ավարտվում ուղղահայաց հարթ կտրվածքով (տբ. 1սմ): Այն հարդարված է ոճավորված առյուծագլուխներով, զարդարված բեկբեկվող մազափնջերով: Սոլուծագլուխները միմյանցից բաժանված են լայնակի անցնող ակրսավոր

---

[152] ***В.Г. Петренко***, ук. соч., с. 56, табл. 46, 1; ***E.D. Phillips***. The Royal Hardes. Nomad peoples of the steppes. London 1965. Fig. 67.68

[153] ***Н.А. Онайко***, Античный импорт в Приднестровье и Побужье в IV-I до н.э., САИ, ДI-27, Москва, 1970. с. 44, табл. XXXVIII, XLV, 475.

[154] ***Э.В. Яковенко***, Погребание богатой скифянки на Темир-Горе, Скифы и Сарматы, Киев, 1977, с. 141-142, рис. I.

[155] ***Л.К. Галанина***, Курджипский курган, Ленинград, 1980, с. 37, рис. 14.

[156] ***Б.М. Мозолевьский***, Товста могила, Киев, 1979,с. 73-93, рис. 57.

[157] Նույն տեղում, նկ. 15:

[158] ***P.V.C. Baur and M.I. Rostovtzeff***. The Excavations at Dura-Europos. Preliminary Report of second season of work, New Haven, 1931, pl. XLV,$_1$

[159] МАК, том VIII, таб. XXXIV,$_{12}$.

[160] ***H.Hoffman, P.F. Davidson***, Greek gold jewellery from the age of Alexander, The Brooklyn Museum, 1966, p. 167, 169, Fig. 61a, b.

[161] ***R. Higgms***, Jewellery from Classical lands. The British museum, 1965, pl. 8B, p. 20-21; ***Giovanni Becatti***, Oreficene Antiche, Dalle Minoiche alle Barbanche. Instituto Poligrafico dello stato. Roma, 1955, Tav. XCV,$_{388}$

[162] ***М.О. Зардарян***, ук. соч., с. 10.

[163] ***Z. Khachatrian***, Arménie. Tresors. fig. 231.

[164] Քաշը՝ 42.63 գրամ, բարձր.՝ 0.62սմ, լայն.՝ 0.72սմ:

զույգ գոտիներով:

Ապարանջանը ձևով և հարդարանքով աղերսվում է Գեղադիրում[165] և Գառնիում[166] գտնված բրոնզե ապարանջանների հետ, որոնք ունեն տեղական ծագում: Դատելով պատրաստման եղանակից՝ կարելի է ենթադրել, որ Սիսիանի ապարանջանը ևս փոքրասիացի հույն կամ էլ այդ տեխնիկային լավ ծանոթ տեղացի վարպետի գործ է: Թվագրվում է մ.թ.ա. I դ.:

Ականջող և մատանիներ

Պերճանքի հարգի զարդերից է ականջողը կամ զինդը: Գտածո ոսկե ականջողը[167] պատրաստված է շրջանաձև թիթեղից, բաց ծայրերով: Կենտրոնում՝ ակնարնում, սուր ծայրը դեպի ներքև ագուցած է նշաձև նռնաքար՝ շրջանակված հյուսածո զույգ թելազարդերով: Շրջանակի ծայրերը արտաքուստ ներքևում օղաձև ոլորած են: Ականջողը եզերված է ուռուցիկ կեղծ կիսագնդիկների շարով: Նման զնդիկներ՝ մի փոքր ավելի խոշոր, հարդարում են նռնաքարի աջ և ձախ կողերը (աղ.XVI,2):

Նման ականջող, բացի Սիսիանի գտածոյից, Հայաստանի տարածքից մեզ հայտնի չէ: Նշաձև ակնարնով զարդեը հանդիպում են նաև Ղրիմի սկյութական դամբարանների ոսկե իրերի[168] զարդարանքում, որոնք վերաբերում են մ.թ.ա. I և մ.թ. I դդ.: Խերսոնեպան (մ.թ.ա. IV-մ.թ. IV դդ.) պերճանքի ոսկե առարկաները ուսումնասիրող Ն.Վ.Պյատիշևան կարծում է, որ դրանք Խերսոնեսում չէին կարող պատրաստվել, քանի որ տեղում ոսկու հումք չկար, ընականաբար և ոսկերչությունն այդ մակարդակի զարգացած չէր: Դրանք կարող էին ներմուծվել Հարավային Կովկասից, Սիրիայից և Փոքր Ասիայից: Վերոհիշյալ տարածաշրջանները առևտրական սերտ կապեր ունեին Հյուսիսմերձսևծովյան երկրների հետ[169] և չի բացառվում, որ շատ զարդեր ունեն հայկական ծագում և պատրաստված են Վան, Արտաշատ, Տիգրանակերտ քաղաքներում,[170]: Ըստ Ն. Վ. Պյատիշևայի մ.թ.ա. I դ. երկու հզոր պետություն կար այդ տարածաշրջանում՝ Պարթևստանը և Հայաստանը: Տիգրան II-ի և Արտավազդ II-ի կողմից Սիրիայի և Փոքր Ասիայի հելլենիստական քաղաքներից Հայաստան բռնագաղթվեցին մեծ թվով արամեացի և հրեա արհեստավորներ, այդ թվում և ոսկերիչներ:

Հայաստանը հնագույն մետաղագործության կենտրոն էր: Այն, համաձայն գրավոր աղբյուրների վկայությունների և հնագիտական հայտնագործությունների, հարուստ էր մետաղահանքերով, այդ թվում նաև ոսկու և արծաթի հանքերով, որոնք շահագործվել են դեռևս III հազարամյակում:[171] Դրանք հայտնի էին և անտիկ դարաշրջանում ու միջին դարերում, մանա-

---

[165] *Ժ.Դ. Խաչատրյան*, Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում, ԼՀԳ, 1966, № 1, էջ 88-89, տախտ. I,1,2:
[166] *Ж.Д. Хачатрян*, Гарни V, с. 86-87, рис. 10,2.
[167] *Բ.Ն. Առաքելյան*, նշվ. աշխ., էջ 84; Arménie, Trésors, № 228, բարձ.՝ 2.4սմ, լայն.՝ 2.1սմ:
[168] *Ш.Г.Садыхзаде*, Классификация украшений Азербайджана эпохи поздней бронзы и раннего железа. МКА, т. VII, Баку, 1973, с. 82, таб. II, 9.
[169] *Н.В. Пятышева*, Ювелирные изделия Херсонеса, конец IVв. до н.э. – IVв. н.э., Москва, 1956, с. 24.
[170] Նույն տեղում, *М.И. Максимова*, Краткий путь через Черное море, МИА, вып.33, М., 1954.
[171] *К.А.Мкртчян, Э.В.Ханзадян*, О металлургии в горнорудном деле Древней Армении, История геологии, Ереван, 1970, с. 155-172, ՀԺՊ, I, էջ 51, 52:

վանդ Ճորոխի (Սպեր) և Տայքի (Փառանգիոն, Բոլոն-Բողբերդ) ոսկու հանքերը:[172] Ատրաբոնը,[173] խոսելով Հայաստանի հանքային և մյուս հարստությունների մասին, նշում է Սպերի ոսկու հանքերը:

Հայաստանում այլ արհեստների թվում զարգացած էր նաև ոսկերչությունը: Ոսկերչական արտադրանքը արտահանվում էր առևտրական ճանապարհներով, ավարի կամ նվիրատվության ձևով: Տվյալ դեպքում դա կարող էր տեղի ունենալ նշված երեք ճանապարհով կամ էլ այնտեղ կռիվ գնացած հայ զինվորի միջոցով: Միհրդատ VI-ի ժամանակ Փոքր Հայքը մտնում էր Պոնտոսի կազմի մեջ: Փոքր Հայքի հեծյալ նետաձիգների ջոկատը «զինված էր երկար վահաններով», որի հրամանատարը, ըստ Օլվիայում և Խերսոնեսում գտնված հունարեն արձանագրությունների, եղել է Զարեհի որդի Այխմոնը: Հյուսիսմերձսևծովյան երկրները նվաճելու ժամանակ ջոկատը սկզբում տեղակայվել է Խերսոնեսում, որտեղ զոհվել ու թաղվել է Այխմոնը, այնուհետև Օլվիայում[174]:

Հայաստանին հելլենիստական և ուշ անտիկ շրջանում նշանակալից դեր էր վերապահված Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրում: Հայաստանով էին անցնում միջազգային առևտրական տարանցիկ կարևոր ճանապարհներից մի քանիսը, ինչպես Չինաստանից, Միջին Անիայից և Հյուսիսային Հնդկաստանից դեպի Արևմուտք, այնպես էլ Հարավից, Միջագետքից, Սիրիայից դեպի հյուսիս՝ Սև ծովի և Ազովի ափեր, ուր և տեղական և դրսեկ ապրանքներն արտահանվում էին:[175] Հայաստանի քաղաքները հիմնականում տեղադրված էին առևտրական այդ բանուկ ճանապարհների վրա և իրենց արտադրանքով ակտիվ մասնակցություն ունեին այդ աշխույժ առևտրում: Բացառիկ էր հատկապես մայրաքաղաք Արտաշատի դերը, որը տարանցիկ առևտրի հանգուցային կենտրոն էր, պահեստավորման վայր: Արտաշատից դեպի Սև ծովի հարավային ափեր կապող ճանապարհն անցնում էր Սատաղով Կոմանա, Ամիսոս, Սինոպ,[176] որոնք ծովով կապվում էին Հյուսիսմերձսևծովյան շրջանների հետ: Մ.թ. I-ին դարից առևտրի ոլորտի մեջ ներգրավվեց նաև Տրապիզոնը, որն ստանում էր Հյուսիսմերձսևծովյան շրջաններից եկող պարենամթերքը[177] Ստրաբոնը,[178] նկարագրելով պոնտական մեծ քաղաք Կոմանան, նշում է, թե Հայաստանի առևտրականների համար այն նշանակալից առևտրական կենտրոն էր:

Հարավից, Պարսից ծոցից (Բաբելոնով), Միջին Ասիայից և Հյուսիսային Հնդկաստանից

---

[172] *Ղազարայ Փարպեցւոյ*, Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը Գ.Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982), III, 65; ***Ս.Տերմնյան***, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 91: Նույնի՝ Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակ (մ.թ.ա. 93-66թթ.), Երևան, 1979, ուսումնական քարտեզ: Նույնի՝ Մեծ Հայքի բազավորությունը IV դ. (298-385թթ.), Երևան, 1973:

[173] В Сисиритиде, Неподолеко от Кабалы нахаходятся залотые рудники, ***Strabo***, XI, XIV, 9.

[174] ***Ю.Г. Виноградов, В.И. Кадеев,*** Армянские лучники на службе Митридата Евпатора, Второй всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке, тезисы докладов, Ереван, 1984, с. 12-13; ***Ю.Г. Виноградов***, Политическая история Ольвийского полиса VII-Iвв. до н.э., Историко-эпигарфическое исследование, Москва, 1989, с. 253-255; ***Е.А. Молев***, Митридат Евпатор, Саратов, 1976, с. 50-53.

[175] ***Я. А. Манандян***, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен.- Ереван, 1954, с. 104.

[176] Նույն տեղում, էջ 105. ՀԺՊ, I, էջ 807; ***С.Т. Еремян***, Армения, армянское купечество и развитие торговли между Европой и Азией до XIXв., V Международный конгресс экономический истории, Ленинград, 10-14 августа 1970, Москва, 1970, с.2.

[177] ***Корнелий Тацит***, Анналы, XIII, 39(перевод А.С. Бобовича), Ленинград,1969; ***Г.А. Цветаева***, Боспор и Рим, Москва, 1979, с. 35; ***В.Ф. Гайдукович***, Боспорское царство, Москва-Ленинград, 1949, с. 332; ՀԺՊ, I, էջ 769.

[178] ***Strabo***, XII, III, 36.

եկող միջազգային առևտրի մյուս ճանապարհը էկբատանից Գանձակով, Նախիջևանով գալիս էր Արտաշատ, այնտեղից Վրաստանով՝ Փասիսով, Դիոսկուրիայով գնում դեպի Տանաիս, Ղրիմ և Հյուսիսմերձսևծովյան այլ շրջաններ: Հայաստանի տարբեր վայրերից՝ Արտաշատ, Դվին[179], Երևան և այլն, հայտնաբերվել են բոսփորյան դրամներ, այդ թվում նաև ոսկե[180]: Բոսփորյան թագավորության ասիական հատվածում՝ Ֆանագորիայի դամբարանադաշտում, 1950թ. գտնվել է Արտավազդ II-ի պատկերով բրոնզե մատանի[181], իսկ Մայկոպի մոտ գտնվող Դախովսկայա ավանում (ստանիցայում)՝ արծաթե թաս՝ «Բակուր թագավորից» հունարեն արձանագրությամբ[182](IIդ.), Բոսփորյան թագավորության տարածքում և Խերսոնեսում հայտնաբերված I-IIդդ. պատկանող, կադապարի մեջ փչելու եղանակով պատրաստված, առևակոսներով ապակե սրվակները և մեջտեղում եռանկյունաձև զարդագոտի ունեցող երկկանթանի անոթներն ակներևաբար, ներմուծվել են Հայաստանից[183]:

Սիսիանի դամբարանում գարդարանքի այլևայլ առարկաների թվում հայտնաբերվել են և ոսկե մատանիներ, թվով չորսը: Հայկական լեռնաշխարհում առաջին մատանիները հանդիպում են տակավեն ուշ բրոնզի դարաշրջանից:[184] Որպես ամենահարգի գարդ՝ կոել են հասարակության բոլոր շերտերը՝ ըստ դիրքի ու կարողության: Մատանին խորհրդանշել է բարձրաշխաբհիկ և հոգևոր իշխանություն: Ժողովրդական հավատալիքներում այն ունեցել է հմայական իմաստ, համարվել հուռութք: Մատանին ոչ միայն բարձր հոգևոր և աշխարհիկ իշխանության խորհրդանիշ էր, այլև ամուսնական միության նշանակ:[185] Մատանիներից առաջինը ժապավենաձև տափակ կողերով, օվալաձև ակնարնով նրբաճաշակ զարդ է, ակնարնում՝ նռնաքար (ալմանդին): Ակնարնի երկու կողմերում տեղադրված է մեկական օդ: Մատանու կողերը, ծայրերում բարակելով, կազմում են գալարներ, ապա հագնում օդերին: Մատանու ակնարունը շարժական է, անհարմար մատին կոելու: Քննարկվող առարկան իր շարժական ակնաբնով հիշեցնում է դասական շրջանի նմանօրինակ գարդերը, երբ կնքաքարը անցքի միջով անցնող լարով ամրացվում էր մատանուն: Մ.թ.ա. IV դ. մատանիների այս տեսակը դուրս եկավ գործածությունից և իր տեղը զիջեց օդի կենտրոնում ագուցված գանագան տիպի ակնաբնով մատանիներին, երբ ակնաքարը ամուր տեղադրվում էր ակնափոսում: Այս պարագայում ակնաբունն անշարժ էր, հարմար մատին կոելու:

Պլինիոս Ավագը վկայում է, որ մետաղե ակնաբնում ագուցված առաջին ակնաքարը

---

[179] ***Հ.Ա. Մուշեղյան***, Денежное обращение Двина по нумизматическим данным. Ереван, 1962, с. 108; ***А.Н. Зограф***, Распространение находок античных монет на Кавказе, Труды отдела нумизматики Гос. Эрмитажа, Т.I, Ленинград, 1945, с. 53, № 11.

[180] ***Հ. Սարգսյան***, Հայաստանից հայտնաբերված անտիկ դարաշրջանի ոսկյա դրամներ: ՀՀ 1991-1992թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզեր. Երևան, 1994, էջ 44:

[181] ***Օ. Նեսերով***, Бронзовый перстень из фанагории с портретом Армянского царя. ВОН, 1981, N3, с. 73-78, рис. 1,2.

[182] ***К.В. Тревер***, Очерки по истории культуры древней Армении, Москва-Ленинград, 1953, с. 242-245, рис. 35; ***Բ.Ն. Առաքելյան***, Ակնարկներ, էջ 85, 86, տախտ. XCIX-C.

[183] ***Н.П.Сорокина***, Стеклоделие античного мира первых веков н.э. (Основные проблемы), Диссертация на соискание ученой степени доктора исторических наук, Москва, 1988, с. 291-302.

[184] ***Ե.Լալայան***, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Եր., 1931, էջ 32, 33, 197, նկ.151:

[185] Ազգագրական հանդես, հ.բ, Թիֆլիս, 1897, էջ 21:

եղել է կովեասյան ժայռի մի բեկոր:[186] Սկզբնական շրջանում ակնաքարերը բավական խոշոր էին, զանգվածեղ ու ծանր: Սակայն դրանք աստիճանաբար փոքրացան և նրբացան:

Սիսիանի մատանու օրինակը ցույց է տալիս, որ շարժական ակնաբնով մատանիները ձևափոխված տեսքով գոյատևում են մինչև մ.թ.ա. I դարի վերջը: Ակնաբնով մատանիներ կրում են և այսօր:

Մնացած երեք մատանիներն ունեն տափակ, ժապավենաձև սնամեջ կողեր,[187] որոնք, քիչ վեր ձգվելով, ստանում են հատած կոնի տեսք, կենտրոնում՝ շրջանաձև ակնաբունը՝ կլորավուն ակնափոսով: Ակնաքարը ագուցելուց հետո ակնախորշի եզրերը ծալվել են դեպի ներս, քարը բնում ամուր պահելու նպատակով: Անցումը մատանու կողերից բուն շատ սահուն է: Մատանիների այս տարբերակը հանդիպում է մ.թ.ա. I դարի երկրորդ կեսում և տիրապետող է դառնում հետագա դարերում: Առավել լայն տարածում են ստանում մ.թ. առաջին դարերում, ընդհուպ IV-V դդ.: Մ.թ.ա. Iդ. երկրորդ կեսին են վերաբերում և Սիսիանի մատանիները: Ուշ անտիկ դարաշրջանում մատանիների ակնաբունն աստիճանաբար ցածրանում է, և մատանիների օղերը ավելի կլորավուն են դառնում: Փոքրանում են նաև քարերը: Ի տարբերություն հելլենիստական մատանիների ուռուցիկ զարդաքարերի՝ դրանք հարթ տեսք են ստանում[188]:

Կնշանակը սնամեջ մատանիների պատրաստման ձևն ավելի պարզ էր, և ոսկը ավելի քիչ էր ծախսվում: Հետևաբար այն ավելի էժան էր և մատչելի հասարակության լայն շերտերին: Այդ պատճառով էլ մատանիները լայնորեն տարածում ստացան անտիկ աշխարհում: Հայտնաբերվել են Հռենոսյան,[189] Հյուսիսմերձսևծովյան շրջաններում[190], Արայուխովյան կուրգանում[191] (մ.թ.ա. Iդ.), Տիրամբայում[192] (մ.թ.ա. I դ. վերջ- մ.թ. I դ.), Գորգիպիայում[193], Բակտրիայում[194] (Թիլյա-թեփեից) և այլ վայրերում:[195] Բրիտանական թանգարանի նմանօրինակ մատանիները Ֆ.Մարշալը համարում է հունա-հռոմեական:[196] Հռենոսում հայտնաբերված այդ-օրինակ մատանիների նկարագրությունից երևում է, որ զոդումը կատարված է խանձքով, գրեթե աննկատ,[197] ինչ վերաբերում է Սիսիանի մատանիներին դրանց կարերը հստակ նկատվում են և շատ անփույթ են զոդված: Դա լինում էր նաև զոդվող թիթեղների տարբեր հաստություններից, ուստի կարելի է ենթադրել, որ վերջիններս պատրասավել են տեղում:

---

[186] ***Օ.Յ. Նեվերով***, նշվ. աշխ., էջ 7:
[187] ՀՊԹ 2618/12, քաշը՝ 272, 278 գրամ, բարձր.՝ 23մմ, տրամ.՝ 16մմ և 11 մմ:
[188] ***Մ.Ի. Մաքսիմովա***, Արտյուխովսկիյ կուրգան, с.66; ***Մ.Ի. Մաքսիմովա***, Боспорская камнерезная мастерская, СА, 1957, № 4, с. 75-78:
[189] ***F. Henkel***. Die römischen Fingerringe des Rheinlandes. Berlin, 1913, Taf. 7-9.
[190] ***Օ.Յ. Նեվերով***, Металлические перстни и печати. Античные государства Северного Причерноморья, Археология СССР. Москва, 1984, с. 239-240, Табл. $CLXI_{10, 12-26, 28}$; $CLXVI_{16}$.
[191] ***Մ.Ի. Մաքսիմովա***, Արտյուխովսկիյ կուրգան, с. 66-67, рис. 19, Арт. 13, 15; ***Մ.Ի. Մաքսիմովա***. Боспорская камнерезная мастерская, с. 75-78, рис. 1.
[192] ***Ա.Կ. Կորովինա***, Тирамба(городище и некрополь), Итоги археологических работ экспедиции Государственного музея изобразительных искусств им. А.С. Пушкина за 1959, 1961-1963 и 1965 годы. "Сообщения гос. музея изобразительных искусств им. Пушкина, IV, Москва, 1968, с. 78, рис. 33.
[193] ***Ե.Մ. Ալեքսեևա***. Юго-восточная часть некрополя Горгиппии. Горгиппия. II, Материалы Анапской археологической экспедиции. Краснодар, 1982, с. 61, 72, рис. 34_{11}; 40_{3}.
[194] ***Վ.Ի. Սարիանիդի***. Афганистан: Сокровища безымянных царей, Москва, 1983, рис. 14, 15, 16.
[195] ***Ի.Տ. Կրուգլիկովա***. Некрополь поселения у дер. Семеновки, СА, 1969, N1, с. 115, рис. 5,15.
[196] ***T.H. Marshall***. Catalogue of the Finger Rings in the British Museum. London. 1907, p. XLVI, pl. XII_{385}; XIX_{725}
[197] ***F. Henkel***. նշվ. աշխ., էջ 277:

Մեդալիոններ

Սիսիանի դամբարանի գտածոներում առանձին խումբ են կազմում մեդալիոնները: Թեև սակավաթիվ են, բայց իրենց գեղագիտական արժանիքներով մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Մեդալիոնները հինգն են՝ պատրաստված արծաթե բարակ թիթեղից դրոշմելու եղանակով,[198] ոսկեջրած (տր.՝ 8.2սմ): Դրանցից մեկը կենտրոնում կրում է կանացի ռելիեֆ պատկեր: Կինը կրում է թեթև (շղարշե) զգեստ, կրծքի մասում եռանկյունաձև բացվածքով, առանց թևքերի: Կնոջ դիմագծերը խոշոր են, արտահայտիչ, լի վճռականությամբ: Գլխից ձախ պատկերված է արմավենու ճյուղ, իսկ դեպի աջ՝ նիզակրն ազուցված հանդերձանք-ավար: Լանրվածքը կրսալուսնաձև է, հարդարված առանձնակի հյուսկեն փնջերով, ընորոշ հելլենիստական շրջանում լայն տարածում գտած սանրվածքի հարդարման նորաձևությանը: Կնոջ գլխի երկու կրդմում թոչնաթևեր են՝ շրջանակված (կամ եզերված) ոլորուն զարդով: Զարդաձևերը թևթև են, անցումները՝ սահուն: Դեմքը կերտված է հունա-հռոմեական արվեստին բնորոշ համաչափությունների գեղեցիկ ներդաշնակությամբ:

Կարելի է ենթադրել, թե մեդալիոնի վրա պատկերված է մերձավորարևելյան աստվածուհու ընդհանրացված կերպարը, որն իր մեջ զուգորդում է Իզիդայի ու Դեմետրեի՝ փոքրասիական մայր աստվածուհու ընորոշ գծերը: Սիսիանի մեդալիոնի վրա, բացի Իզիդայի ու Դեմետրեի պատկերից, կարելի է նկատել այլ մանրամասներ, որոնք պահանջում են իրենց բացատրությունը[199]: Ըստ երևույթին այստեղ պատկերված է հունա-հռոմեական աստվածուհիներից մեկը՝ իրեն բնորոշ մի շարք ատրիբուտներով, միաձուլված տեղական որևէ աստվածուհու հետ: Սիսիանի մեդալիոնի պատկերն իր արտահայտչամիջոցներով հիշեցնում է հաղթանակի թևավոր աստվածուհուն՝ Վիկտորիային: Նրա մի կողմում պատկերված է ռազմական ավարը (տրոֆեյը), իսկ մյուսում՝ արմավենու ճյուղը[200] (աղ.XVII,5) :

Հելլենիստական շրջանի Ծոփքի (Արշամ, Քսերքսես) և Արտաշիսյան դինաստիայի հայ թագավորների դրամների դարձերեսներին պատկերված են Հերակլեսի, Աթենասի, Նիկեի ու Տիխեի կերպարները[201]: Միասնական տիպի պատկերագրությամբ հանդերձ՝ այդ դիմապատկերներում նկատելի է տարբերակների մեծ բազմազանություն: Նիկեն պատկերված է ինչպես միշտ դափնեպսակով, արմավենու ճյուղով: Ի դեպ Սիսիանի մեդալիոնի արմավենազարդ ճյուղը նման է Տիգրան II դրամների դարձեբեսին պատկերված Տիխեի ձեռքի արմավենու ճյուղին[202]:

Հետաքրքիր է, թե հայկական դիցարանի որ աստվածուհու հետ կարող էր համադրվել

---

[198] Տրամագիծը՝ 8սմ, բարձր.՝ 24մմ, քաշը՝ 27.55 գրամ; Բ.Ն. Առաքելյանը համարում է ձուլած. ***Բ.Ն. Առաքելյան***, Ակնարկներ, էջ 82, գուն. տախտ. XVII:

[199] ***Բ.Ն. Առաքելյան***, Ակնարկներ, էջ 81:

[200] ***Ժ.Դ. Խաչատրյան***, Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները, ԼՀԳ, 1978, թիվ 5, էջ 46, տախտ. I₁; ***Ж.Д. Хачатрян***. Художественные изделия из серебра эллинистического времени. II международный симпозиум по армянскому искусству. сб. докладов. Т.I, Ереван, 1978, с. 235, табл. 56,4; Arménie, Trésors, s. 232, № 233.

[201] ***Բ.Ն. Առաքելյան***, նշվ. աշխ., էջ 61,62; ***Խ.Ա. Մուշեղյան***, Հին Հայաստանի դրամային շրջանառության պատմությունից, ՊԲՀ, 1970, № 3, էջ 70, 71: ***Մ. Զարդարյան***, Արտաշատում կտրված դրամների մի տիպի մասին, ԼՀԳ, 1977, № 2, էջ 81-83, նկ. 1, 2:

[202] ***Բ.Ն. Առաքելյան***, նշվ. աշխ., էջ 66, տախտ. LXXIV-LXXV:

Սիսիանի մեդալիոնի Վիկտորիայի պատկերը: Վերջինս, բացառյալ թևերի, մնացած բոլոր ատրիբուտներով կարող էր նույնացվել Հայոց մայր աստվածուհու՝ Անահիտի հետ: Քանզի Անահիտը մարմնավորում էր ոչ միայն պտղաբերության, արգասավորության, ամենայն հայոց աշխարհի հովանավորի ու պահապանի, այլև ռազմի աստվածությանը վերագրվող հատկանիշներ: Թագավորներն Անահիտից խնդրում էին հաջողություն և զորություն՝ իրենց թշնամիներին հաղթելու, և իշխանություն՝ երկիրը կառավարելու համար:[203] Այս տեսակետից առավել ուշագրավ է Արմավիրի հունարեն արձանագրությունը, որում հետաքրքիր տեղեկություններ կան Անահիտի՝ ռազմի աստծու ունակություններ ունենալու վերաբերյալ: Այնտեղ ասված է. «Չկա որևէ տեղ ավելի ռազմատենչ աստվածուհի»[204]:

Հելլենիստական շրջանում արվեստի տարբեր բնագավառներում տարածված, հաղթական թագավորին աստվածուհու կողմից դափնեպսակով թագադրելու թեման առաջացել է Նիկեի պատկերագրությունից: Թագավորին փառաբանելու գաղափարն էր հետապնդում Նիկեի պատկերումը դափնեպսակով, պարթևական դրամների ու կնքադրոշմների վրա[205]:

Սասանյան քանդակների ձիսական տեսարաններում իշխանության ու հաղթանակի խորհրդանշան դափնեպսակը արքային է հանձնում Անահիտ աստվածուհին:[206] Այսպիսով, Անահիտ աստվածուհին կարող էր համադրվել ոչ միայն Արտեմիսի, այլև, որպես ռազմի աստվածուհի՝ Աթենասի ու Նիկեի հետ, իրև Արտաշատ մայրաքաղաքի հովանավորուհի՝ Տիխեի հետ[207]:

Սիսիանի մեդալիոնի կնոջ դիմագծերը՝ ճակատից իջնող ուղիղ քիթը, ծնոտը, լիքը այտերը և երկար վիզը հիշեցնում են «Տիխե-Խվանինդային» պատկերող հունա-բակտրիական մեդալիոնի (արծաթ, ոսկեջրած, մ.թ.ա. II դ.) աստվածուհուն: Վերջինս նույնպես ունի ուսերից դուրս եկող փոքր թևեր, փարթամ, զեղեցիկ հարդարված մազեր, ցածր գլխարկ, հարուստ ծալքերով զգեստ: Այստեղ ևս առկա է սինկրետիզացված մի կերպար, որտեղ ակնառու են և հելլենականը, և՛ արևելյանի արմատները[208]:

Նիկեի պատկերումը հայկական կիրառական արվեստում, մեդալիոններ, կնիքներ և պաշտոնական արվեստի հուշարձաններ, պատահական չպետք է համարել, մանավանդ մ.թ.ա. I դարում, երբ Հայաստանը ծաղկուն երկիր էր և գտնվում էր իր հզորության զագաթնակետին: Այսպիսով. Սիսիանի մեդալիոնի վրա մենք ունենք տիպիկ սինկրետիկ մի աստվածուհու պատկեր, որտեղ արևելյանը և հունա-հռոմեականը հանդես են գալիս համատեղ: Նիկեի այս պատկերը՝ ավարով, արմավենու ճյուղով և թրով, մեկ անգամ ևս հաղթական տիրակալին

---

[203] «Զոհերի» գիրք Հիմն Արդվիսուրա Անահիտային («Արդվիսուրա-Զոհ»), IX_{34}; X_{38}; $XIV_{53,54}$; XV_{58}; $XVII_{69,70}$; XVIII_{73}; Հին Արևելքի պոեզիա, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1982, էջ 363-369: ***Կ.Վ. Տալոր-Փաշայան***, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 62:

[204] ***К.В. Тревер***, Очерки по истории культуры древней Армении, с. 126; ***А.И. Болтунова***, Греческие надписи Армавира, ВДИ, № 1, 1946, с. 40.

[205] ***М.Е. Массон, Г.А. Пугаченкова***. Оттиски парфянских печатей из Нисы, ВДИ, 1954, N4, с. 165-166.

[206] ***H. Luschey***. Zur Datiering der sasanidische Kapitelle aus Bisitun und der Monuments von Tak-I-Bostan, "Archaeologischc Mitteilungen aus Iran", New Folge, Bd. I, B. 1966, s. 129-142, taf. 51-54.

[207] ***Ժ.Դ. Խաչատրյան***, Անահիտ դիցուհու պաշտամունքն ու պատկերագրությունը Հայաստանում և նրա աղերսները հելլենիստական աշխարհի հետ, ՊԲՀ, 1985, № 1, էջ 128-130, աղ. $I_{1-3,8}$:

[208] ***К.В. Тревер***, Памятники греко-бактрийского искусства. Москва-Ленинград, 1940, с. 64-67, табл. 13; ***Г.А. Пугаченкова, Л.И. Ремпель***. История искусств Узбекистана с древнейших времен до середины девятнадцатого века. Москва, 1965, с. 62, 63, илл. 40.

փառաբանելու գաղափարն է խորհրդանշում: Գաղափարական նույն միտվածությունն ունեն և մյուս մեդալիոնները:

Երկիորդ մեդալիոնը թերի է, պահպանվել է մարդու գլուխը, ենթադրվում էր իբրև տղամարդու (Մերկուրիոսի կամ ռազմիկի) գլխի բարձրաքանդակ:[209] Իրականում այն կնոջ աջծաթե կիսանդրի է և պատրաստված է նույն եղանակով, ինչ նախորդը: Քիթը սեղմված է մի կոդմի վրա: Խաթարված է, ոսկին մեծ մասամբ թափված է: Կնոջ դիմագծերի, վզի և մյուս մանրամասների մշակումը նույնն է, ինչ նախորդինը (աղ.XVII, 1):

Քանդակի մեջ առավել ուշագրավ է գլխարկն է, որը շքեղ բաշով սաղավարտ է: Կողմնային մասերում բաշը, արծվի թեերի նմանությամբ, փովում է փետրազարդերով և ամբողջացնում կերպարի ներկայացուցչական հորինվածքը: Կերպարի բնութագրով, ու մանիամասներով դիմաքանդակի վերարտադրում է Աթենաս Պալասին[210]:

Ալ. Մակեդոնացու կոդմից Արևելքը նվաճելուց հետո, հունական շատ աստվածություններ կորցրեցին իրենց նախնական, հունական կերպարանքը և համադրվելով տեղական համապատասխան աստվածությունների հետ, անշուշտ պահպանելով իրենց կերպարին յուրահատուկ որոշ ատրիրուտներ հելլենիստական շրջանում սկոեցին պատկերվել տեդական հագուստներով, զենքերով և այլ խառը ձևերով:

Աթենասը ևս կորցնում է հունա-հոոմեական պատկերագրության կողնից մշակված դիմանկարի ավանդական պատկերաձևերը, գեդեցիկ, հպարտ կեցվածքը ձեռք բերում նոր հանդերձանք դրանով իսկ շեշտելով նիա էթնիկական այլ խմբի պաականելը:[211] Սակայն Սիսիանի մեդալիոնի վրա Աթենասը պատկերված է հունական դիմագծերով և կոում է հոնիական սաղավարտ:

Հայտնի է, որ Աթենասը հելլենիստական շրջանում ձեռք ոերեց նոր հատկանիշներ, ուստի նրա պատկերն Արևելքում, հատկապես մ.թ.ա. I դարից, ամենատարածվածներից մեկն էր: Հելլենիստական երկոների մայրգերի ու քաղաքների կառավարիչներն Աթենասին ընտրում էին իբրև իրենց հովանավորի, հիմնականում որպես ռազմաստվածուհու, ուսզմական հաջողություններ շնորհողի[212]:

Մովսես Խորենացին[213] Տիգրան II-ի կոդմից Հայաստան բերված հունական արձանների թվում հիշատակում է և Աթենասին:

Աթենասը Հայաստանում նույնացվում է Արամազդի դուստր Նանեի հետ, և արձանը կանգնեցվում է Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Թիլ ավանում, որտեղ գտնվում էր Նանեին նվորված մեհյանը: Նանեի ֆունկցիաները, մեգ հասած կցկտուր տեդեկությունների

---

[209] ***Բ.Ն. Առաքելյան***, նշվ. աշխ., էջ 33, գուս. տախտ. XVIII,1:

[210] ***Ժ.Դ. Խաչատրյան***, Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները, էջ 48, տախտ. I2, ***Ж.Д. Хачатрян***, Художественные изделия из серебра, с. 235-236, табл. 56, վերևի աջ շարքից առաջինը:

[211] ***Г.А. Пугаченкова***, Скульптура Халчаяна, Москва, 1971, с. 103, рис. 87,88,90; ***Г.А. Пугаченкова***, Халчаянская Афина, СА, 1963, № 2, с. 158, 160, 164, 166; ***М.Е. Массон, Г.А. Пугаченкова***, Парфянские ритоны Нисы. Альбом. Москва, 1956, табл. II, VI, XVI, XVIII и др. местах.

[212] ***Г.А. Пугаченкова***, Халчаянская Афина, с. 158.

[213] ***Մովսես Խորենացի***, II, ԺԸ:

պատճառով, դեռևս լիովին պարզված չեն[214]: Սակայն. եթե նա նույնացվել է Աթենասի հետ, պետք է որ ունեցած լինի նաև ռազմի աստծուն բնորոշ գործողություններ, որոնք հետագայում անցան Անահիտին: Քանի որ վերջինս ուներ նաև հովանավորի, ռազմական հաջողություններ բաշխողին հատկանիշներ: Դժբախտաբար մեզ հայտնի չէ, թե ինչպիսին է եղել Հայաստան բերված Աթենասի քանդակը:

Անահիտը Իրանում դեռևս Աքեմենյանների օրոք համադրվել էր նաև «թագուհի Աթենասի» հետ, բայց հայտնի չէ, թե Անահիտն այս դեպքում ինչպես է պատկերվել: Բարդ ի Նեշանդե-ում գտնվել է պարթևական շրջանի մի խոյակ, որի վրա պատկերված են Անահիտը և Միհրը[215]: Անահիտը նստած է՝ մի ձեռքում Աթենասից ժառանգած նիզակը, մյուսում թասը՝ ջրի աստվածուհու խորհրդանշանը: Աստվածուհին այդպես է պատկերված նույն տեղից հայտնաբերված թիթեղի վրա: Ահա թե ինչու է Պլուտարքոսը[216] Անահիտին համարում ռազմատենչ աստվածուհի՝ հավասարեցնելով Աթենասին: Այս կերպարն ըստ երևույթին ձևավորվել է ռազմատենչ Աթենասի անտիկ պատկերագրության ազդեցությամբ, որին իրանցիները ծանոթացան միայն հելլենիստական շրջանում: Անահիտը, սակայն, սասանյան շրջանում զրկվում է նիզակից[217]:

Աթենասը հունա-հռոմեական արվեստի բազմաթիվ ստեղծագործություններում մեզ հայտնի է կորնթական, բարձր, խիստ ուռուցիկ, շեշտված անցումով և հոնիական բարձր փետրազարդ սաղավարտներով: Արևելքում Աթենասը հանդես է գալիս տարատեսակ սաղավարտներով՝ լայնեզր, և այլն, որոնք պատկերված են Միջին Ասիայում[218](մ.թ.ա. II-Ադ.) և պարթևական պետության արևմտյան մայրաքաղաքի՝ Հաթրայի[219] մ.թ. I-IIդդ. քանդակներում[220]:

Սիսիանի մեդալիոնի պատկերաքանդակում աստվածուհու սաղավարտն ունի ճիշտ նույն հորինվածքը, ինչ Կերչի մոտ գտնված և մ.թ.ա. III դ. թվագրվող ոսկե մատանու ակնաքարը (սիրիական նռնաքար)՝ զարդարող Աթենաս աստվածուհու սաղավարտը,[221] միայն այն տարբերությամբ, որ այստեղ մանրամասները ավելի հստակ են և լավ մշակված:

Վերջապես Սիսիանի մեդալիոնն աստվածուհու իր կերպավորմամբ հիշեցնում է Ապոլոնիայից[222] հայտնի շքազարդը՝ Աթենասի պատկերաքանդակով:

---

[214]Ենթադրվում է, որ ավեստայի Նանա աստվածուհին նույն Անահիտն է; *Г.А. Пугаченкова*, Скульптура Халчаяна, с. 92:

[215] *R. Ghirshman*. Terrasses sacre'es de Bard-e Nechandch et Masjid-I solaiman. Paris, 1975. vol. I, p. 45, 46, 192, 193, vol. II, pl. XXIV$_2$.

[216] *Плутарх*. Артаксеркс, III, Сравнительные жизнеописания. т. III, (пер. С.П.Маркиш). Москва, 1964.

[217] *Р.М. Гиршман*. Религия Ирана от VIII века до н.э. до периода Ислама. В сб. "Культура Востока", Л., 1978, с.71.

[218] *Г.А. Пугаченкова*, Халчаянская Афина, с. 161; *М.Е. Массон*. Новые археологические данные по истории рабовладельческого общества на территории Туркменистана, ВДИ, 1953, № 3, с. 157, рис. 17; *R.Ghirshman*. Iran from the Early East times to the Islamic Conquest. Baltimore. 1954, с. 236, рис. 28а.

[219] *D. Homes*. La vie a Hatra a'la lurmère de la sculpture. "Sumer". XVI, 1960. N1-2, Tabl. I,$_1$.

[220] *E. Will*. La Syrie Romame entre l'occident Gréco-Romam et l'orient parthe, Le rayonnement des civilisations Greque et romaine sur les cultures periphériques, Paris, 1965, s. 515, pl. 128.$_4$ "Congres mternational d'archcologie classique (Paris, 1963)".

[221] *М.И. Максимова*. Резные камни, с. 442, табл. I.$_5$; *Г. Соколов*. Античное Причерноморье, Ленинград, 1973, № 39.

[222] *И. Венедиков, Т. Герасимов, Ц. Дремсизова, Т. Иванов, Я. Младенова, В. Валков*. Аполония. София, 1963, табл. 158, № 907.

Հարկավ չի բացառվում, որ քննարկվող շքազարդ-պատվանշանը պատրաստվել է կամ դրսեկ (Տիգրան II-ի կողմից բռնագաղթված), կամ էլ հելլենիստական հարդարվեստին լավատեղյակ տեղացի որևէ շնորհալի վարպետի կողմից, հաղորդակ ժամանակի նորամուծություններին ու գարդանկարային պատկերատեսին:

Մեղալիոնի ողջ պատկերադաշտը հարդարում է խոշոր արծվապատկերը,[223] թերևս մեկ անգամ ևս նրա բացառիկությունը մատնանշելու ցանկությամբ, որովհետև պատկերը մասամբ դուրս է եկել այն գոտևորող շրջանակից:[224] Թռչունը պատկերված է հաղթական կեցվածքով, մի դեպքում խորհուրդ կանգնած գետնած կենդանի գագանի փորի վրա (աղ. XVII,3 4), մյուս դեպքում՝ շանթահար որոտների ու կայծակների հենքում (աղ. XVII,2): Արծվապատկերը խիստ բնական է՝ փորագրված ամենայն մանրամասնությամբ: Զարդատարրերը հստակ են ու արտահայտիչ, հատկապես դիմային հատվածում:

Քանդակի նման շեշտվածությունն ակներևաբար բովանդակում է արծվո, որպես խորհրդանիշ ընդգծելու դիտավորություն, որովհետև նրան զոհ դարձած կենդանին անհամեմատ ավելի ընդհանուր մշակում ունի: Հիանալի վերարտադրված են թռչնի համաչափությունները և ընդհանուր ծավալը:

Հորինվածքային տեսակետից մեդալիոնների ձախ կամ աջ անկյունները ծանրաբեռնված են, իսկ հակառակ երեսներն ավելի ազատ են թողնված, հաղթանակող արծվի կերպարն առավել ընդգծելու նպատակով: Դրան նպաստում է նաև արծվի գլխի դիրքը՝ հեռուն ուղղված հայացքով: Արծիվներից մեկի գլուխը թեքված է դեպի ձախ, մյուսինը՝ դեպի աջ, իսկ երրորդինը, ըստ պահպանված հետքերի, կարելի է ենթադրել դեպի ձախ: Մեդալիոնները շրջանակված են շքեղ զոտիներով, որոնցից երկուսը՝ ոճավորված կենդանու վրա կանգնածները, կազմված են բաղեդից և դափնեպսակից:

Քննարկվող մեդալիոնների ուղղակի զուգահեռներ մեզ հայտնի չեն, թեև արծվազարդ անոթներ, մեդալիոններ, ճարմանդներ հաճախ են հանդիպում:

Գիտական գրականության մեջ ընդունված է հաղթանակող արծվի պատկերազրությունը (կանգնած, գետնած կենդանու մեջքին, փորի վրա կամ էլ ամուր պահած խոշոր ճանկերում) համարել հինարևելյան ծագման, որն ավանդարար փոխանցվել է մինչև ուշ միջնադար: Արծիվը Արևելքում ս՛ոիեզերքի խորհրդանշանն էր՝ արև աստվածության նշանակը երկրի վրա: Հաթրայի տաճարի վրա պատկերված է արծիվ, մյուսում՝ արևի աստվածը: Բրոնզե արծվաքանդակներ գտնվել են Կապադովեիայում և այլ վայրերում, կապված դարձյալ արևի պաշտամունքի հետ:

Հին Արևելքում արծիվը համարվում էր թագավորական թռչուն, թերևս այդ էր պատճառը, որ թագավորական ապարոշները (զլխանոց), հազուստները, կառքերը կրում էին նրա պատկերը: Թևերը լայն բացած, տարածուն արծվապատկերը Աքեմենյանների զինանշանն էր: Քսենոփոնը վկայում է («Կյուրոպեդիա»), որ Կյուրոսի զինանշանը թեերը լայն տարածած ոսկե արծվաքանդակ էր, ամրացրած երկարապոչ նիզակի վրա: Իսկ «Անարասիս»-ում գրում է,

---

[223] Տրամ.՝ 8.2սմ, բարձր.՝ 1.3սմ, քաշը՝ 26.17 գրամ; ***Բ.Ն. Առաքելյան***, Ակնարկներ, էջ 83, գուն. տախտ. XVIII,2:
[224] ***Ժ.Դ. Խաչատրյան***, Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները, տախտ. I,3-5; Arménie, Trésors, s. 232, № 234:

թե «... այնտեղ տեսնում են արքայական զինանշանը՝ ոսկե (ձույլ) արծիվ հագած նիզակի կոթառին»: Ինչպես վկայում է Կուրտիուս Ռուֆուսը, արծիվ զինանշանը Աքեմենյանները պահպանեցին մինչև վերջ:

Ըստ երևույթին այդ զինանշանը կրում էին և աքեմենյան սատրապները, որոնք թերևս ազգակցական կապերով մոտ էին կանգնած թագավորական ընտանիքին: Ենթադրվում է, թե Արին Բերդից գտնված հեծյալի պատկերաքանդակով եղջերագավաթը (մ.թ.ա. IVդ.) (հեծյալի գլխանոցի երկու կողմերում պատկերված արծիվներ) մարմնավորում է ոչ թե մեդական մեծատոհմիկ աստիճանավորի,[225] այլ Հայաստանի սատրապ Երվանդին (Ժ. Հարմաթա): Երվանդունիները, որպես Աքեմենյան թագավորական ընտանիքի բարեկամ[226] և Հայաստանի կառավարիչ, ընդունել էին Աքեմենյանների պատվանշանակ արծիվ զինանշանը: Անտիոքոս Կոմագենացին Նեմրուդ լեռան վրա թողած արձանագրության մեջ իր նախնիների շարքում հիշատակում է և Երվանդ թագավորին:[227] Հետաքրքրական է, որ Անտիոքոսի շքեղազարդ պատմուճանը ևս հարդարված է արծվազարդ ճարմանդներով, Դրանք կերտված են դիմահայաց, բացված թևերով, դեմ առ դեմ (Ժ. Հարմաթա): Այսինքն՝ նույն ձևավորմամբ, ինչ Դարեհ III-ի զարդազեղ պատմուճանի վրա է:[228] Նույն ժամանակներին են վերաբերում և արծվապատկեր կախիկ-կրծքազարդերը, որ հարդարում են Արսամեայից[229] և Հաթրայից[230] գտնված Միհրի արձանները: Այն չի փոխվել և Արտաշեսյանների հարստության ժամանակ, թերևս քաղաքական պատճառներով, քանի որ Արտաշեսյաններն իրենց համարում էին Աքեմենյաններից սերած[231]:

Այստեղ տեղին է նշել Ծոփքի թագավորներից մեկի՝ Արդիսարեսի դրամի դարձերեսին պատկերված արծիվը[232] Լրամազդ-Զևսի խորհրդանշանը: Նմանեցնում են հելլենիստական երկրների թագավորների դրամների արծվապատկերներին: Արտաշատից հայտնաբերվել է բրոնզե արծվաքանդակների մի խումբ, որոնք ունեն նույն հորինվածքը: Այս արձանիկները ևս ծիսական նշանակություն ունեն[233] և սերտորեն առնչվում են Նեմրուդ լեռան Դաղ հայտնի բարձր պատվանդանի վրա կանգնած արծվաքանդակի հետ[234]:

Արծիվ-որոտ-կայծակ պատկերները հաճախ են հանդիպում պտղոմեաների[235] և սելևկյանների դրամների վրա:

Շանթի վրա կանգնած արծվի պատկերը մեծ տարածում է ունեցել Փոքր Ասիայում, հատկապես Միհրդատ Եվպատորի ժամանակ: Այն պատկերվել է դրամների[236] վրա և խորհր-

---

[225] *Բ.Ն. Առաքելյան*, Ակնարկներ, էջ 42,43, տախտ. LVII:
[226] *K.Humann und O. Puchstein*, Reison in Kleinasien und Nordsyrien. Berlin, 1890. Texthand. s.307.
[227] ՀԺՊ, I, էջ 503-507:
[228] *Curt. Ruf*.. III. 3, 16.
[229] *F.K. Dörner*, The Goell. Arsameia am Nymphaios, Berlin, 1963, Abb. 28
[230] *Shinji Fukai*, The Artifacts of Hatra and Parthian Art. "East and West". Roma, New series, II, № 2-3, 1960, p. 159-161, pl. 19
[231] ՀԺՊ, I, էջ 528, 530:
[232] *Բ.Ն. Առաքելյան*, Ակնարկներ, էջ 61, տախտ. LXVIII:
[233] *Բ.Ն. Առաքելյան*, Ակնարկներ, էջ 79, տախտ. XCIII-XCV; *Ժ.Դ. Խաչատրյան*, Արտաշատի VII բլրի 1973-1975թթ., պեղումների արդյունքները, ԼՀԳ, 1978, № 8, էջ 67:
[234] *Д.Шлюмберже*. Эллинизированный Восток. Москва, 1985, с. 47.
[235] *A. Bounni, E. et L. Lagarce, N. Saliby*, Rapport Prélimmaire sur la deuxieme eampagne de fouilles (1976) a lhn Hani(Syrie), "Syria", Tome LV. Paris, 1978, pl. $X_{,8}$.
[236] *А.Н. Зограф*, Античные Монеты, МИА, № 16, Москва-Ленинград, 1951, с. 152, 186, табл. XXXVI, $_{19, 22, 23}$; $XLIII_{,20}$, $XLIX_{,2}$; *W. Wroth*. Catalogue of Greek coins. Pontus. Paphlagonia, Bithynia, and the kingdom of Bosporus. BMC, London, 1889. pl. $XIX_{,6,7}$, $XXIX_{,7}$.

դանշել է Զևսին: Դրամների դիմերեսին Զևսն է, դարձերեսին՝ շանթի վրա կանգնած արծիվը: Նման հորինվածք ունի և սիսիանյան մեդալիոնը: Մովսես Խորենացուն հայտնի է Զևս-Արամազդի արձանների չորս տիպ,[237] որոնցից մեկը ամպրոպային Զևս[238]-Արամազդն է:

Այսպիսով, Սիսիանի մեդալիոններն իրենց զարդապատկերային հորինվածքով ու բովանդակությամբ համադրվում են Զևսի, երկնքի, արսի պաշտամունքի մերձավորարևելյան, հելլենիստական արև-աստվածությունների, այդ թվում գուցե և Արամազդի հետ:

Քննարկվող մեդալիոնները կերտված են տեխնիկական նույն հնարներով և ունեն նույն չափերը, ինչ որ կանացի պատկերներով մեդալիոնները, որը թույլ է տալիս ասել, թե դրանք միևնույն կենտրոնի և արհեստանոցի արտադրանք են՝ չբացառելով միևնույն վարպետի կողմից պատրաստված լինելը:

Առավել դժվար խնդիրը Սիսիանի մեդալիոնի պատրաստման կենտրոնը որոշելն է: Դրանց զուգահեռները մեզ հայտնի չեն: Մեդալիոնները կարող էին պատրաստված լինել Սիրիայում, Փոքր Ասիայում կամ էլ Հայաստանում: Ինչ վերաբերում է արծվի պատկերներին, ապա դրանք պատկանում են լեռնային տեսակին կամ ընտանիքին և տարածված են եղել ամենուր՝ Փոքր Ասիայից Հայկական լեռնաշխարհ: Ընդհանուր առմամբ շքազարդերն աչքի են ընկնում ոճական նկատելի ընդհանրությամբ: Ակներև է հելլենիստական տեղական մշակույթների ազդեցությունը:

Տեղականը տեսանելի է մակերեսի վրա հորինվածքի անհամաչափ տեղադրման, ատրիբուտներին խիստ պայմանական մոտեցման, կնոջ կերպարի ու գեղեցիկ ընբռնման չավանիշների մեջ:

Հելլենիստականն արտահայտվում է նախ մեդալիոնների աստվածուհիների պատկերներում, որոնք համադրված են ոչ միայն իրենց ֆունկցիաներով, այլև պատկերագրությամբ: Այսինքն՝ տեղական աստվածուհիները կորցնելով իրենց նախնական տեսքն ու ատրիբուտները, ձեռք են բերում օտարածին տեսք և բոլորովին նոր հատկանիշներ՝ գերագանցապես նմանակելով հունա-հռոմեական աստվածուհիներին: Հելլենիստական կերպավորումն արտահայտվում է և առանձին մանրամասների արտահայտչամբջոցներում, առավելապես սանրվածքի, հագուստի ձևերի (ծալքեր), թռչունների թևերի մշակումներում:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Սիսիանի մեդալիոն-գտածոները պատրաստվել են Հայաստանում, հնարավոր է դեռևս Ուրարտուի ժամանակներից կամ էլ հելլենիստական շրջանում ձևավորված մետաղագործական հայտնի կենտրոններից մեկում: Ամենայն հավանականությամբ, արքունիքին սպասարկող և նրան պատկանող ու նրա հոգածությունը վայելող ռակերչական արհեստանոցներից մեկում, որն անշուշտ պետք է գործեր Արտաշատում: Վերջիններս, հարագատ մնալով տեղական ավանդույթներին, միևնույն ժամանակ կրել են հելլենիստական մշակույթի ազդեցությունը, յուրացրել ու ստեղծագործարար օգտագործել այն: Հնարավոր է՝ դրանք պատրաստվել են ներմուծված բարձրարժեք անոթների կամ նմանատիպ պատճենների օրինակով, տեղացի վարպետի կողմից, որն էլ վերարտադրել է յուրովի,

---

[237] ***Մովսես Խորենացի***, I, 31:
[238] ***Մովսես Խորենացի***, II, 86:

իր միջավայրին համապատասխան, ազատ կոմպոզիցիայով:

Մ.թ.ա. II-I դարերում հելլենիստական աշխարհում մեծ ձգտում է նկատվում դեպի հարստությունն ու ճոխությունը: Պլինիոսը[239] ցավով է նշում ոսկուց, արծաթից ու բրոնզից պատրաստված գեղարվեստական իրերի նկատմամբ մարդկանց ունեցած անհագուրդ ծարավի մասին:

Անտիկ հեղինակներն[240] իրենց տեղեկությունները հաճախ լրացնում են Պլինիոսի (ներկայացրած պատկերները): Նրանք նշում են հռոմեական շքեղ հոգեհացերի մասին, որ մատուցվում էին արծաթե շքեղ սպասքով: Ցիցերոնը Սիրակուզայի (մ.թ.ա. 70թ.) կառավարիչ Վերրեսի դեմ ուղղված ճառում նրան մեղադրում է (նա մեդալիոնների հավաքածու ուներ), այն բանում, որ հաճախ է հրավերքների ժամանակ հանում մեդալիոններն ու տանում[241]:

Հայտնի են արծաթագործ նշանավոր շատ վարպետների անուններ, որոնց գործերը բարձր գին և պահանջարկ ունեին: Շատ է խոսվում մեդալիոններով զարդարված թասերի մասին: Պլինիոսը հիշատակում է մի շարք վարպետների, որոնք փառաբանված էին արծաթե մեդալիոններով զարդարված թասերի արտադրանքով: Երևելի և մեծահարուստ ընտանիքներն ունեին իրենց վարպետները: Անտիկ շրջանում ոսկերիչներն ու արծաթագործները ապակեգործ վարպետների նման տեղից տեղ էին շարժվում և տարբեր երկրներում հաստատում իրենց շարժական արհեստանոցները:[242] Շատ հաճախ վարպետ-արհեստավորների լավագույն ստեղծագործությունները պատճենահանվում էին գիպսով և արտահանվում:

Այս կերպ լավագույն աշխատանքները հայտնի էին դառնում ամենահեռավոր երկրներում: Գիպսե այդպիսի 50 պատճեն է գտնվել Բեգրամում (I-II դդ.)՝ պատճենահանված ալեքսանդրյան արտադրանքի ավելի վաղ օրինակներից: Խերսոնեսում հայտնաբերվել է մեդալիոններ ծուլելու կավե ավելի քան քառասուն կաղապար (մ.թ.ա. III դ. կես): Եգիպտոսում գտնված 77 պատճենները հանված են Փոքր Ասիայում, Հունաստանում, Հոռոդոսում և հարավային Իտալիայում պատրաստված բնօրինակներից[243]:

Սիսիանի մեդալիոններն անկասկած ավելին են եղել, քան մեզ հասածները: Ակնհայտ է, որ դրանք արծաթե ըմպանակների վրա ագուցված խորհրդանշաններ[244] չեն, թեև հելլենիստական շրջանում սկսվում է անոթների մեջ դրվող ռելիեֆ մեդալիոնների արտադրությունը,[245] որը շարունակվում է նաև հետագայում: Սակայն Սիսիանի դամբարանից հայտնաբերված մոտ մեկ տասնյակ ըմպանակներից ոչ մեկի վրա այդպիսի խորհրդանշաններ ընդելուզելու հետքեր չկան: Դրանք ամրացված են եղել թիթեղների վրա՝ զարդարելով բարձր խավի շքեղ հագուստները: Պահպանվել են միայն առանձին բեկորներ:

---

[239] Nat. Hist., XXXIII, 47-55.

[240] Այդ մասին մանրամասն տե՛ս *Կ. Մաչաբելի*. Позднеантичная торевтика Грузии. Тбилиси. 1976, с. 16; *Մ.Ե. Սերգեևկո*, նշվ. աշխ., էջ 36-48:

[241] *Կ.Վ. Տրևեր*. Бактрийский бронзовый фалар с изображением Диониса. ТГЭ, т. V, Культура и искусство народов Востока, N 6, Ленинград, 1961, с. 102-103.

[242] *Կ. Մաչաբելի*, ук. соч., с. 20.

[243] *J. Hackin*. Nouvelles recherches archéologiques à Begram (1939-1940). Paris, 1954, s. 110, 274-320: *Կ.Վ. Տրևեր*, ук. соч., с. 103-104.

[244] *Բ.Ն. Առաքելյան*, Նշվ. աշխ., էջ 82-83:

[245] Տե՛ս նաև *Ե.Օ. Պրուշևսկայա*, Художественная обработка металла (торевтика), АГСП, Москва-Ленинград, 1955, с. 346:

Մեդալիոնները կենցաղ մտան հելլենիստական շրջանում, ապա լայնորեն տարածվեցին մ.թ.ա. I և մ.թ. I դդ. Միջերկրականի արևելյան ափերին[246] և Հյուսիսմերձսևծովյան[247] շրջաններում: Ուսումնասիրվող մեդալիոնները հնարավորություն են տալիս հարստացնելու մեր գիտելիքները Հայաստանի հելլենիստական մշակույթի զարգացման մակարդակի վերաբերյալ:

Այլ զարդեր

Զարդերի հաջորդ խումբը՝ ոսկե սրտաձև կախիկներ[248] (2 հատ), պատրաստված են բարակ թիթեղից, դրվագելու և զոդելու եղանակով (բարձր.՝ 1,5 սմ, լայն.՝ 9 մմ): Կախիկի անցքն արված է հորիզոնական ամրացված տակառաձև թիթեղից՝ եզերված առևակոսներով զարդարված շրջանակով (աղ. XVI,34): Ոսկե սրտաձև շրջանակի մեջ ագուցված նռնաքար կամ այլ կարմրավուն (սերդոլիկ, այմանդին, ամեսիստ և այլն) քարերով կախիկները հելլենիստական շրջանի սիրված զարդերից են: Դրանք օգտագործվել են տարբեր կոմպոզիցիաներով կերտված մանյակներ, կրծքազարդեր ձևավորելիս: Այդպիսիք հայտնի են Արայուխովյան կուրգանից[249] (Բոսփորյան թագավորություն, մ.թ.ա. IIդ. երկրորդ կես): Իսկ Խերսոնեսում գտնված ոսկե սրտաձև շրջանակի մեջ ագուցված նռնաքարով կախիկը համարվում է ներմուծված[250] Սիրիայից, թեև ունի նույն կերտվածքն ու հարդարումը՝ կեղծ՝հատիկաշարեր, ինչ Սիսիանինը:

Վերջապես ոսկե սրտաձև կախիկներով է ձևավորված Ոսկե բլրից[251] (Թիլյա-թեփե) հայտնի մանյակը՝ հարդարված նռնաքարով և փիրուզով, կազմելով ներդաշնակ համադրություն ոսկու դեղին գույնի հետ: Կարմիր գույնի քարերն ընդհանրապես արևելյան ժողովուրդների մոտ մեծ համարում և հարգ ունեին, իսկ նռնաքարը՝[252] առանձնապես: Եղել է սիրելի քարերից և համարվել է թագավորական: Այն գործածական էր նաև Հայաստանում: Նռնաքարով են զարդարված վերոհիշյալ ականջօղը և շարժական վահանակով մատանին: Նռնաքարը տարածված և ոսկերչության մեջ լայնորեն օգտագործվող թանկարժեք քարատեսակներից էր: Ըստ երևույթին այն պատշաճ էր ազնվականության հավատալիքներին ու ճաշակին: Մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները անտիկ աշխարհը ծանոթ չէր նռնաքարին: Հելլենիստական շրջանում այն արդեն մեծ մասսայականություն էր վայելում զլիպտիկայում,[253] հատկապես Հյուսիսմերձսևծովյան շրջաններում: Հավանաբար Արևելքը քարերի հետ միասին

---

[246] *M. Bieber*, The sculpture of the Hellenistic age, New York, 1961, fig. 341.
[247] *T.H. Marshall*. Catalogue of the jewellery greek, Etruscan and Roman. London, 1911, pl. IX, p. 2727, 2735.
[248] ՀՊԹ 2618/6, քաշը՝ 1.55գր.: *Բ.Ն. Առաքելյան*, Ակնարկներ, գուն. տախտ. XX:
[249] *М.И. Максимова*, Артюховский курган, с. 7-8, рис. Арт. 6.
[250] *Н.В. Пятышева*, Ювелирные изделия Херсонеса, Москва, 1956, с. 56, Табл. VIII,7.
[251] *V. Sananidi*, Bactnan gold, p. 117, 118, fig. 64; V. Sananidi, Die kunst des alten Afghanistan, Leipzig, 1986, Abb. 171.
[252] Granatus–լատիներեն բառ է-հատիկանման: Նռնաքարը պարսիկները համարում էին թագավորական քար: Դրա մակերեսին փորագրում էին տիրակալի պատկերը, վերագրում էին հմայական և բուժիչ հատկանիշներ: Այն կրում էին իբրև բալիսման, ճանապարհորդությունների ժամանակ՝ որպես ոչբարստ պաաահարներից պահպանող, դողէրոցք, դեղնախտ և այլ հիվանդություններից բուժող: *Н.И. Корнилов, Ю.П. Солодова*, Ювелирные камни, Москва, 1982, с. 108.
[253] *М.И. Максимова*, Боспорская камнерезная мастерская, с. 78-79.

հույներին փոխանցեց նաև նրանց հետ կապված հավատալիքները: Հույները, որոնք վատ բժիշկներ չէին, դժվարին րոպեներին հաճախ էին դիմում հմայական և կախարդական մբջոց-ների[254]:

Հայաստանը հարուստ է կրսաթանկարժեք քարատեսակներով՝[255] լեռնային բյուրեղ բազմատեսակ հասաիսներ, սարդիոն, ագաթ, քալցեդոն, փիրուզ, օնիքս և այլն, որոնցից պատրաստված տարատեսակ շատ զարդեր հանդիպում են Հայաստանի վաղ շրջանի հուշարձաններում: Լոռի բերդի մբայն թիվ 2 դամբարանից հայտնաբերվել է մեկ և կես կիլոգրամ սարդիոնե և ագաթե ուլունք:[256]

Սիսիանի դամբարանից հայտնաբերված զարդերի հավաքածուում առանձին խումբ են կազմում ամֆորաձև կախիկները[257](9 հատ) պատրաստված ոսկե բարակ թիթեղից, դրոշմելու եղանակով: Ձևով դրանք երկվեղկ են: Փեղկերն իրար նրբորեն միակցված են զոդելու հնարքով: Կախիկն ունի հատուկ օղ-կախիկ: Կախիկ-օղից ներքև ագուցված է ոսկե բարակ թիթեղից բոլորշի կտրվածքով հարդարված վերադիր եռատերև տափակ թելազարդ վարդակ՝ ծայրում առվակրսներից օղակ: Օղակից ներքև՝ բրգաձև հասիկաշար զարդ (աղ.XVI,₈):

Շրջանաձև թիթեղի վրա պատկերված է բարակ լուսից պատրաստված եռատերև վարդյակ, որը փակցված է զոդելու եղանակով: Ոտքի մասում առվակրսներով թիթեղից օղակ է հագցված: Ոտքն ավարտվում է չորս հասիկրց բաղկացած բրգաձև հորինվածքով: Ամֆորաձև կախիկներ Հայաստանի մյուս ենավայրերից հայտնի չեն, թեև ծուլածո բրոնզե նմանօրինակ կախիկներ գտնվել են Գառնիի[258], Արտաշատի[259] և Օշականի[260] դամբարաններում, մբայն այն տարբերությամբ, որ չեն կրում վարդակազարդ և ծայրում ավարտվում են ուղղանկյուն ցածր պատվանդանով:

Տարբեր մետաղներից ու քարից պատրաստված ամֆորաձև կախիկներ հայտնի են նաև անտիկ աշխարհի այլ հուշարձաններից:[261] Դրանք սովորաբար համարվում են Միջերկրականի արևելյան երկրների արտադրանք և պատկանում են ուշ հելլենիստական շրջանին: Սակայն, Սիսիանի ամֆորաձև կախիկները տարբերվում են դրանցից իրենց առանձին մանրամասներով՝ վզին ամրացված սկավառակաձև թիթեղով: Նրա վրա եղած զարդով և այլն: Կախիկներն, ամենայն հավանականությամբ, պատրաստվել են Հայաստանում:

Հատիկավոր բրգաձև զարդով է հարդարված նաև օղակից կախված ամֆորաձև, երկու կեսը իրար զոդած կախիկը: Նույն եղանակով պատրաստված ամֆորաձև կախիկներից մեկը վերոհիշյալից տարբերվում է ներքևում ավարտվող մեկ հատիկով: Հորիզոնական գլանաձև

---

[254] *Л.А. Оганесян*, История медицины в Армении, т. II, Ереван, 1946, с. 67.
[255] *К.А. Мкртчян, Э.В. Ханзадян*, Ук. соч., с. 159.
[256] *С.Г. Деведжян*, Лори-Берд, 1, с. 35, 69-70, рис. 35.
[257] Քաշը 15.03 գր., 2.12 գր., 3.37գր., 1.32 գր., 1.15գր., 0.33գր., 0.15գր., 0.42գր., 0.35գր., 0.30գր.: ***Բ.Ն. Առաքելյան***, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, գուն. տախտ. XX; Arménie. Trésors. N 232.
[258] Гарни, V, с. 102-103, рис. 43.
[259] Արտաշատ, II, էջ 30, նկ. 35, 16:
[260] *С.А. Есаян, А.А. Калантарян*, Ошакан I, табл. XLII,₅.
[261] ***H.Hoffman, P.F. Davidson***. Greek gold jewellery from the age of Alexander, Boston, 1966, Fig. 51A; ***S. Yeivin***, The tombs found at Seleucia, Burial grounds. Second preliminary Report upon the Excavations at Tel Umar, Iraq, Ann Arbor, 1933, pl. XXI, fig. 2.

լարը (երկ.՝ 4մմ) հարդարված է առվակոսներով (բարձր.՝ 14մմ): Այն իր զուգահեռներն ունի հյուսիսարևելյան Հայաստանի, Սինգեչաուրի, Քուռի աջափնյա հուշարձաններից գտնված ոսկե կահիկների հավաքածուներում, որոնք թվագրվում են մ.թ.ա. V-III դդ.[262]: Կահիկներից մյուս երկուսը գնդաձև են, սնամեջ, նույն տեխնիկայով պատրաստված (տրամ.՝ 10մմ), մեկը կախված է հորիզոնական գլանաձև խողովակով (երկ.՝ 8մմ), մյուսը՝ օվալաձև:

Հետաքրքիր խումբ են կազմում և իրենց բազմազանությամբ աչքի են ընկնում հագուստին կարվող, ոսկե բարակ թիթեղից դրոշմելու եղանակով պատրաստված տարբեր չափերի զարդերը (աղ.XVI,10,15-17):

Սոաջին - փոքր չափերի, շրջանաձև իրանով, հակառակ կողմում հատուկ օղ՝ զգեստին կարելու համար (30 հատ, տրամագիծը՝ 4-5մմ, քաշը՝ 3.237գր. (Աղ.XVI,16)): Ունեն բազում զուգահեռներ մեզանում՝ Գառնի ամրոցից և դամբարանից[263](48 հատ), Վրաստանից՝ Սամադլոյից[264] (մ.թ.ա. Ի.). Ժինվալիից[265] (մ.թ. Ի.), Բակտրիայից՝ Թիլյա-թեփեից[266] (մի քանի հազար), Հյուսիսմերձսևծովյան շրջաններից՝ Չերտոմլիկի կուրգանից[267] և այլ վայրերից:

Երկրորդ - չափերով քիչ ավելի խոշոր են (19 հատ, 5-7մմ, քաշը՝ 2.12գր.), եզերված կեղծ հատիկներով (աղ.XVI,15): Այս տարբերակը առավել տարածված ձևերից է: Այդօրինակ զարդակոճակներ հանդիպում են Ղրիմում՝ սկյութական Նեապոլում[268]:

Երրորդ - տափակ, սկավառակաձև, հակառակ կողմում մեկ կամ երկու օղակով (17 հատ, տրամագիծը՝ 5-7մմ) (աղ.XVI,17): Նմանօրինակ զարդակոճակներ հայտնի են Օշականի դամբարաններից: Վերջինս, ի տարբերություն վերը թվարկվածների, ոչ թե կարվել է, այլ կահվել[269]: Հարյուրավոր նման կախիկներ են հայտնաբերվել Բակտրիայում, Թիլյա-թեփեում[270] և այլուր (աղ.XVI,13):

Չորրորդ - վահանաձև (շրջանաձև) հարդարված վարդակազարդով, հակառակ կողմում՝ կարելու օղակ (3 հատ, տրամագիծը՝ 5մմ) :

Հինգերորդ -փոքր չափերի, վահանաձև, եզերված ուռուցիկ զոտեզարդով, տակից կարելու օղ(14 հատ, տրամագիծը՝ 4-7մմ, քաշը՝ 1.32գր.) (աղ.XVI,10): Այդպիսիք հայտնի են Թիլյա-թեփեից[271]:

Վեցերորդ սնկաձև, ուռուցիկ իրանով, եզերված լայն ժապավենաձև զարդազոտիով՝

---

[262] *Г.М. Асланов* и др., Каталог, с. 25-26, Табл. VII,3.
[263] Гарни, V, с. 105, рис. 41, табл. XX,1.
[264] *Ю.М. Гагошидзе*, Самадло. Тбилиси, 1979, с. 74, табл. LX, 19.
[265] *Р.М. Рамишвили*. Археологические изыскания в зоне строительства Жинвальского гидротехнического комплекса в 1976-1979гг., Археологические исследования на новостройках Гр. ССР, Тбилиси, 1982, с. 36, табл. XIII,2.
[266] *В.И. Сарианиди*, Афганистан: Сокровища, с. 32-33; *V. Sarianidi*, Bactrian gold, Abb. 26 (125 հատ), 125 (415մ, 313 միջին, 447 փոքր).
[267] *А.Ю. Алексеева*, Нашивные бляшки из Чертомликского кургана, в сб. Античная торевтика, Ленинград, 1986, с. 65, рис. 7 а,б.
[268] *И.Д. Марченко*, Археологическая деятельность гос. музея изобразительных искусств им. А.С. Пушкина за сорок лет. Сообщения гос. музея изобразительных искусств им. А.С. Пушкина, IV, Москва, 1968, с. 20-21, рис. 19; *Э.А. Симанович*, Населения столицы позднескифского царства, Киев, 1983, табл. XXXVII1-4
[269] Ошакан, I, с.66, рис. 5.
[270] *V. Sarianidi*. Bactrian gold, Abb. 12, 1; 13-16 և այլուր.
[271] Նույն տեղում, նկ. 11(313 հատ); *А.П.Харко*, К вопросу о производстве золотых бляшек в Черноморья, МИА, N 96, 1966, с. 224.

վոան հինգ տեղով անցքեր[272], թվով հինգը, կարելու, ագուցելու համար (աղ.XVI,12): Խմբի վերջին գարդավահանակը իր կերտվածքով եզակի է: Ձևով՝ սրտաձև, դրոշմագարդ, ծայրում՝ կեղծ գնդիկ, հակառակ երեսին՝ կարելու երեք անցք (աղ.XVI,14): Սրտաձև մյուս գարդերը եզրերին ուռուցիկ շրջանակ չունեն (2 -ը), իսկ կարելու օղակները երեքն են: Կա նաև առվակոսներով ոսկե թիթեղից պատրաստված երկու խողովակ, մեկը՝ լայն (երկարությունը՝ 6մմ, քաշը 0.35գր.), մյուսը՝ նեղ (9 հատ, երկար.՝ 4-5մմ):

Ուշագրավ են արծաթե, ոսկեջրած գարդակոճակ-վահանակները (4 հատ, երկուսը՝ քիչ թերի, տրամ.՝ 24մմ), վարդակաձև, ներքուստ սնամեջ, տակի՝ կարելու օղ (աղ.XVI,1), արտաքուստ ուռուցիկ, հարդարված առվակոսներով (կամ մատնեքավոր): Նմանօրինակ ոսկե գարդակոճակներ հայտնի են Գառնիից, Օշականից և Աշնակից:

Հարդարարվեստում զարդակոճակ վահանակների գործածությունը հայտնի է դեռևս II հազարամյակից (Լոռի բերդի դամբարաններից):[273] Ավանդույթի ուժով դրանք շարունակվեցին գործածվել մ.թ.ա. VII-V դարերում: Սակայն առավել տարածուն դարձան հելլենիստական և ուշ անտիկ դարաշրջանում: Հանդիպում են անտիկ աշխարհում: Հագուստը նման գեղեցիկ, նրրակերտ գարդաթերթիկով հարդարելու սովորույթը շատ հարգի էր սարմատների մոտ, Մերձկուբանյան[274] շրջաններում (մ.թ.ա. II- մ.թ. I դարեր), Բոսփորյան թագավորությունում[275], Վրաստանում՝ Սամադլոյում,[276] Վանիում[277] և այլուր: Վանիում դրանցով հարդարված է թիվ 1 դամբարանում գտնված երկաթակնոտ արծանիկի հագուստը:[278] Սկյութական Նեապոլի[279] դամբարաններում գտնված ոճավորված թռչնի կտուցի նմանվող գարդերը ձևով հիշեցնում են Գառնիից հայտնի նմանօրինակ զարդերին: Ինչ վերաբերում է նոնաքարով վարդյակին, սպա ինչպես վերը նշեցինք, արևելքում շատ ընդունված էր մետաղյա զարդերը հարդարել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով կամ ապակիով, որը նրանց թալիսմանի հատկանիշներով էր օժտում: Հելլենիստական շրջանում այդ սովորությունն անցավ հույներին և լայն տարածում ստացավ ամբողջ անտիկ աշխարհում:

Բացի հագուստները հարդարելուց, վերոհիշյալ գարդակոճակներով զարդարում էին և գլխաբկները, կաշվե ոտնամանները, թաղման առագաստները:[280] Տվյալ պարագայում քննարկված բոլոր գարդերը՝ հայտնի Սիսիանի, Գառնիի, Օշականի և Աշնակի դամբարաններից, չի բացառվում, որ ծառայել են իբրև հուռութք- թալիսման՝ օժտված մոգական հատկանիշներով:[281]

---

[272] Տրամագիծը 14 մմ, բարձր. 8 մմ, քաշը 2.76 գր.:
[273] *С.Г. Деведжян*, ук. соч., с. 69, рис. 23б, 2-10; 28,1-7, табл. XXV,13.
[274] *В.И. Шилов*, Калиновский курганный могильник, МИА, N 6, Москва-Ленинград, 1959, с. 464.
[275] *И.И. Гущина, Т.Б. Попова.* Воздвиженский курган-памятник III тысячелетия- Iв. до н.э., Ежегодник ГИМ, 1965-1966, Москва, 1970, с. 79, рис. 16,4; *Е.О. Прушевская*, Художественная обработка металла, с. 348.
[276] *Ю. Гагошидзе*, Самадло, Тбилиси, 1979, с.74, табл. II,1.
[277] *А.М. Чкония.* Золотые украшения Ванского городища. Вани, VI, Тбилиси, 1981, с. 145.
[278] *Н.В.Хоштария*, История археологического изучения Вани, I, Тбилиси, 1972, с.84, рис. 2а.
[279] *П.Шульц*, Ук.соч., с. 22, 73, 74, 83, табл. II12-13, XXVI,6.
[280] *Н.А.Онайко*, Заметки о технике Боспорской торевтики. СА. 1974, № 3, с.78; *Е.О. Прушевская*, ук. соч., с. 350.
[281] *М.И. Максимова,* Артюховский курган. с. 71.

Հելլենիստական ժամանակաշրջանում հաճախ էին ընդօրինակվում պերճանքի կամ զարդարանքի առարկաների ձևերը, հարդւսրանքի կերպն ու արտահայտչամիջոցները, պատրաստման եղանակներն ու հնարները, և ստեղծված այդ համընդհանրությունը դժվարացնում է քննարկվող առարկաների արտադրության կենտրոնների տեղայնացումը (կամ վայրի որոշումը):

ԱՐՃԱԹԵ ՍՊԱՍՔ ԵՎ ԶԱՐԴԵՐ

Թասեր և սկահակներ

Հայաստանը մետաղամշակության հնագույն բնօրրաններից մեկն է, ուստի մետաղի գեղարվեստական մշակումը գալիս է դարերի խորքից: Սակայն, մինչև վերջին տարիներս Հայաստանի հելլենիստական դարաշրջանի տորևտիկան գրեթե անհայտ էր: Միայն շնորհիվ Գառնիի, Արտաշատի, Սիսիանի և այլ վայրերի, պեղումներով կամ էլ պատահաբար հայտնաբերված մետաղե մի շարք գեղարվեստական գտածոների՝ հնարավոր դարձավ ծանոթանալու անտիկ շրջանի տորևտիկային:

Գեղարվեստական մետաղի հավաքածուներում ուրույն տեղ ունեն Սիսիանից հայտնաբերված արծաթե թասերն ու սկահակները: Թասերը, որոնցից երեքը համեմատաբար լավ են պահպանվել, չափերով իրարից քիչ են տարբերվում (տր.՝ 10-12.2սմ, բարձր.՝ 6.2-7սմ, քաշը՝ 405-15-415.30գ): Անոթների պսակները դեպի ներս լայնանում են և կլորանում: Թասերից երկուսի պսակը հարդարվում է վոայից, լայնքով, հաջորդաբար տարված մեկ և երկու փորագիր գծերով, Թասերից մեկը առանձնանում է իր շքեղ հարդարանքով (տր.՝ 11.8սմ, բարձր.՝ 6.2սմ, քաշը՝ 415.15գ): Թասի դաշտն արտաքուստ բաժանված է ութ հավասար հատվածների, որոնցից առաջին չորսը հարդարված են առևակոսներով, իսկ մյուս չորսը՝ սուր երկարավուն տերևներով, հավանաբար նետաբույսի (sagittana) և քիչ ոճավորված խաղողի որթերով (աղ.IV,$_{1,2}$): Պատկերը վերևում շրջանակված է կետուշար երկու զուգահեռ գոտիների մեջ ներառած պարանահյուսով, իսկ ներքևում՝ հատակն ընդգծող համակենտրոն երեք շրջանով:

Թասերը պատրաստված են ձուլելու եղանակով (հատուկ կաղապարներով), իսկ զարդաձևերը՝ փորագրելու և դրվագելու հնարանքով, Աշխատանքը կատարված է բավականին խնամքով,[282] Շեշտված են բուսական զարդերի բոլոր մանրամասները, նույնիսկ տերևների միջնաջղերն ու երակները: Այս տեխնիկան առավել գործածական էր հատկապես մ.թ.ա. I դարում:[283]

Հելլենիստական համարվող կիսագնդաձև որոնզե թասեր հայտնարերվել են հար-

---

[282] *Ժ.Դ.Խաչատրյան*, Սիսիանի արծաթյա գեղարվեստական բաներն ու սկահակները, ՊԲՀ, 1979, № 1, էջ 280-284, աղ. I, $_{4-7}$, II, $_{1, 2}$, III, $_{2-4}$: *Ж.Хачатрян*, Художественные изделия из серебра эллинистического времени, Второй международный симпозиум по армянскому искусству, сборник докладов, том I, Ереван, 1978, с. 237-239, рис. 56, $_{1, 2}$.

[283] *К.В.Тревер*, Памятники греко-бактрийского искусства, М.-Л., 1941, с. 35-36.

ավարևմտյան Հայաստանում՝ Աշվանում:[284] Թասերի այդ տեսակն օգտագործվել է աստվածներին նվիրված սրբազան արարողություններում՝ անուշահամ հեղուկներով հեղումները կատարելու համար: Սակայն հետագայում դրանք կորցրել են իրենց նախնական իմաստը, ձեռք բերել կիրառական լայն նշանակություն,[285] այդ նպատակին էին ծառայում և Սիսիանի կիսագնդաձև թասերը, որոնք թվագրվում են մ.թ.ա. I դարով:

Բուսական գարդերով արծաթե թաս հայտնաբերվել է Մարաստանում՝ Նեհավենդի մոտ, այսպես կոչված «Կարենների գանձարանում» (Բեռլինի թանգարանում,[286] տախտակ V,1), անթերի մշակմամբ: Զարդերի դասավորությունը նույնն է, տարբերությամբ որ չորս հատվածներում զարդանկարը ձևավորված է խաղողի տերև հիշեցնող ականթներով: Հատակը հարդարված է քառականթ վարդակով և քառատերև լոտոսով, առևակոսները վեցական են: Շրթի վրա պահպանված է հունատառ գրություն՝ PXA (տր. 14.5սմ): Ըստ Ե.Հերցֆելդի՝ այդ զարդատարրերն ունեն հելլենիստական ընույթ՝ չբացառելով, անշուշտ, աքեմենյան գարդարվեստին բնորոշ տարրերի առկայությունը: Ընդհանրության մեջ նա թասին վերագրում է նախասասանյան ծագում, ավելի կոնկրետ՝ բակտրիական, իսկ գրությունը՝ պարթևական կամ քուշանական, և թվագրում է մ.թ.ա. II-I դարերով:[287] Դ.Ե.Սթրոնգը, որը գեղարվեստական մետաղի լավագույն մասնագետներից է, թասի մանրազնին ուսումնասիրությունից հետո հայտնում է այն կարծիքը, թե խնդրո առարկան ժամանակին լայն գործածություն ունեցող գինու թասերից է (գործածական է եղել մինչև մ.թ.ա. II դար) և ունի սիրիական ծագում:[288] Բոլորովին այլ տեսակետի է Ռ.Ցանը: Նա կարծում է, որ թասի գարդանկարներում բացակայում են իրանական (առաջավոր), ասիական (գուցե և արևելյան) հարդատարրերը, գերակշռում են եգիպտական (հելլենիստական) կիրառական զարդարվեստին բնորոշ արտահայտչաձևերը, և չի բացառվում, որ այն կարող էր պատրաստված լինել հունական գաղութներից մեկում մ.թ.ա. III դարում:[289] Արծաթե նման զարդերով մի թաս պահվում է Ստոկհոլմում,[290] հայտնաբերված Միջին Արևելքում (ճիշտ վայրը հայտնի չէ): Նրա դաշտը ևս, Նեհավենդի և Սիսիանի օրինակների նմանությամբ, բաժանված է չորս մասի, լեգված և զարդերը վեցական են, իսկ նրանց միջև՝ նետարույսի տերևների երկու կոդմերում, պատկերված են խաղողի ողկույզները: Հատակի վարդակը նետարույսերից կազմված խաչաձև գարդ է, վրան՝ լոտոսի տերևները: Մանրամասն քննության են ենթարկվում դրանց գարդանախշերն ու կատարման ոճական առանձնահատկությունները, զուգադրվում մեգաբյան թասերի հետ և գտնում, որ այդպիսի հարդարանքը հանդիպում է մ.թ.ա. IIIդ. վերջում և II-ի սկզբում Աքենքում և Անտիոքում: Հատակների վաղ-

---

[284] ***St.Mitchell***, Aşvan kale, Anatolian Studies, vol. XXIII, 1973, fig. 23₃. ***D.N.French***, Aşvan Excavations, 1969, Kehan projekt, Activities, Ankara, 1971, p. 36, pl. 30 ₄.

[285] ***К.В.Тревер***, Греко-Бактрийская золотая чаша, "Сокровища Эрмитажа", М.-А., 1949, с. 101-102.

[286] ***E.Herzfeld***, The Hoard of the Karen Pahlavs, the Burlington Magazine for Connoiseurs, N CCXCVIII, vol. 52, Januaty London, 1928, pp. 21-27, pl. A. B.

[287] ***E.Herzfeld***, նշվ. աշխ., էջ 21-22.

[288] ***D.E.Strong***, Greek and Roman gold and Sliver plate, London, 1966, p. 110, 121.

[289] ***R.Zahn***, Ein Hellenistischer sliberbecher im antiquanum der staatlichen museen zu Berlin, Jahrbuch des Deutschen Archaologischen instituts, Band 82, 1967, Berlin, 1968, s. 1-14, Abb. 1, 2, 3, 4.

[290] ***L.Byvanck-quarles van Ufford***, Un bol d'argent helienistique en Suède, Bulletin Antike Beschaving, Organ van de verreeniging Antike Beschaving, jaargang XLVIII, Leiden 1973, p. 119, fig. 1ₐ-c: ***H.Luschey***, Iran und der Western von Kyros bis Khosrow, AMI, New Folge, Band 1, 1968, Berlin, Taf. 16,1.

դակեները ընորոշ են մ.թ.ա. II դարի վերջին քառորդին պատկանող հուշարձաններին: Նրանց վրա նկատելի է պերգամոնյան զարդարվեստի ազդեցությունը: Ինչ վերաբերում է լեզվածև զարդերին, ապա այդպիսի զարդերով բեկորներ գտնվել են Կորնթոսում (մ.թ.ա. 146թ.): Լեզվածև զարդերով մի թաս գտնվել է Շոշում և պահվում է Լուվրում: Ի տարբերություն վերոհիշյալների՝ սրա մակերեսն ամիողջապես հարդարված է լեզվածև զարդերով և թվագրվում է մ.թ.ա. II դարի վերջով: Ենթադրվում է, որ ոճական առումով երկուսն էլ վերաբերում են մ.թ.ա. I դարի կեսին և կերտվել են ուշ հելլենիստական աշխարհի գեղարվեստական մետաղի կենտրոններից մեկում՝ Սիրիայում՝ Անտիոքում կամ արևմտյան Փոքր Ասիայում:[291]

Սիսիանի թասը թեև ունի ընդհանուր ադերսներ Նեհավենդի և Ստոկհոլմի թասերի հետ, բայց և ունի որոշակի տարբերություններ: Թասի վրա լեզվածև զարդերը յոթն են (Շոշի նման) և ի տարբերություն վերոհիշյալների՝ հաջորդում են միմյանց: Նետաբույսի կոդքերին արված խաղողի ողկույզներն ավելի քիչ են ոճավորված և ավելի նման են Ստոկհոլմի թասի զարդերին, իսկ հատակին վարդյասի փոխարեն ունի Շոշի թասի նման համակենտրոն շրջաններ: Սիսիանի թասի լեզվածև զարդերի ծայրերը թեքությամբ կտրված են, որը խաթարում է ամբողջական տեսքը: Ակայն տասից երևացող գծերը և այդ հատվածի անփայլ լինելը վեայում են այն մասին, որ դրանք արվել են հետագայում, թե ինչ նպատակով, դժվար է ասել:

Այսպիսով, կասկածից վեր է, որ Սիսիանի թասը և վերոհիշյալ թասերը ժամանակակից են իրար և նույն միջավայրի, շատ հնարավոր է, որ նույն կենտրոնի արտադրանք են: Ճիշտ է այն տեսակետը, որ դրանք իրենց զարդերով ադերսվում են «մեգարյան» կոչվող կոսագնդաձև կավե թասերի հետ,[292] որոնք հարդարված են նմանատիպ լեզվածև, նետաբույսի և այլ զարդերով: Նետաբույսը հանդիպում է նաև սիրիական, փոքրասիական, հելլենիստական, մետաղե, կավե և ապակե թասերի հարդարանքում: Պատրաստման ժամանակի հարցում, ըստ մեզ, ճիշտ են այն գիտնականները, որ դրանք համարում են մ.թ.ա. II դարի վերջի, մ.թ.ա. I դարի սկզբի արտադրանք, սակայն ավելի հավանական է մ.թ.ա. I դարի առաջին կեսը:[293] Սիսիանի թասը զալիս է հաստատելու վերջին թվազրությունը: Ինչ վերաբերում է արտադրության վայրին, հիմնականում ենթադրվում է Միջերկրականի արևելյան ափերը, մասնավորապես Սիրիան, Փոքր Ասիան, Պերգամոնը, Հռոդոսը: Միջերկրականի արևելյան ափերը փառաբանված էին արծաթե թանկարժեք անոթների արտադրանքով:[294] Ընդունելով հանդերձ իբրև պատրաստման կենտրոնը Սիրիան (Անտիոքը) կամ Փոքր Ասիայի արևմտյան քաղաքներից որևէ մեկը՝ չմոռանանք նշել, որ նետաբույս կամ լեզվածև զարդերը շատ տարածված էին նաև ասորեստանյան, ուրարտական և աքեմենյան շրջանի սիրառական արվեստի հատկապես դեղարվեստական կերտվածքներում[295]: Ուստի բոլորովին անհիմն չի կարելի համարել նաև

---

[291] Նույն տեղում, էջ 121, 123:

[292] ***L.Schafer***, Hellenistische keramik aus Pergamön, Berlin, 1968, Abb. 12,1; H.Goldman, excavations at Gözlu Kule, Tarsus, The Hellenistic and Roman Penods, vol. I, Pnnceton, New Jersey, 1950, Fig, 137, 293.

[293] ***E.Herzfeld***, նշվ. աշխ., էջ 27; L.Byvanck-Quarles van Ufford, նշվ. աշխ., էջ 121, 123.

[294] ***A.Springer***, Die Kunst des Altertums, Handbucb der Kunstgeschichte, Band I, Das Altertums, Leipzig, 1923, s. 108-109; ***К.Мачабели***, Позднеантичная торевтика Грузии, Тбилиси, 1976, с. 136-147.

[295] ***Г.А.Тирацян***, К вопросу о торевтике и ювелирном деле Армении в ахеменидское время, ИФЖ, 1969, № 1, с. 87-105; ***Axel von Saldern***, Glass finds at Gordion, Journal of glass Studies, vol. 1, 1959, Fig. 2, 11.

Ե.Հերցֆելդի կարծիքը, թե «Կարենների գանձարանի» թասի զարդերում, չբացահայտելով դրանց հելլենիստական բնույթը, տեսնում էր աքեմենյան զարդարվեստին բնորոշ որոշ տարրեր: Իրոք, հայտնի են նետաբույսերով հարդարված, տարբեր վայրերից գտնված, իրանական համարվող արծաթե, բրոնզե ու ապակե մի շարք փիալաներ,[296] որոնք Հ.Լուշեյը անվանում է "Blattphialen" (տերևներով փիալաներ) և առանձնացնում իրև յուրահատուկ պարսկական խումբ:[297] Աքեմենյան ընդարձակ պետության տարածքում գործում էին արծաթե առտնին սպասք պատրաստող տարրեր կենտրոններ, որոնց մեծ մասը գտնվում էր բուն Իրանի սահմաններից դուրս: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Սիսիանի, Նեհավենդի և Ատոկհոլմի անոթների, բացառյալ Շոշի թասի, նմանօրինակներ չեն գտնվել Սիրիայի և Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում, որոնք հիմնականում կենտրոնացած էին Միջերկրականի ափերից բավականին հեռու, որոշակի շրջաններում՝ Արևմտյան Հայաստան, Մարաստան, Միջագետք և Միջին Արևելք, ապա կարելի է ենթադրել, թե դրանք պատրաստվել են կամ վերոհիշյալ երկրներում կամ էլ Իրանին մոտ գտնվող մեկ այլ կենտրոնում: Կնշանակր այդ թասերը պատրաստվել են Մարաստանում կամ էլ Հայաստանում, որոնք իրավամբ համարվել են գեղարվեստական մետաղի հնագույն կենտրոններից: Հայաստանում բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակաշրջանի հուշարձաններից հայտնաբերված կաղապարները, ոսկե, արծաթե և բրոնզե սպասքի առարկաները, զարդերը, գոտիներն ու արձանիկները վկայում են այն մասին, որ Հայաստանում վաղուց ի վեր գոյություն է ունեցել մետաղի գեղարվեստական մշակույթ, որում օգտագործվել են տեխնիկական տարրեր հնարներ ու միջոցներ, հաղորդակ հարևան երկրների փորձին ու ձեռքբերումներին: Վերջին տարիների ուրարտական և աքեմենյան գեղարվեստական մետաղի գյուտերը պատմական Հայաստանի տարածքում թույլ են տալիս ենթադրել, թե աքեմենյան մետաղե փիալաների նախատիպերը պետք է փնտրել ոչ միայն Ասորեստանում, այլև Ուրարտուում: Ուրարտական տորևտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ ուղղակի կապ կա ուրարտական և վաղ հայկական մետաղագործական մշակույթում: Հայաստանի տարածքում հումքի գոյությունը և գյուտերը խոսում են այն մասին, որ Հայաստանում աքեմենյան շրջանում գոյություն ունեին զարգացած մետաղագործական արհեստանոցներ: Հնարավոր է, որ դրանք գտնվել են Էրգրումի և Երգնկայի շրջաններում: Չի բացառվում և մետաղագործական հանրահայտ այլ կենտրոնների առկայություն ուրարտական պետության սահմաններում, որոնք շարունակել են գոյատևել և հետուրարտական շրջանում:[298]

Կարելի է պնդել, որ աքեմենյան շրջանում Հայաստանում գործել են զարգացած մետաղագործական արհեստանոցներ՝ հոչակված հատկապես գեղարվեստական մետաղի բնագավառում, ապա հելլենիստական դարաշրջանում, կապված առևտրատնտեսական կյանքի

---

[296] *Б.А.Куфтин*, Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941, с. 36, 37, табл. VII, VIII; *А.А.Иессен*, Ранные связи Приуралья с Ираном, Советская Археология, XVI, М.-Л., 1952, с. 211, 214-216, рис. 2, 5_1, 6; *H.Luschey*, Die Phiale. Bleicberode am Harz, 1939, Abb. 37, 40; *Andrew Oliver*, Yr., Persian export Glaas. Journal of Glass Studies, 1970, vol. 12. p. 9-13, Fig. 1-9; *Axel von Saldern*, Glass, finds at Gordion, vol. 1, 1959, fig. 19, 24, 26.

[297] *H.Luschey*, նշվ. աշխ., էջ 125.

[298] Այդ մասին գրականությունը տե՛ս *Г.А.Тирацян*, К вопросу о торевтике и ювелирном деле Армении в ахименидское время, ИФЖ, 1969, №1, с. 102-105:

նոր, առավել բարձր վերելքի հետ, դրանք ևս ապրել են մեծ առաջիսաղացում, համահունչ ժամանակի պահանջներին: Չի բացառվում, որ դրանց կողքին ձևավորվել են նորերը, հատկապես մ.թ.ա. III-I դարերում, երբ Հայաստանում ստեղծվել էր միասնական պետական համակարգ: Հայաստանը անկախ էր քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Այդ են հավաստում և Հայաստանի անահիկ շրջանի քաղաքների ու մյուս հուշարձանների պեղումների արդյունքները:

Հելլենիստական մշակութային շրջանակներ ընդգրկված երկրներում, այդ թվում և Հայաստանում, երևան եկան մշակութային մի շարք ընդհանրություններ, որոնք ոչ այնքան փոխառություններ էրն, որքան ողջ հելլենիստական Արևելքում առկա ինքնատիպ մի շրջան ("ԽՏովպ") ձևավորող, գեղարվեստական որոշակի ընդհանուր մթնոլորտի գոյության փաստ: Հարկավ, չէրն բացառվում և տեղական առանձնահատկությունները, այս կամ այն կենտրոնին բնորոշ տարբերակիչ մանրամասները: Բայց կային որոշակի քանակության ընդհանուր տարրեր: Հենց այդ ընդհանրությունն էլ հեշտացնում էր տեղական գեղարվեստական դպրոցների փոխազդեցությունը:[299] Ուստի հաճախ երևույթները տվյալ պատմագեղարվեստական մեծ կոնտեքստից դուրս քննելիս այդ ընդհանրության արդյունք հանդիսացող շատ տարրեր, մանրամասներ համարվում են արտաքին ազդեցության արդյունք, տեղում պատրաստված շատ առարկաներ դիտվում են իբրև ներմուծված: Հետագայում՝ հռոմեական դարաշրջանում, հելլենիստական երկրներում ձևավորված արհեստագործության ու մշակութային խոշոր կենտրոնների մշակած փորձն ու ավանդույթներն ապրեցին աննախադեպ զարգացում՝ պայմանավորված հռոմեական կայսրության հզորությամբ ու տնտեսական մեծ ռեսուրսներով:[300] Հատկանշական է, որ արտահանվում էրն ոչ միայն պատրաստի արտադրանք, այլև տեխնիկական պարագաներ՝ կաղապարներ, պատրաստի առարկաների պատճեններ: Սովորական էր և վարպետների՝ տեղից տեղ տեղափոխվելը ու ժամանակավոր արհեստանոցներ բացելը ավելի բարենպաստ վայրերում:[301]

Այս հանգամանքներն էլ անշուշտ խանգարում, դժվարացնում են որոշել արտադրության վայրն ու ժամանակը:

Ինչ վերաբերում է Սիսիանի մյուս թասերին, ապա դրանք ևս կարող են պատրաստված լինել նույն կենտրոնում և նույն ժամանակներում (սղ.V,2-4, X,3.4):

Սկահակների խմբից առավել ամբողջական են չորսը (տր.՝ 16-16.2սմ, բարձր.՝ 9սմ, ոտքի տր.՝ 7.8-8.2սմ), որոնք իրարից տարբերվում են ոտքերի ձևերով: Դրանցից առաջինը, որն արտաքուստ պսակից ցած կրում է արամեական արձանագրություն, ունի աստիճանաձև սահուն անցումով, սնամեջ, գեղեցիկ ոտք (քաշը՝ 427.8գ, աղ.VI,1,2): Ներքուստ համակենտրոն շրջաններով (գծաքաշ) ընդգծված է հատակը: Երկրորդն ունի շեփորաձև ոտք, իսկ երրորդը առաջինի կրկնությունն է: Տարբերվում է միայն չափերով (տր.՝ 13.4սմ):

Սկահակները ևս նորություն չեն Հայաստանի համար: Կավե սկահակներ հայտնի են

---

[299] Այդ մասին տես ***Г.А. Кошеленко.***, ***A.Perkins***, The Art of Dura-Europos, Oxford, 1973. CA, 1976, № 2, c. 282.
[300] Античная художественная бронза, Каталог выставки, А., 1973, стр. 10.
[301] Այդ մասին գրականությունը տես ***К.В.Тревер***, Бактрийский бронзовый фалар с изображением Диониса, ТГЭ, Т. V, А., 1961, с. 102—104.

դեռևս ուրարտական ժամանակներից, իսկ հելլենիստական շրջանում դրանք դառնում են ավելի տարածուն ու գործածական: Պատրաստվում են ոչ միայն կավե և քարե, այլև թանկարժեք մետաղներից, ինչպիսիք մեր գտածոներն են: Հարատևում են մինչև մ.թ.ա. I դարի վերջը: Հետագա դարերում դրանք այլևս չեն հանդիպում:

Լկահակներից առավել ուշագրավը առաջինն է, որի արամեերեն արձանագրությունից իմանում ենք, թե ով է թաղված դամբարանում (Սյունիքի իշխանավորներից մեկը, թերևս բդեշիխը). պահպանված է անունը, և լրացուցիչ տեղեկություններ ենք ստանում Հայաստանում անտիկ շրջանի կշռային միավորների մասին (աղ.VI,2):

«Այս թասը պատկանում է Արախսզատին, արծաթի քաշն է 100 դրախմա...».[302] Արձանագրությունը ընթերցել է Ա.Գ.Փերիխանյանը: Արձանագրությունը հետաքրքիր է նրանով, որ հանդիպում են մի քանի նոր տերմիններ: Ըստ Փերիխանյանի՝ Ռամբակ (rambaka)-«թաս» տերմինը և Արախսզատ անունը միջին իրանական (պարթևական) և միջին մարական ծագում ունեն, արդյունք՝ Սյունիքի աշխարհագրական դիրքի, Մարաստանի հետ ունեցած էթնիկ և մշակութաբեգվական, պատմական կապերի: Գրության ձևով այն կապվում է հյուսիսմիջագետքյան արամեական արձանագրական ավանդների հետ:[303] Նման տառանշանների մուտքը Հայաստան կատարվել է մ.թ.ա. I դարում[304] Տիգրան II-ի օրոք: Նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության շնորհիվ Հայաստանի մշակութատնտեսական կապերը էլ ավելի ուժեղացան Ասորիքի ու Միջագետքի հետ: Նույն գրելաոճն ունեն նաև Արտաշատի I բլրից հայտնաբերված և մ.թ.ա. I դարին վերաբերող ապակե գդալի[305] և յագուրիտե պնակի[306] արամեերեն արձանագրությունները:

Ա.Փերիխանյանը նշում է, որ արձանագրության մեջ հիշատակվող Araxszat անունը թասի տիրոջ անունն է և հանդիպում է առաջին անգամ: Սիսիանի դամբարանի նյութերը, ինչպես վերը նշեցինք, մեկ անգամ ևս փաստում են այն մասին, որ չորս զորահրամանատարներից մեկը՝ արևելյան մասինը Սյունյաց իշխանն էր: Araxszat անունը մեկնաբանվում է «աստվածների կողմից պաշտպանվող» (охраняемым (богами), чье рождение под покровительством (богов¤, «աստվածների հովանավորության տակ ծնված»)", այդպես էին իրենց կոչում, անշուշտ, թագավորներն ու բարձրաստիճան իշխանավորները:

Ինչ վերաբերում է սկահակի քաշին, ապա արձանագրության հրատարակության ժամանակ այն վերականգնված չի եղել, և հաշվի է առնվել միայն թասի քաշը. 340 գրամ է: Հաշվարկվել է սասանյան մեկ դրախմայի չափով, որը մոտավորապես 4 գրամ է, իսկ չի բացառվում, որ թասն ունեցել է նաև ունկ-բռնակ, որի կշիռը սասանյան 100 դրախմայով հաշվարկելիս կազմում է մոտավորապես 380-400 գրամ:[307]

Մինչդեռ թասի կշիռը պետք էր հաշվարկել ոչ թե սասանյան, այլ պարթևական, դրախ-

---

[302] ***А.Г.Периханян***, Арамейская надпись на серебряной чаше из Сисиана, ИФЖ, 1971, № 3, с. 78-81, рис. 1, 2.
[303] Նույն տեղում, էջ 80, 81:
[304] ***Գ.Ա.Տիրացյան***, Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, ՊԲՀ, 1977, № 4, էջ 255-256:
[305] ***Ж.Д.Хачатрян***, Стеклоделие в Древней Армении, ИФЖ, 1975, № 1, с. 256, табл. I,10.
[306] ***Б.Н.Аракелян***, ук. соч., цвет. табл. I.
[307] ***А.Г.Периханян***, ук. соч., с. 80-81.

մայի համար ընդունված ատտիկյան կշռային համակարգով:[308]

Սկահակը վերականգնելուց, այսինքն՝ իրանը ոտքին միացնելուց հետո նրա քաշը դարձավ 427.8 գրամ: Հայտնի է, որ ատտիկյան դրախմայի միջինը տատանվում էր 4.26-4.32 գրամների միջև: Ուստի, եթե ընդունելու լինենք, որ ատտիկյան դրախմայի միջինը 4.29 գրամ է և հաշվի առնենք սկահակի մաշվածությունը, ապա սկահակե սկզբնական քաշը պետք է եղած լինի 429-430 գրամ: Հատկանշական է, որ վերոհիշյալ կիսագնդաձև թասերը և Սիսիանի դամիարանում հայտնաբերված արծաթյա ապաբանջանատիպ իրերը նույնպես պատրաստված են ատտիկյան կշռային սիստեմի համաձայն:[309]

Այս սկահակները ծառայել են իբրև ընպանակներ և թվագրվում են մ.թ.ա. I դարով: Սկահակների պսակների ձևերը, հատակն ընդգծող համակենտրոն շրջանները նման են վերոհիշյալ թասերին, իսկ ոտքերի նման ձևերը, ինչպես վերը նշեցինք, բնորոշ է հելլենիստական խեցեղենի և քարե սկահակների ձևերին: Նկատի ունենալով քննարկվող առարկաների ձևաբանական ընդհանրությունները համաժամանակյա կավե և քարե սկահակների ձևերի հետ՝ չի բացառվում, որ դրանք ևս պատրաստված լինեն նույն՝ սիրիա-փոքրասիական կենտրոններից որևէ մեկում կամ էլ Հայաստանում,[310] միաժամանակ կամ ժամանակային որոշ տարբերությամբ:

Այսպիսով, Հայաստանից հայտնաբերված թասերն ու սկահակները իրենց գեղագիտական արժանիքներով չեն գիջում այլ վայրերից գտնված անտիկ շրջանի արծաթե անոթներին: Անտիկ շրջանի մշակույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը, ընդգրկելով հելլենիստական Արևելքի գեղարվեստական ոլորտը, դարերի խորքից եկող իր մշակույթը հասցրել է զարգացման մի նոր, ավելի բարձր աստիճանի: Այդ են վեայում նաև մետաղե գեղարվեստական իրերը: Դրանց թիվը թեև մեծ չէ, բայց խոսուն է: Քննությունից ակնհայտ է, որ Հայաստանը ոչ միայն ներմուծել է բարձրարվեստ առարկաներ, այլև կազմակերպել է դեղարվեստական մետաղի տեղական արտադրություն:

Մետաղե գեղարվեստական կերտվածքները՝ ներմուծված թե տեղական, բնորոշում են հայ ազնվականության ճաշակը, գեղարվեստական հակումները: Այն տարբերվում էր տեղական, ավանդական, ժողովրդական արվեստից, բայց և իր նոր ամուծություններով ազդում էր տեղական հելլենիստական մշակույթի զարգացման ընդհանուր ուղղության վրա: Հայաստանի անտիկ շրջանի հուշարձանների, հատկապես Արտաշատի, Արմավիրի, Գառնիի և մյուս հնավայրերի պեղումների արդյունքները վկայում են անտիկ շրջանի, եատկապես մ.թ.ա. II-մ.թ.II դարերի հայ մշակույթի վրա հելլենական աշխարհի թողած խոր ազդեցության մասին: Հայաստանի այդ շրջանի մշակույթը շատ ընդհանրությունները ունի և հելլենիստական Արևելքի, հատկապես Սիրիայի ու Փոքր Ասիայի հետ: Այսինքն, նա մտնում է սիրիա-միջագետքյան, փոքրասիական հելլենիստական գեղարվեստական ընդհանուր արեալի ("коѝне") մեջ:

---

[308] *А.Н.Зограф*, Античные монеты, МИА, № 16, М.-Л., 1951, с. 38-55.
[309] Թասերի քաշն է 400.15 գրամ, 411.60 գրամ, սկպարանջաններինը՝ 272.20 գ.. 275.50գ, 293 գ.:
[310] *Ժ.Դ.Խաչատրյան*, նշվ. աշխ., էջ 285-287, աղ I 1-3, III 1:

Ապարանջաններ

Հատուկ խումբ են կազմում արծաթե ապարանջանները[311] (թվով հինգը, երեքն ամբողջական, երկուսը թերի (սղ.VII,1-4)), քաշերը՝ 272.20գ, 275.50գ, 293գ: Կշռային տարբերությունը պայմանավորված է մաշվածության, պահպանվածության աստիճանով: Հավանաբար դրանք բոլորն էլ կշռել են 300գ: Ապարանջանները ձևով քիչ օվալաձև են (11x8.5սմ), բաց ծայրերով: որոնք, աստիճանաբար հաստանալով, ավարտվում են ուղիղ կտրվածքով: հիմքում՝ ոճավորված առյուծագլուխներ: Պատրաստված են ձուլման եղանակով: Ողջ մակերեսը հարդարված է փորագիր գեղեցիկ զարդերով: Ռելիեֆ գոտիները գարդարված են երկրաչափական ցանցաձև, շեղանկյուն և բուսական՝ եղևնիների միջից դուրս եկող գարդագալարներով: Սրանք ոտքի ապարանջաններ են և մեծ տարածում են ունեցել Առաջավոր Ասիայում,[312] Կովկասում ու Այսրկովկասում:[313] Սինիանի դամբարանի ապարանջաններին իրենց ձևով՝ ուղիղ կտրվածք, ոճավորված առյուծագլուխ զարդեր, որոշակի նմանություն ունեն Տավուշի մարզի Չորաթան գյուղում պատահաբար բացված մ.թ.ա. Ի. երկրորդ կեսին պատկանող դամրարանի բրոնզե ապաբանջաններից երկուսը (երրորդը ներճկված է 9.5x10.3սմ, 9.5x11սմ):

Հայկական հերոսական էպոսում (Սասունցի Դավիթ) խանդութը ոտքերին կրում է ապարանջաններ. «Նա ոտքերին ուներ, ըստ սովորության, ոսկե ապարանջաններ, այնքան խոշոր ու լայն, որ մարդ կարող էր գլխով ու մարմնով դրանց միջով անցնել»:[314] Ոտքի արծաթե և բրոնզե ապարանջաններ հայտնաբերվել են Կոբանում,[315] Ցեբելդայի[316] մ.թ. I-IIդդ. դամբարաններում, որոնց գլխաձևերը և գույգ փորագիր գծերով արված շեղանկյունաձև գաբդերը նման են մերին: Դրանք հանդիպում են նաև Պոսուլսկի խմբին պատկանող սկյութական դամբարաններում,[317] որոնք բաժանվում են երեք խմբի և թվագրվում են մ.թ.ա. V դարով: Ապարանջանները սխեմատիկ ձևով պատկերված կենդանու գլուխներ ունեն: Այդ ապարանջաններն իրենց գուգահեռներն ունեն Կովկասի հուշարձաններից հայտնի ապարանջանների հավաքածուներում:[318] Ոտքի ապաբանջաններ գտնվել են և Մինգեչաուրի մ.թ.ա. II-Iդդ. կաբասային թաղումներից:[319] Հետագայում դրանք գործածությունից դուրս են գալիս և այլևս չեն հանդիպում Հայաստանի (Գառնի, Արտաշատ), Վրաստանի (Մցխեթայի) մ.թ. առաջին դարերի դամբարաններում[320]: Ձևով և գարդամոտիվներով Սիսիանի ապարանջաններին նման է Մին-

---

[311] *Ж.Хачатрян*, Художественные изделия из серебра эллинистического времени. II международный симпозиум по армянскому искусству. Сборник докладов, том I, Ер., 1978, с. 240, табл. 57, рис. 1.

[312] *N.P.Toll*, The excavations at Dura-Europos, Premilinary Report of the ninth season of work 1935-1936, part II, The Necropolis New Haven, London, 1946, p. 47, pl. XL (tomb 22), LVII (tomb 49).

[313] *Н.В.Пятышева*, Ювелирные изделия Херсонеса, конец IV века до н.э. - IV век н.э., М., 1956, с. 38, рис. 8.

[314] *Ս.Հարությունյան*, Հայ ժողովրդական վեպը (Կուլտուր. պատմական ակնարկ), «Սասնա ծռեր», Եր., 1977, էջ 626:

[315] МАК, т. VIII, 1900, с. 117, таб. LVI, 7.

[316] *Ю.Н.Воронов, В.А.Ющин*, Ранний горизонт в могильниках Цебельдинской культуры, СА, 1979, № 1, с. 196, рис. 1, 32, 33.

[317] *В.Г. Петренко*, Украшения Скифии VII-IIIвв. до н. э., Свод археологических источников (САИ), вып. Д4-5, М., 1978, с. 58, таб. 49, 1-4, 50, 1-7.

[318] *В.А.Ильинская*, Скифы днепровского лесостепного левобережья, Киев, 1968, с. 147.

[319] *С.М.Казиев*, Альбом кувшинных погребений Мингечаура, Баку, 1960, с. 25, таб. XXXVII8.

[320] *А.М.Апакидзе, Г.Ф.Гобедхишвили, А.Н.Каландадзе, Г.А.Ломтатидзе*, Мцхета, I, Тбилиси, 1958, с. 77, 78.

դեչաուրի կարասային թաղումներից գտնված մ.թ.ա. Iդ. թվագրվող մանյակը:[321] Ճիշտ նույնատիպ փորագիր զարդեր ունեն Դուրա-Եվրոպոսի դամբարաններում հայտնաբերված թևի արծաթե օձագլուխ ապարանջանները: Դամբարանը թվագրվում է մ.թ.ա. I - մ.թ. Iդդ.:[322]

Բացառված չէ, որ Սիսիանի ապարանջաններն ունեցել են զուտ դեկորատիվ նշանակություն և դամբարանում դրվել են իրրև գանձ, որովհետև դրանք շատ զանգվածեղ են և անհարմար գործածելու համար: Պերսեպոլիսի բարձրաքանդակներում, մեդացիների, սիրիացիների, սակերի և սոգդացիների ձեռքերին պատկերված են նմանատիպ խոշոր ապարանջաններ, որոնք իբրև հարկ են տանում աքեմենյան թագավորին:[323]

Բրոնզե ապարանջաններից մեկի բեկորը բավականին հաստ է և ունի շեղանկյուն կտրվածք: Զանգվածեղությունից և բացվածքի մեծությունից դատելով՝ այն ևս պետք է ոտքի ապարանջան եղած լինի: Շեղանկյուն կտրվածքով ապարանջաններ հանդիպում են Մինգեչաուրում:[324]

Գդալներ և շերեփ

Արծաթե գեղարվեստական իրերի թվին են պատկանում Սիսիանի դամբարանից հայտնաբերված փոքր շերեփն (թասը պակասում է) ու տարբեր չափերի գդալները: Դրանք պատրաստել են ձուլելու եղանակով, ապա ենթարկել լրացուցիչ մշակման:

Գդալները վեցն են, որոնցից մեկն ամբողջական է (երկ.՝ 16.1մ, քաշը՝ 57.27գ), իսկ մյուսները թերի են: Վերնամասում դրանցից գդալները ճկունորեն օվալաձև ծալված են և ավարտվում են թռչնի գլուխներով, մեկը վրա քանդակված է օձի (աղ.VIII,3), իսկ մյուսի վրա՝ բադի գլուխ (աղ.VIII,2): Գլուխները զանգվածեղ են, առանց մանրամասների:[325] Գդալներից մեկի պռչը վերին մասում քառակուսի հաստանում է, իսկ վրան փորագրված է ցանցաձև զարդ (աղ.VIII,5): Այն կարծես պատվանդան լինի թռչնի գլխի համար: Գդալներից հինգը խոշոր են, ձվաձև բերանով (աղ.VIII,4-6), մեկը՝ փոքր, շրջանաձև (տր. 2.2սմ (աղ.VIII,7)), ոչ խոր թասիկով: Վերջինս ոսկեջրած է:

Արծաթե և բրոնզե տարբեր չափերի գդալներ հայտնաբերվել են Արտաշատի ոլորների պեղումների ժամանակ: Արծաթե փոքր գդալ՝ օվալաձև թասիկով (3.2x2.1սմ) և սուր պռչով, գտնվել է օրինակ Արտաշատի առաջին բլրում (1972, 33), թվագրվում է մ.թ. I դարով:

Գդալները հանդես են գալիս մ.թ.ա. V դարում արևելամիջերկրածովյան շրջաններում: Դրանց բոլորի պռչերն ավարտվում են կենդանակերպ քանդակներով:[326] Մ.թ.ա. V դարին վերաբերող բադագլուխ գդալներ հայտնաբերվել են նաև Պասարգադայում:[327] Հելլենիստական, հատկապես հռոմեական շրջանում գդալները ստանում են կենցաղային լայն գործածություն:

---

[321] ***С.М.Казиев, Г.М.Асланов,*** О двух кувшинных погребениях, МКА, том II, Баку, 1951, с. 205, таб. II, рис. 9.
[322] ***N.P.Toll***, նշվ. աշխ., p. 46-47, pl. XL, tomb 22, LVII, tomb 49.
[323] ***E.Schmidt,*** Persepolis, vol. I, Chicago, 1953, p. 27_B; $32_{A, B}$; $37_{A, B}$; $43_{A, B}$.
[324] ***С.М.Казиев***, Альбом кувшинных погребений Мингечаура, Баку, 1960, с. 25, таб. XXXVII, 8.
[325] ***Ж.Хачатрян***, Художественные изделия из серебра эллинистического времени, II Международный симпозиум по армянскому искусству, Сборник докладов, т. I, Ер., 1978, с. 240, рис. 57, 6-8.
[326] ***D.M.Robinson***, Excavations at Olintbus. Metal and minor Miscellaneous finds, an original contribution to greek life Baltimore: Part X. The Johns Hopkins press: London. Oxford University Press, 1941, pl. L613.
[327] ***D.Stronach***, Excavations at Pasargadae. Third Preliminary Report, "Iran", vol. III, 1965, London, p. 33, pl. XII, a, b.

Գեղարվեստորեն ձևավորված շերեփներն ու գդալները իշխանական սեղանների շքեղ սպասքի անբաժան մասն էին: Հռոմեական շրջանում դրանք մատչելի էին նույնիսկ ոչ հարուստ ընտանիքների համար: Մեծ գդալներն (ligula կամ lingula) օգտագործվում էին ճաշերի և այլ ուտելիքներ համտեսելու համար, իսկ փոքրիկ շրջանաձև թասիկով գդալները (cochlear)՝ ձվեր ու կակղամորթներ ուտելու համար:[328] Դրանք կիրառվում էին և կոսմետիկայում, անուշահոտ քսայուղեր օգտագործելիս: Հելլենիստական ժամանակաշրջանի գդալիկ է գտնվել Արտյուխովյան կուրգանում:[329] Մ.թ. I դարի գդալներ հայտնի են Հունաստանից և Միջերկրականի արևելյան ափերից:[330] Մ.թ. II-IIIդդ. գդալների օգտագործումը դառնում է մասսայական՝ կրելով որոշակի փոփոխություններ, օրինակ՝ պոչերի ձևերը: II-IIIդդ. գդալներ հայտնի են Վրաստանից,[331] Ադրբեջանից[332] և այլ վայրերից:

Շերեփը, մասամբ թերի՝ թասը բացակայում է (պոչի երկ.՝ 14.5սմ), ավարտվում է այծի գլխով (աղ.VII,₁): Ամենայն մանրամասնությամբ տրված է կենդանու պատկերը, ընդգծված են անգամ անատոմիական մանրամասները: Թասին ագուցվող մասում պոչը հարդարված է աղեղնաձև ելուստներով:[333]

Մ.թ.ա. Iդ. շերեփներ Սիսիանի շերեփի նման[334] գտնվել են Աշվանում (Արևմտյան Հայաստան):[335] Ցավոք, դրանց պոչերի ծայրերը թերի են և դժվար է ասել, թե ինչպիսի տեսք են ունեցել:

Շերեփները, հավանարար, երևան են եկել մ.թ.ա. I հազարամյակի առաջին քառորդում: Փռյուգիական Գորդիոնից հայտնաբերված շերեփը վերարերում է մ.թ.ա. VIIIդ. վերջերին:[336] Շերեփների պոչերի քանդակներից ամենատարածվածը կարապի գլուխն է: Կարապ զարդանախշը հարգի էի Արևելքում: Ձևավորվել է մ.թ.ա. II հազարամյակում: Արևելյան ավանդույթների ետ այդ զարդանախշը ևս Սիրիայից անցնում է Փոքր Ասիա և Էտրուրիա: Հոնիական քաղաքներում և Հունաստանում այն արդեն հանդիպում է մ.թ.ա. VI դարում, իսկ հոռոմեական շրջանում դառնում է տիրապետող:[337] Ձանագան ձևավորում ունեցող պոչերով շերեփներ հայտնաբերվել են անտիկ աշխարհի տարբեր մասերում: Կարապի և բադի գլխով շերեփներ հաճախ են հանդիպում Հյուսիսմերձսևծովյան դամբարաններում:[338] Կարապի գլխով զարդարված մ.թ.ա. Vդ. արծաթե և բրոնզե շերեփներ (մ.թ.ա. Vդ.) հայտնարերվել են Չերկասսկի մարգում,[339] Արտյուխովյան կուրգանում,[340] որոնցից մեկն ունի հունարեն արձանագրություն՝

---

[328] Этот тип ложек упоминается в эпиграмме Марциала (XIV, 121).
[329] *М.И.Максимова*, Артюховский курган, Л., 1979, с. 88, рис. 30.
[330] *D.E.Strong*, Greek and Roman gold and sliver plate, London, 1966, fig. 32, a, b, c.
[331] *К.Мачабели*, Позднеантичная торевтика Грузии (по материалам торевтики первых веков нашей эры), Изд. "Мецниереба", Тбилиси, 1976, с.71-72, таб. 25; *А.Бохочадзе*, Исследование Настакийской археологической экспедиции Мцхетского района, Полевые археологические исследования в 1975г. (краткие сообщения), "Мецниереба", Тб., 1979, с. 45; Նույնի, Археологические раскопки в Агаяни и Дзалиси, Тб., 1981, с. 88, таб. XXXVI, 2.
[332] *Г.М.Асланов, Т.И. Голубкина, Ш.Г.Салыхзаде*, Каталог золотых и серебрянных предметов из археологических раскопок Азербайджана, Изд. АН Аз.ССР, Баку, 1966, с. 44, 45, таб. XIII, рис. 3.
[333] *Ж.Хачатрян*, նշվ. աշխ., էջ 241, նկ. 57, 3:
[334] *St.Mitchell*, Aşvan Kale, Anatolian Studies, vol. XXII, 1973, p. 123-126, fig. 6, 7.
[335] *St.Mitchell*, Aşvan Kale, Anatolian Studies, vol. XXII, 1973, p. 123-126, fig. 6, 7.
[336] *D.G.Mitten*, Classical Bronzes Catalogue of the Classical Coliecfion, Washington, 1975, fig. 41, a-c.
[337] *D.M.Robinson*, Excavations at Olynthus, part X, p. 194. Այդ մասին գրականությունը տես՝ ծանոթ. 25:
[338] *М.И.Максимова*, նշվ. աշխ., էջ 88; *А.И.Малюкова*, Поселение и могильник скифского времени у села Николаевка, М., 1975, с. 168.
[339] *Н.А.Онайко*, Античный импорт в Приднепровье и Побужье в VII-V веках до н. э., САИ, вып. Д1-27, М., 1966, с. 63, № 218, таб. IV, 2; Античная художественная бронза, Каталог выставки, Л., 1973, № 42.
[340] *М.И.Максимова*, նշվ. աշխ., էջ 88, նկ. 30:

«20 դրախմա», գուցեև շերեփի արժեքն է: Շան գլխով հարդարված մի շերեփ էլ հայտնի է Դնեստրովյան լիմանի ձախ ափից[341] (հելլենիստական շրջան): Հելլենիստական և հռոմեական շրջանի շերեփներ հայտնի են Պրիենայից,[342] Միրիսայից,[343] Իրանից՝ Մաջիթ-ի Սուլեյմանի մեծ տաճարից:[344] Քննությունը ցույց է տալիս, որ շերեփաթաթերն ու պոչերը ժամանակի ընթացքում ենթարկվել են փոփոխությունների: Վաղ հելլենիստական շրջանի շերեփաթաթերն ավելի տափակ են, ծանծաղ, իսկ ուշ հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջաններում դրանք դառնում են կիսագնդաձև և ավելի խորը: Հռոմեական շրջանում և մ.թ. առաջին դարերում շերեփների պոչերն ունեն օղակաձև ավարտ,[345] ավելի հարմար կախելու: Ուշ հելլենիստական շրջանում շերեփները պոչի և թասի միացման հատվածում վեր բարձրացող աղեղնաձև ելուստներ են ունենում:

Սիսիանի և Աշվանի շերեփները ձայնակցում են ուշ հելլենիստական շրջանի բադագլուխ, կարապագլուխ շերեփներին,[346] որոնք, ենթադրվում է, որ սիրիական և փոքրասիական ծագում ունեն: Սիսիանի գդալներն իրենց ձևերով չեն տարբերվում հռոմեականներից: Ամենայն հավանականությամբ, Սիսիանի շերեփն ու գդալները ևս սիրիական կամ փոքրասիական հանրահայտ կենտրոններից որևէ մեկի արտադրանքն են և թվագրվում են մ.թ.ա. I դարի երկրորդ կեսով, Շերեփները կենցաղում ունեցել են լայն գործածություն կաթսաներից հեղուկ վերցնելու համար, ծիսական արարողությունների, զոհաբերությունների[347] ժամանակ իրև չափի միավոր: Թաղման ծիսակարգի համաձայն՝ հոգեհացի գինին բերվել է երկկանթանի կարասներով, ապա բրոնզե ու կավե շերեփներով կարասներից լցվել գավաթները: Սիսիանի շերեփն ու գդալները լրացնում, հարստացնում են անտիկ աշխարհի, ուշ հելլենիստական շրջանի գեղարվեստական մետաղի մեր հավաքածուները: Դամբարանից հայտնաբերվել են նաև արծաթե թիթեղով պատած մի քանի բեկորներ, որոնց ինչ լինելը դժվար է որոշել (աղ.IX,1-3): Դրանցից մեկն արծաթե անոթի կափարիչի ձևավոր կա՞նթ է՝ գնդաձև գլխիկով: Միջուկը երկաթից է, պատած արծաթե բարակ թիթեղով (պահպ. մասի բարձ.՝ 5սմ է): Նույն տեխնիկայով երեք գլանաձև ծողերի մասերն ունեն հորիզոնական առևակրսներ (պահպ. մասի երկ.՝ 11.5սմ, տրամ.՝ 1.5սմ, 12.5սմ, տրամ.՝ 1.5սմ): Խմբի հաջորդ բեկորը՝ հորիզոնական առևակոսներով, նախորդներից տարբերվում է ծայրին եղած տափակ թիթեղով, որը գամերով (պահպանվել են անցքերը) ամրացված է եղել ինչ-որ անոթի:

---

[341] ***А.И.Мелюкова***, նշվ. աշխ., էջ 168, նկ. 43, 12:
[342] ***Theodor Wiegand*** and ***Hans Schrader***, Pnene, Berlin, 1904, Abb. 492.
[343] ***G.M.A.Richter***, Catalogue of Greek Antiquities Dumbarton oaks collection, Cambndge, 1956, p. 44, pl. XIX A.
[344] ***R.Ghirshman***, aves la collaboration de M-me F. et ***H.Gasche.*** Terrasses sacrées de Bard-e Nechande et Masjid-i Solaiman. L'Iran du Sud-Ouest du VIIIe s. ann. ére au Ve s. de n. ére, Memones du la Délégation archeologique en Iran, t. XLV, Mission de Suslane, Pans-London, 1976, pl. 52, 262.
[345] ***Евг.Прицик***, Новые Кавказские клады, Материалы по археологии России, № 34, Петроград, 1914, таб. I, 7,; ***К.Мачабели***, ук. соч., с. 73, рис. 24; ***R.Ghirschman***, Begram, Recbercber-archaeologiques et historiques, Le Caire, 1946, pl. XVI, 16, XXVII, B.G. 242.
[346] Տես նաև՝ ***A.Greifenhagen***, Romischer Sllber becher. Yahrbucb des Deutscben Arcbaologischen Instituts, Bd. 82, 1967, pl. XVII, 128; ***D.E.Strong***, նշվ. աշխ., նկ. 21, a, b; ***A.de Ridder***, Les bronzes antiques du Louvre, Tome II, Pans, 1915, pl. 108, 3064, 3069, 3073; ***D.G.Mitten***, Classical Bronzes, Catalogue of the Classical Collection, Washington, 1975, fig. 41 a, b, c; ***S.Tassman***, La valsselle de bronze, romalne et Provinclale au musee des antiquités nationales. XXIXe supplément a "Gallia", E'dltions du centre national de la recherche sclentifique, Pans, 1975, s. 19, pl. XI, 46, 47; L'art du metal en Aquitaine des origines au VIIe Slecle Restauration et conservation Musee d'Aquitaine Bordeaux, 1980, № 154; ***S.Boucher***, նշվ. աշխ., № 374, 375:
[347] ***D.M.Robinson***, Excavation at Ollntus, Part X, p. 194.

ԲՐՈՆԶԵ ՍՊԱՍՔ

Գավաթ

Սիսիանի դամբարանի եզակի գտածոներից է ձևավոր (арбалетовый) կանթով գավաթը (մասամբ թերի, բարձր.՝ 11.5սմ, պս.՝ 6.5սմ, հատ. տր.՝ 5.7սմ), պատրաստված է բրոնզե բարակ թիթեղից, կռելու և ծուլելու (կանթի) եղանակով (աղ.$X_{,1,2}$): Գավաթն ունի երկկոնաձև իրան, դեպի դուրս լայնացող պսակ, հարթ հատակ, արտաքուստ զարդարված է փորագիր համակենտրոն չորս շրջաններով; Ուշագրավ է հատկապես աղեղնաձև ուղղահայաց միացրած բռնակը, որը նման է խաչի: Այն աջ ու ձախ գնացող թևերով կպած է պսակին: Կանթի վերին մասը ձևավորված է դիմապատկերով՝ տեղադրված թևերի կենտրոնում: Դիմագծերը ընդհանրացված են: Մաշվածության պատճառով դրանք աղոտ ու անորոշ են: Հագիվ նշմարվում են երկար քիթն ու աչքերը: Գլխին կապած ռելիեֆ գոտին՝ ելուստով; թողնում է սաղավարտի տպավորություն: Ստորին մասում կանթն ավարտվում է կիսանդրիով; Քանդակը ներկայացնում է կանոնավոր դիմագծերով; կարճ մորուքով տղամարդու, որի սաղավարտի տակից դուրս են եկել ալիքաձև մազերը: Տղամարդու ուսերին նկատելի են հագուստի ծալքերը: Գավաթի նման մի կանթ 1983թ. հայտնաբերվել է Արմավիր մայրաքաղաքի արևմտյան թաղամասի (ագարակի) վերին շերտում:[348] Կանթի ներքևի կիսանդրին նույնն է, ինչ որ Սիսիանինը, իսկ վերին քանդակը մի փոքր տարբերվում է: Երկկոնաձև գավաթներ հայտնի են անտիկ աշխարհի մի շարք հնավայրերից և պահվում են տարբեր թանգարանների հավաքածուներում: Դրանք չափերով իրարից քիչ են տարբերվում: Թվագրվում են մ.թ.ա. II-Ադ. և համարվում են իտալիկյան:[349] Կամպանում գտնված նմանօրինակ գավաթներ պահվում են Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում,[350] Լուվրում,[351] Էրմիտաժի անտիկ բաժնում (Բոտկինի՝ Инв. № В. 1967 և Կամպանի հավաքածուներում, Инв. № В. 565, В. 611): Նմանատիպ գավաթներ հայտնի են և մերձկուբանյան շրջաններից՝ Դահովսկայա ստանիցայից,[352]

---

[348] ***Ժ. Խաչատրյան***, Հայաստանում հայտնաբերված հռոմեական մետաղյա առարկաներ, ԼՀԳ, 1984, № 10, էջ 71-73, աղ. I, 1; ***Գ.Ա. Տիրացյան, Ի.Ա. Կարապետյան***, Արմավիրի 1983-1984թթ. պեղումները, ՊԲՀ, 1985, № 4, էջ 226, նկ. 7:

[349] ***H.Willers***, Weue Untersuchungen über die römische Bronzeindustrie von Capua und von Niedergermanien, Hannover und Leipzig, 1907, s. 14, 19, Abb. $12_{,5.7}$; ***H.Y.Eggers***, Der römische Import im freien Germanien, Bd. I-II, Hamburg, 1951, s. 123, Taf. $11_{,122}$; ***Д.Б.Шелов***, Римские бронзовые кувшины и амфоры в восточной Европе, СА, 1983, № 4, с. 63-64, рис. 1, 6.

[350] ***G.M.A.Richter***, Greek, Etruscan and Roman bronzes, New York, 1915, p. 195, pl. 512, 2703, 2713.

[351] ***A.de Ridder***, Les bronzes antique du Louvre, t. II, Pans, 1915, pl. 98.

[352] ***Б.В. Лунин***, Серебряная чаша с рельефными изображениями и греческой надписью и стеклянная чашка из находок у станицы Даховской, "Известия Ростовского областного музея краеведения", вып. 2, Ростов-на Дону, 1940, с. 27-29, 33 и сл.

Կալինովսսի (Վոլգոգրադի մարզ) սարմաթական դամբարաններից:[353] Սակայն չափերով ու կանթերի քանդակներով Սիսիանի գավաթը սերտորեն առնչվում է Կոբանյան (Հյուսիս-Օսեթական ԱՍՍՀ) դամբարաններից[354] գտնված նմուշների հետ:

Սիսիանի գավաթը հարակից նյութերով, դրամական գտածոներով (Որոդես II-ի արծաթե դրամը) թվագրվում է մ.թ.ա. Ի դ. կեսերով, նույն ժամանակին պետք է պատկանի և աբմավրոյան գտածոն իր կանթով,

Վերոհիշյալ զուգահեռների հիման վրա կարելի է վստահորեն ասել, որ Սիսիանի և Արմավերի գավաթները ևս հարավրտալիկյան ծագում ունեն և չի բացառվում, որ պատրաստված են Կապուայում՝ գեղտրվեստսկան մետաղի այդ հանրահայտ կենտրոնում:

Հռոմի արևելյան քաղաքականության շնորհիվ մ.թ.ա. II-I դարերում Հունաստանի, Փոքր Ասիայի, Սիրիայի և Եգիպտոսի մետաղագործական բոլոր կարևոր կենտրոնները ընդգրկվեցին հռոմեական մշակույթի ազդեցության ոլորտ: Ոչ միայն յուրացվեցին այդ կենտրոնների հաուստ փորձն ու ավանդույթները, այլև ստեղծվեցին նորերը: Այդ արհեստանոցների արտադրանքը հարմարեցվեց հռոմեացիների ճաշակին:

Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում լայնորեն տարածվեցին բրոնզե արձանիկներն ու գեղարվեստական բարձրաճաշակ կենցաղային առարկաները:[355]

Հռոմեական վարպետները, յուրացնելով հունական գեղարվեստական մետաղագործության մշակած տեխնիկան, հնարները, կուռակված փորձը, առտնին գործածության տարաբնույթ առարկաները, սկսեցին հարդարել փոքրաքանդակ պատկերներով:

Գեղարվեստական բրոնզի արտադրության գործում մ.թ. I-II դարերում առաջնությունը պատկանում էր Հարավային Իտալիայի մետաղագործական արհեստանոցներին: Տարենտը հայտնի էր իր տորևտինայով, Բրունդիզին՝ բրոնզե հայելու արտադրանքով, իսկ Կապուան՝ իր զարդագեղ բրոնզե սպասքով, որի ծաղկման շրջանը մ.թ. I դարն է, մինչև Պոմպեյի կործանումը[356] (մ.թ. 79թ.): Հռոմեական գեղարվեստսկան և կենցաղային իրերի ու առարկաների արտահանումը հեռավոր երկրներ նպաստեց անտիկ ավանդույթների լայն տարածմանը: Սիսիանի գավաթը հայ-հռոմեական մշակութային սերտ կապերի արտահայտություններից մեկն է նյութական մշակույթի ասպարեզում: Հայաստանում հայտնաբերված իտալիկյան նմուշ-գտածոների թիվն առայժմ մեծ չէ: Դրանք եզակի օրինակներ են՝ գտնված Արտաշատում: Դրանցից է դամբարանադաշտում հայտնաբերված բրոնզե դիմաքանդակը,[357] որն ամրացված է եղել բրոնզե վառարանի վրա: Դիմակը պատկանում է ստրուկներին վերագրվող դիմակների թվին և թվագրվում է քիչ ավելի ուշ, քան գավաթը, օգոստոսյան շրջանով: Այն Հայաստան է

---

[353] ***В.П.Шилов***, Калиновский курганный могильник, МИА, № 60, Москва, 1959, с. 484, рис. 57, 3; ***В.П.Шилов***, Южноитальянские сосуды Калиновского могильника, Сообщения Гос. Эрмитажа, Ленинград, 1973, XXXVI, с. 34; Античная Художественная бронза, Каталог выставки, Ленинград, 1973, № 251.

[354] ***П.С.Уварова***, Могильники Северного Кавказа, МАК, Том VIII, 1900, с. 85, рис. 81; ***В.В.Кропоткин***, Римские импортные изделия в Восточной Европе (IIв. до н.э. - Vв. н.э.), САИ, вып. Д 1-27, М., 1970, с. 23, 94, рис. 57_3, 60_6; ***М.П.Абрамова***, Памятники горных районов центрального Кавказа рубежа и первых веков нашей эры (по материалам Северной Осетии и Кабардино-Балкарии), Археологические исследования на Юге Восточной Европы, сб. ст., М., 1974, с. 16, 17, рис. III_{32}, рис. XII.

[355] Античная художественная бронза, с. 82.

[356] Ук. соч., с. 84.

[357] ***Ժ.Դ. Խաչատրյան***, Արտաշատ II, էջ 93, տախտ. XXVII_4:

հասել առևտրական ճանապարհով կամ հռոմեական զորքի միջոցով: Մյուսը Արտաշատի V ոլրից հայտնաբերված, մարդու բնական չափերից մեծ, բրոնզե արծանի մասեր են՝ ձախ աչքը, ճակատի ու քթի հատվածով, կրակր լեզվակների ձևով մշակված գլխի մագափնջերով ծածկված բեկորներ: Դրանք թվագրվում են մ.թ.ա. Iդ. երկրորդ կեսով:[358]

Կաթսաներ, թասեր և այլ առարկաներ

Սիսիանի դամիարանից բրոնզե անոթները Հայաստանի հելլենիստական շրջանի եզակի գտածոներից են: Դրանցից մեկը ոչ մեծ չափերի կաթսա է՝ քիչ սեղմված գնդաձև իրանով, երկաթե, գրեթե օղաձև, երկու բռնակով (բարձր.՝ 24.4սմ, ուռուցիկ մասի լայնությունը՝ 27սմ, պսակր տրամ.՝ 16սմ, բռնակր հաստ.՝ 1սմ, օղի տրամ.՝ 2.2սմ): Դատելով կլոր հատակից և օղաձև կանթերից՝ կաթսան ունեցել է օղակների մեջ մտնող ծայրերով (կենդանակերպ) կրսակլոր բարձր բռնակներ (աղ. $X_{,6}$), ինչպես ուրարտական և ասորեստանյան (մ.թ.ա. VIII-VIIդդ.) արծաթե և բրոնզե դույլերը:[359] Կաթսայի թիթեղը բավականին բարակ է և սեղմելիս փոսիկներ են առաջացել: Նմանատիպ պղնձե մի կաթսա հայտնի է Կուբանից, Ասյկոպից 22կմ հեռավորության վրա բացված Կուրջիպի կուրգանից:[360] Այն ևս ունի վզին ամիացված օղակներ: Սիսիանի կաթսան կանթերով նման է Կերչում հայտնաբերված (մ.թ. IIIդ.) աբծաթե գեղակերտ կաթսային: Ակն ունի բարձր կիսակլոը բռնակ:[361]

Բրոնզե երկրորդ անոթը ուղղահայաց պատերով, հարթ հատակով թաս է (բարձր. 8.5սմ, պսակր տրամ.՝ 9սմ, ուռուցիկ մասի լայն.՝ 17սմ, բեբանի տրամագիծը՝ 13.5սմ) (աղ.$X_{,7}$): Հայաստանից հելլենիստական շրջանի նման թասեր մեզ հայտնի չեն:

Հայաստանը իբրև հնագույն պղնձագործության երկիր, հայտնի է անհիշելի ժամանակներից. մ.թ.ա. IV հազարամյակի վերջերից իբրև այդպիսին բազմիցս հիշատակվել է օտար մատենագիրների կողմից: Դեռևս մ.թ.ա. III հազարամյակում, Հայաստանի պղնձի և արծաթի հանքերը հումք են մատակարարել մի կողմից Հյուսիսային Կովեասին և նբանից հյուսիս[362] ընկած երկրներին, մյուս կողմից՝ Միջագետքին:[363] Հայաստանի տարածքում հայտնաբերվել են մ.թ.ա. III-II հագարամյակների պղնձե, բրոնզե մեծաքանակ առարկաներ, այդ թվում բրոնզե խոշոր կաթսաներ,[364] հարդարված մարդու, ցլի գլխի և այլ քանդակներով վահաններ,

---

[358] *Ж.Д. Хачатрян*. Новые памятники античного искусства из Арташата, ВОН, 1996, № 1, с. 116, рис. 2, 3.

[359] Edited by Rivka Merhav. Urartu a metalworking center m the first millenium B.C.E., Yerusalem, 1991, p. 214-220. fig.4, s, 19-22, 25-26:

[360] *Л.К.Галанина*, Курджипский курган, Ленинград, 1980, с. 34-35, рис. 12, 13; катал. № 15.

[361] *В.В.Кропоткин*, Римские импортные изделия в восточной Европы (II в. до н.э.-V в. н. э.), М., 1970, рис. 49, САИ Д1-27.

[362] Arménie. Trúsors de l'Arménle ancienne de ongins au IVᵉ slecle, Pans, 1966, p. 12-17, № 33, 34-38, 40-55, 83-94; *А.Калантарян, А.Пилипосян, У.Мелконян*, Среднебронзовое погребение Ошакана, "Археология, этнология, фольклористика Кавказа", Международная научная конференция, Сборник кратких содержаний докладов, 2004, с. 69-71.

[363] *Բ.Գ. Մելքումյան*, Հայաստանի պղնձարդյունաբերության պատմություն, Երևան, 1972, էջ 12:

[364] *Б.Б.Пиотровский*, Исскуство Урарту VIII-VIвв. до н.э., Ленинград, 1962, с. 56-63, рис. 32-37; Urartu, a metalworking, centr in the First Millenium W.C.E., Edited by Rivka Merhav, Yerusalem, 1991, p. 228-236, fig. 7, 30a-b, 39.

սաղավարտներ, կահույք, աշտանակներ[365] և այլն: Սարգոն II-ի՝ մ.թ.ա. 714թ. արշավանքի ժամանակ Մուսասիրից տարած ավարի ցուցակում գրանցված են նաև բրոնզե բազմաթիվ առարկաներ, այդ թվում կաթսաներ. ***"607 медных сосудов, тяжелых и легких, медных купальных лоханей... 3 тяжелых медных котла, берущих по 50 мер воды. 1 большой котел, берущий 80 мер воды, с большим медным ковшом к нему, который цари Урарту при жертвоприношении перед Халди наполнили жертвенным вином".***[366]

Պղնձագործական ավանդույթները շարունակվեցին և վաղ հայկական դարաշրջանում:[367] Հելլենիստական շրջանում պղնձագործությունը, հարստանալով դարաշրջանի նորամուծություններով, տեխնիկական նվաճումներով և դրանք ստեղծագործաբար ներդնելով արտադրության մեջ, բարձրացավ զարգացման նոր աստիճանի: Կիրառության մեջ մտավ գլանման լիսեռը, որը հեշտացրեց թիթեղի ստացումը, լայն տարածում ստացավ խառասի հաստոցի (դազգահի) կիրառումը: Այն վաղուց էր օգտագործվում փայտամշակության մեջ: Կատարելագործվեց նաև ձուլելու տեխնիկան: Դրա փայլուն վեայությունն են Երևանի և Սիսիանի դամբարանների ձևավոր ոտքերով կահույքը, ոտքեր ձուլելու Արտաշատի գիպսե կաղապարը, քանդակազարդ աշտանակները, գեղարվեստական մետաղի մյուս գտածոները: Արտաշատում հայտնաբերվել է բրոնզե ուղղահայաց իրանով, հարթ հատակով, ծանծաղ փոքրաչափ թասիկ, որի դուրս լայնացող պսակին ամրացված է երկարապոչ ծովածիուկի ոճավորված արձանիկ:[368] Ուշագրավ են նաև բրոնզե փոքրիկ ուղղանկյուն զարդատուփը (шкатулка), կափարիչին րանալու անցքով,[369] եղջերուի բրոնզե արձանիկի գլխին նստած արծվաքանդակը[370] և այլն: Նյութերի քննարկումից ակնհայտ է, որ հայ արհեստավորներին հասու են եղել մշակման տեխնիկական և տեխնոլոգիական այն հնաբները, որ կիրառել են պղնձագործները՝ կռում, դրվագում, ձուլում, դրոշմում, եռակցում, դուրգամում, կորգանում մոմի կորաայան եղանակ, միափեղկ, երկփեղկ, եռափեղկ կաղապարների մեջ ձուլելու, հղկելու, կոկելու և այլն: Հարդարման և գեղազարդման գործընթացում կիրարկվել են փորագրումը, ցանցահյուսը, հատիկազարդը, քանդակազարդը և այլն:

Սիսիանից հայտնաբերվել է նաև խորը, լայնաբերան բրոնզե կաթսայի վերին մասը, որի պսակը դեպի դուրս է լայնանում (պսակի տրամ.՝ 15սմ, պահպ. մասի բարձր.՝ 9սմ, պսակի լայն.՝ 1.5սմ) (աղ.X,5): Սիսիանի բրոնզե կաթսաներն ու թասերը անտարակույս պատրաստվել են Հայաստանում:

Բրոնզե իրերի խմբին են պատկանում նաև փայտե մեծ արկղի տապարաձև, կիսակլոր ծխնիների կեսերը (երեք հատ, բրոնզի հաստ.՝ 0.5սմ, երկ.՝ 5սմ, լայն.՝ 9.3սմ): Դրանց վրա պահպանվել են տախտակի մասերը (հաստ.՝ 2սմ), որոնց երեքական գամերով ամրացվել են

---

[365] ***Б.Б.Пиотровский,*** Ванское царство (Урарту), М., 1959, с. 164-181, рис. 26-44; Նույնի, Искусство Урарту, с. 66-72, рис. 38-41.
[366] ***Б.Б.Пиотровский,*** Исскуство Урарту, с. 36-37.
[367] Arménie, № 152-159:
[368] ***Žores D.Khachatrian***, Artaxata capitale dell' Armenia antica (II sec. A.C.-IV sec. D.C.), Ai Piedi dell' Ararat Artaxata E l'Armenia Ellenistico Romana, a cure di Antonio Invernizzi, Torino, 1998, Fig. 75.
[369] Նույն տեղում, նկ 74:
[370] ***Ժ.Դ.Խաչատրյան***, Արծվի սարքեր երիտասարդներով կնքադրոշմներ, գեմաներ և քանդակներ, ՊԲՀ, 2003, № 2, աղ. II,1-4, III,1,2:

ծխնիները: Երևում են ծխնիների երկու կեսն իրար միացնող երկաթե լարի մնացորդները: Ծխնիները մեգ հասած հելլենիստական շրջանի այդ կարգի միակ գտածոներն են (աղ.XI,2):

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում տարբեր չափերի բրոնզե զանգակները (3 հատ)՝ կախիչ օղերով: Օղերը և լեգվակները երկաթից են: Զանգակների պատերը բավականին հաստ են (աղ.XIII,2): Երեքն էլ թերի են (պահպ. մասի բարձր.՝ 6սմ, երկիորդինը՝ 8.4սմ, տրամ.՝ 6.7սմ): Բրոնզե տարբեր չափերի զանգակների գործածությունը հայտնի է տակավին հնագույն ժամանակներից, այդ թվում ուրարտական,[371] հետուրարտական: Դրանք կախվել են ձիերի վզից, օգտագործվել գանագան ծիսակատարությունների ժամանակ: Պերսեպոլիսի բարձրաքանդակներում (մ.թ.ա. VI-Vդդ.) խորեգմցու տարած ձիու վզից կախված է խոշոր զանգակ:[372] Բ.Ա.Լիտվինսկին ազգագրական նյութերի հիման վրա նշում է զանգակների աղմուկի նշանակությունը ծիսական, կիրառական արարողությունների ժամանակ և դրանց կապը գերբնական ուժերի հետ:[373] Այ-Խանումում՝ որմնախորշերով տաճարում (մ.թ.ա. 240-145թթ.), հայտնաբերվել է բրոնզե չորս զանգակ:[374]

Սիսիանի դամբարանից ունենք բրոնզե երկու փոքրիկ թիակ (որոնցից մեկը՝ թերի, մյուսը՝ ամբողջական երկ.՝ 2սմ, լայն.՝ 0.8սմ (աղ.IX,5)), թիակները գլանաձև պոչի տափակ մասին սիանալու հատվածում զարդարված են առևակոսներով: Թիակները մեծ տարածում և գործառություն ունեին անտիկ շրջանում: Գտնվել են անտիկ աշխարհի տարբեր հատվածներում:[375] Հայաստանում դրանք հայտնի են Արտաշատից, Գառնիից,[376] Մինգեչաուրից[377] և այլ վայրերից: Սիսիանի թիակներից ամբողջականը նման է Գառնիի հելլենիկտական շրջանի թիակներից մեկին,[378] իսկ թերին՝ մյուսին:[379]

Թիակները սովորաբար գործածվում էին սրվակներից և կավե փոքրիկ անոթներից քսայուղեր, օծանելիք վերցնելու համար: Գառնիի 123 դամբարանի թիակը գտնվել է փոքրիկ անոթի հետ: Իսկ մ.թ. առաջին դարերում թիակներ համեմատաբար քիչ են հանդիպում:

Ենթադրվում է, որ դրանք օգտագործվել են նաև որպես բժշկական դեղդիրներ (Spathomela):[380] Սակայն Գառնիի և Սիսիանի գտածոները ծառայել են քսայուղեր հանելու համար:

---

[371] Urartu - A Metalworking Centr, p. 71, 88, № 20, 45; 56-61 (մ.թ.ա. VIII-VIIդդ.):
[372] ***R.Ghirshman***, Perse, Proto-iraniens, Mèdes, Achéménides, Paris, 1963, p. 184, fig. 231.
[373] ***Б.А.Литвинский,*** Древние кочевники "Крыши мира", Москва, 1972, с. 69-71, таб. 24, 27, 31.
[374] ***H.P.Francfort,*** Fouilles d'Ai Khanoum, III; Le sanctualre du temple a niches indetées. 2.- Mémones de la Délégation archeologique francise en Afghanistan, (MDAFA), Paris, 1984, t. XXVII, pl. 2, № 19 et 17; tab. 20, 16-19; ***И.Т.Кругликова,*** Дильберджин, Храм Диоскуров, Москва, 1986, рис. 22, 1-16; 23, 12-16.
[375] ***Gladys R.Davidson,*** Connth, vol. XII, The minor ohjects, Prenceton, 1952, pl. 83, № 1350, 1351, 1355, 1356
[376] Гарни, V, с. 101-102, рис. 12_1, 39_1, таб. XX_4.
[377] ***Е.И.Гумель,*** Археологические очерки, Баку, 1940, с. 159, фиг. 5, 15.
[378] Гарни, V, նկ. $12,_1$:
[379] Гарни, V, նկ. 11:
[380] ***С.И.Финогенова,*** Античные медицинские инструменты, СА, № 1, 1967, с. 152, рис. 2, 132.

ԽԵՑԵՂԵՆ

Տեղադրված են դամբարանի ներսում և արտաքուստ՝ դամիանայխցի վրա: Դրանք միջին մեծության, ձգված իրանով, հարթահատակ, բերանի հատվածում ղեպի դուրս լայնացող պսակով կարասի բեկորներ են, գնդաձև իրանով ջրամաններ (երկուսը), ջնարակապատ տափաշշեր (կոկին երկուսը) քառանկյուն կտրվածքով ջրակ և այլն:

Ջրամաններն ու տափաշշերից մեկը ընկած են եղել ծիսական կոակո մեջ, որից մասամի այրվել են, միոտվել, ստացել թուխ գույն (աղ. XII, 1,2), մասնակիորեն ձևափոխվել (տափաշիշը և ճրագը): Թեժ կոակոց խաթարվել են ու արդյունքում կարասի բեկորներն իրար լավ չեն կպչում:

Ուշագրավ են ջնարակապատ տափաշշերը (բարձր.՝ 14,7-14, 4 սմ): Պատրաստված են ղեղնավուն մանրահատիկ կավից, ձեռածեփ: Երկու կեսերը առանձին-առանձին ծեփելուց հետո, ներճկված ժապավենով միացրել են իրար, ապա տեղադրել վիզը (աղ. XII, 3,5): Անոթներից մեկի վիզը գլանաձև է, ղեպի դուրս լայնացող ներճկված պսակով (տր.՝ 4 սմ), իրանը՝ երկու կողմից ուռուցիկ: Ունկերը նեղ են կպած իրանին, ջնարակը՝ խամիած երկնագույն, տեղ-տեղ թափված: Ուռուցիկ կողերը հարդարված են ակոսավոր գոտիներով, Մյուս տեսփաշիշն ունի միակողմանի ուռուցիկ իրան, կենտրոնում՝ գույգ-գույգ համակենտրոն ակոսավոր շրջաններ, շեփորաձև վիզ, լայն կանթեր ուսերի վրա: Ջնարակը կանաչավուն, հաստ շերտով, համաչափ:[381] Հայաստանում հայտնի են Արտաշատից, Արմավիրից և այլ վայրերից:[382] Դրանցից ամենախոշորն ու ուշագրավի Արտաշատի առաջին բլուրում գտնվածն է (բարձր.՝ 24 սմ): Իսկ չորրորդ բլուրում գտնված տափաշիշը (բեկորային) պատրաստված է տեղական դարչնագույն կավից, մոխրագույն ջնարակապատ հենքով, նկարազարդված կապտականաչավուն ջնարակե գոլորշի ժապավեններով,

Ջնարակած տափաշշի հիանալի մի օրինակ հայտնաբերվել է Արտաշատի VIII բլրում (19մ/քառ. 1980թ. հորից): Այն օվալաձև տեսք ունի, իսկ սեղմված կողերին՝ կենաց ծասի ռելիկֆ պատկերներ (չորս): Պատրաստված է կաղապարի մեջ սեղմելու եղանակով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ջնարակած խեցեղենի արտադրությունը Հայաստանում սկսվել է մ.թ.ա. II դարում և լայն տարածում ստացել մ.թ.ա. I - մ.թ. IIդդ., կապված Հայաստանում ապակեգործության զարգացման հետ: Հայաստանից գտնված ջնարակած խեցեղենը առավելապես կոկնում է տեղական ոչ ջնարակապատ անոթների ձևերը,

---

[381] ***Ժ.Դ.Խաչատրյան***, Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը, ՊԲՀ, 1977, № 3, էջ 184, 185, աղ. I, 4, 5:
[382] Նույն տեղում, էջ 183-194, աղ. I-V:

պատրաստված է կիկին տեղական դարչնագույն և դեղնավուն, ավազախառն կավից: Ձնաձած առաջավորասիական կենտրոնների ջնարակած խեցեղենին ևս հատուկ են գունավոր գարդերը, սակայն Արտաշատի ջնարակած խեցեղենի գունագեղ գարդեղը առավել տիպական են տեղական խեցեղենին, հատկապես շրջանաձև գաղդերը: Արտաշատը Հայաստանի անտիկ շրջանի ջնարակապատ լավագույն խեցեղենի արտադրության խոշոր կենտրոններից մեկն էր:

Ձնարակած տափաշշեր հայտնի են Առաջավոր Ասիայի շատ հնավայրերից:[383] Դրանք տարբեր չափերի են (5.8 սմ-ից մինչև 29սմ) և ունեն հավասարապես սեղմված կամ միակողմանի ուռուցիկ կողեր:[384] Սիսիանի տափաշշերն իրենց ձևերով ավելի շատ կապվում են Սելևկիայի արտադրանքին (մ.թ.ա. I դար) և կարող են ներմուծված լինել այնտեղից: Ծառայել են որպես օծանելիքի տարա:

Խեցեղեն մյուս անոթները գնդաձև իրանով, երկեանթանի, թուխ, փայլեցրած մակերեսով ջրամաններ են՝ պատրաստված սև ու սպիտակ ավազախառն կավից (մեկի բարձր. 29սմ, պս. տր.՝ 10.4սմ, մյուսինը՝ բարձր.՝ 27սմ, պս. տր.՝ 8սմ): Ունեն դուրս թեքված կլորավուն պսակներ:

Հայաստանում գնդաձև ջրամաններ հայտնաբերվել են Աղմավիրում, Արտաշատում, Վայքի Մարտիրոս գյուղում, Դվինում[385] և վերաբերում են մ.թ.ա. I դարի երկիրորդ կեսին:

Հելլենիստական Հայաստանում մ.թ.ա. I դարի կեսերից երևան են գալիս գնդաձև ջրամանները, որոնք, ատտիճանարար տարածվելով, մ.թ. I դարում գործածությունից դուրս են մղում տափաշշերը: Գնդաձև ջրամանները պատրաստվում էին դուրգի վրա, որը և հեշտացնում էր արտադրությունը:

Սիսիանի գնդաձև ջրամանները դրանց վաղագույն օրինակներն են:

---

[383] Նույն տեղում, էջ 186:
[384] ***Ժ.Դ. Խաչատրյան***, Արտաշատ, II, էջ 121, 122, տախտ. XVII, 2:
[385] Նույն տեղում, էջ 107, 121, նկ.42_1, 45_1, $46_{1,3,4,}$, 58, տախտ. $VII_{,3,4}$, $VIII_{,2}$, ***Գ.Գ.Քոչարյան***, Հելլենիստական դարաշրջանի դամբարան Դվինում, ՊԲՀ, 1980, № 2, էջ 278, աղ. I, 1:

ԱՊԱԿԵ ՍՐՎԱԿ

XX դարի երկրորդ կեսին ծավալված պեղումների շնորհիվ գգալիորեն հարստացան մեր գիտելիքները Հայաստանի մինչհելլենիստական շրջանի ապակու մակին: Թեև դրանք ի հայտ գալիս են ուլունքների ձևով, բայց և հավաստում են, որ ապակին կենցաղ է մտել մ.թ.ա. II հազարամյակի սկզբներին: Մեծամորում բացված վառարաններում հայտնաբերվել են կապտականաչավուն ջնարակով ուլունքներ՝ տեղական արտադրության նշաններով:[386] Ապակին հայտնի էր և ուրարտական շրջանում: Կարմիր բլուրում (Թեյշերանի) հայտնաբերվել են ոչ միայն ապակե ուլունքներ,[387] այլև կանացի իրան պատկերող սրվակի վերին մաս և ալաբաստրոնի վոգ,[388] որոնք թվագրվում են մ.թ.ա. VII դարով: Վերջին երկուսը պատրաստված են ավագե միջուկի վրա, փափուկ ապակե մածուկի թելերը վաթաթելու հնարքով և նույն կերպ էլ հարդարված էին այլ գույնի ապակե թելերով (աղ.XIX,12):

Պատրաստի առարկաների անհարթ մակերեսը հղկելու նպատակով դրանք գլորում էին մարմարե սալի վրա: Այս բեկորները ներմուծված են Հոոդոկից, իսկ Հռոդոսը գտնվում էր առևտրական բանուկ ճանապարհների կենտրոնում: Զրադվում էր ոչ միայն ծովային, այլև ցամաքային առևտրով: Ջնարակած խեցեղենի և ապակու արտադրության կարևորագույն կենտրոններից էր:[389] Ապակե ուլունքները, ապակու բաղադրությամի նման են միջերկրածովյան և միջագետքյան ապակուն:[390]

Ապակե կնիքներ և ուլունքներ հայտնի են նաև Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. հուշարձաններից: Դրանց մի մասը տեղական է: Արմավորում VI-IV դդ. շերտերում, մակերեկից 1.50մ խորության վրա, գտնվել է «փյունիկյան»[391] նիստավոր սրվակի կեսը (բարձր.՝ 3.9սմ, հատակի տրամ.՝ 1.5սմ): Անոթը պատրաստված է կավե և ավագե միջուկի օգնությամբ: Սև գույնի է, վրան՝ բաց կապտավուն փետրաձև գարդեր: Թվագրվում է մ.թ.ա. V-IVդդ. և գործածվել է ծարիր պահելու համար:[392]

Հելլենիստական շրջանում ապակեգործության արտադրական պատկերը փոխվում է:

---

386 *Է.Խանզադյան, Կ.Մկրտչյան, Է.Պարոնյան*, Մեծամոր, Երևան, 1973, էջ 71-73:
387 *Б.Б.Пиотровский*, Кармир Блур, III, Ереван, 1955, с. 51, табл. II, 10, 11.
388 *Р.М.Джанполадян*, О трех образцах стекла из Кармир блура, СА, 1964, № 1, с. 307-311.
389 *Р.М.Джанполадян*, նշվ. աշխ., էջ 309:
390 Նույն տեղում, էջ 311:
391 *Գ.Ա.Տիրացյան, Ի.Ա.Կարապետյան*, Արմավիրի 1987-1988թթ. պեղումները, ԼՀԳ, 1991, № 6, էջ 157, նկ. 2:
392 *И.П.Сорокина*, Новые находки стеклянных сосудов Vв. до н. э. на Таманском полуострове, История и культура восточной Европы по археологическим данным, Москва, 1971, с. 76-88; *Dan Barag*, Rod-formed kohl-tu bes of tbe mid-first millenium B.C., Journal of glass stadies, 1975, vol. XVII, p. 23-36; R.J.Forbes, Studies in Ancient Tecbnology, vol. V, Leiden, 1957, p. 111.

Նոր թափ ստացած առևտրի պայմաններում առաջ եկան տարաների մի շարք նոր ձևեր՝ տարբեր զարդարանքներով: Մ.թ.ա. VI-IV դարերի զիգզագաձև, կամարաձև, ծաղկաշղթայաձև, ալիքաձև զարդաձևերը փոխարինվեցին հիմնականում փետրաձևով, որն առավելապես բնորոշ է մ.թ.ա. II-I դարերի ալաբաստրներին:[393] Ապակու զանգվածային արտադրություն է կազմակերպվում տեղում: Բարձրանում է ապակու որակը, ավելանում են քանակի և տեսականին:[394]

Սիսիանի դամբարանի ապակե միակ անոթը «փյունիկյան» ամբողջական սրվակ է: Այն երկեռնաձև է, ներքևի կեսն ավելի կարճ, իսկ վերին մասը, աստիճանաբար նեղանալով, ավարտվում է դուրս լայնացող ու ներս ծալվող ակոսազարդ պսակով:[395] Պատրաստված է կավե-ավազե միջուկի օգնությամբ (sand core), կապույտ ապակուց, որի վրա փափուկ վիճակում սպիտակ անթափանցիկ ապակե թելերը սեղմելու միջոցով ստացել են փետրաձև, իսկ վզին ու ներքին հատվածում պտուտակաձև զարդեր: Ուսին ունի երկու խուլ կանթ: Ծառայել է իբրև օծանելիքի տարա (բարձ.՝ 11սմ, պսակի տրամ.՝ 2.6սմ): Նմանատիպ ամբողջական մի սրվակ հայտնաբերվել է Սպիտակի շրջանի Թափանլի գյուղում, կարասային թաղումից: Սրվակն ունի ոչ միայն նույն ձևն ու զարդերը, այլև միևնույն չափերը: Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղից պատահարար հայտնաբերված սրվակի (ներքին մասը թերի է) իրանը քիչ գլանաձև է, իսկ փետրաձև զարդերը դեղնավուն թելերից են: Արտաշատի VIII բլրից[396] հայտնաբերված սրվակների բեկորների զարդերը սպիտակ մածուկից են: Դրանք իրենց ձևով և ապակու գույնով նման են Սիսիանի ալաբաստրին: «Փյունիկյան» անոթների բեկորներ հայտնաբերվել են Օշականում և Մոխրաբլուրում (էջմիածնի շրջան): Վերջինս մուգ կանաչ ապակուց է, վրան դեղին և սպիտակ միմյանց հաջորդող թելերով ալիքաձև նեղ ժապավեններ և ծաղկաշղթա են արված:[397]

«Փյունիկյան» կոչված սրվակները անտիկ ապակու ամենատարածված օրինակներից են: Այդպիսիք մեծ քանակությամբ հայտնաբերվել են Վրաստանում[398] (մ.թ.ա. IIդ.) և անտիկ աշխարհի տարբեր մասերում: Դրանք ալաբաստրոններ են, արիբալոսներ, ամֆորիսկներ, սափորիկներ և այլն, որոնք զարդարված են տարբեր գույների ապակիներով: Գործածվել են իբրև օծանելիքի սրվակներ և համարվում են Սիրիա-Փյունիկիայի, Եգիպտոսի, Հունաստանի ապակեգործական կենտրոնների արտադրանք:[399]

Մեղրաձորի սրվակը ավելի գլանաձև, քիչ ուռուցիկ իրան ունի, իսկ Սիսիանինը և Սպիտակինը աստիճանարար դեպի ներքև լայնանում են և կոնաձև իջնում դեպի հատակը: Երկու

---

393 *G.A.Eisen*, Glass, New York, 1927, pl. 5; *D.B.Harden*, Ancient glass, I, Pre-Roman. The archaeological journal, vol. CXXV, 1969, fig. 3, pl. IV c-g.

394 *Ж.Хачатрян*, Стеклоделие в древней Армении (II-I века до нашей эры), ИФЖ, 1975, № 1, с. 248-258.

395 Նույն տեղում, էջ 248, նկ. 1:

396 *Ж.Хачатрян*, նշվ. աշխ., էջ 249, աղ. I, 6,7,10:

397 *Գ.Արեշյան, Հ.Սիմոնյան, Գ.Սարգսյան, Գ.Քոչարյան, Հ.Օհանյան*, Հայագիտական կենտրոնի 1977-1978թթ. ռայոնային հնագիտական աշխատանքները, ԲԵՀ, 1979, № 2, էջ 209, 210:

398 *М.Сагинашвили*, Стеклянная посуда из Тбилиси, "Мацне", Вестник АА Гр.ССР, Серия истории, археологии, этнографии и истории искусства, № 4, 1974, с. 164-166, табл. I,1-4, II.

399 *Н.П.Сорокина*, Новые находки стеклянных сосудов Vв. до н.э. на Таманском полуострове, История и культура Восточной Европы по археологическим данным, Москва, 1971, с. 76-88; *R.J.Forbes*, Stäudies in Ancient Technology, vol. V, Leiden, 1957, p. 111 և հտ., *P.Fossing*, Glass vessels before glass-blowing, Copenhagen, 1940,p. 110-112, fig. 84-85; *Ж.Хачатрян*, ук. соч., с. 248-251.

ալաբաստրոններն էլ իրենց ձևով ու գարդեբով շատ ընորոշ են ուշ հելլենիստական շրջանին (մ.թ.ա. II-Ադ.):

Սիսիանի, ինչպես նաև Սպիտակի ալաբաստրոնը առնչվում է Միջերկրականի արևելյան շրջաններում, Եգիպտոսում, Սիրիա-Փյունիկիայում, Կիպրոսում, Սիրիա-Միջագետքյան կենտրոններում և այլուր հայտնաբերված «Փյունիկյան» անոթների հետ:[400] Հատկապես մեծ նմանություն ունի Դամասկոսի ազգային թանգաբանում պահվող այաբաստրոնին:[401] Սրանք թվագրվում են մ.թ.ա. III-I դարերով: Թերևս, ավելի ճիշտ կլինի այս ալարաստրոնները, իրենց ձևերի շնորհիվ, թվագրել մ.թ.ա. II-I դարերով: Մանավանդ որ դրանք ինչպես Սիսիանում[402] և Սպիտակում, այնպես էլ Վրաստանում[403] (Թբիլիսի) և այլ հնավայրերում:[404] Իր օտարածին ակնհայտ ադերսնեբով Սիսիանի դամբարանի ապակե գտածոն կարելի է թվագրել մ.թ.ա. I դարով: Ամենայն հավանականությամբ այն սիրիա-փյունիկյան ապակեգործական արհեստանոցներից մեկի արտադրանքն է և Հայաստան է ներմուծվել առևտրական ճանապարհներով:

---

[400] ***Kunisch Norbert*** Newrworbene antike Gläser der Antikenabteilung der statlichen Museen Berlin; Archaologlscher Anzeiger, 1967, Heft 2, Berlin, 1967, Abb. 1; ***A.Kısa***, Das glas ım Altertum III, Leıpzıg, 1908, Abb. 81; ***F.Neuburg***, Anclent glass, London, 1963, III; ***M.Vanderhoeven***, La verrene moulee sur corps oe Sabte dans les coliections belges, annales du Congres des "Journées ınternatıonales du verre", ravenne-Venıse 13-20 maı 1967, fig. 4; ***P.Fossıng***, Ն2Ս. ա2Ն., tig. 84,85; ***Ch.W.Chlaırmont***, The glass Vessels, New-Haven, 1963, The Excavations at Dura-Europos. Final Report IV, pl. XVIII,1. ***Axel von Saldern***, Birgit Nolte, Peter la Baume, Thea Elisabeth Haevernıoh, Glaser der Antike, sammlung Enwın oppenlander, Römisch-Germanısches museum, Köln, 1975, № 192,195, 199, 200. ***A.Kısa***, Das glas ım Altertums, Bd.III, s. 404-405, ***A.J.Voscınına***, Frühanfike glasgefasse in der Sand-Ermitage (gruppe der Salbgefasse in der Sand-Kem-Technik) -"Wissenschaftliche Zeitschnft der Uninersitat rostock-16. Jahrgang", 1967, s. 558, tab. 124,2. А.И.Вощинина датируем их III-IIвв. до н.э.

[401] ***B.Zouhdi***, Les Verresconsevés au département des anticuités Synennes des époques Grecque romalne et Byzantine du Musée National de Damas. Bulietine des Journées Internationales du Verre, № 3, 1964, tig. 24.

[402] ***Ж.Хачатрян***, ук. соч., 249, 251.

[403] ***М.Н.Сагинашвили***, Стеклянные сосуды из Тбилиси, КСИА, № 151, М., с. 127, 128, рис. 1,1, 2,1-3.

[404] ***О.Д.Дашевская***, Раскопки памятников античной эпохи в Северо-Западном Крыму, Археологические открытия 1970 года, М., 1971, с. 264.

ՔԱՐԵ ԱՆՈԹՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Քարե անոթներից ուշագրավը կապտականաչավուն օձաքարից պատրաստված ոչ խորը գարդատուփն է՝ դեպի հատակ կլորավուն անցումով և հորիզոնական պսակով (ողորկ մակերեսով, մասամբ թերի է, բարձր.՝ 4սմ, երկ.՝ 12սմ, լայն.՝ 6սմ): Ցածր ոտքը տակից փորած է, երևում են սուր գործիքի հետքերը (աղ.XI,3): Հայաստանի անտիկ շրջանի հուշարձաններից՝ Գեղադիր, Արմավիր, Գառնի, Հացավան, Արտաշատ, Լեռնային Ղարաբաղ, հայտնաբերվել են կապտականաչավուն, մոխրագույն կամ թուխ գույնի պորֆիրիտե և օձաքարե սկահակներ ու դրանց մասեր,[405] ոտքերի տարբեր բարձրությամի ու պսակների ձևերով: Վերաբերում են մ.թ.ա. IV-I դարերին և համարվում տեղական արտադրանք: Հայաստանում քարե անոթների պատրաստումն ու օգտագործումը գալիս են դեռևս III-II հազարամյակից: Հատկապես մեծ տարածում է ստանում ուրարտական շրջանում:[406] Դրանք բազալտե մեծ անոթներ են, մարմարե տարբեր երանգների սկահակներ, զարդատուփեր: Ուշագրավ են Կարմիր բլուրում և Թոփրախ կալեում հայտնաբերված, գեղեցիկ մշակումով, լեզվաձև առևակիսներով, հարդարված քանդակազարդ, ստեատիտե և կարմիր պորֆիրիտե զարդատուփերը: Ունեն դեպի հատակի նեղացող գնդաձև իրան և օղակավոր ելուստով նստուկներ (տրամ.՝ 6-8սմ), պսակի եզրին գամով ամիացած հորիզոնական շարժական կափարիչներ:[407] Մարմարե սկահակների հիանալի նմուշներ են գտնվել Արտաշատի արևելյան հատվածում՝ քաղաքից դուրս բացված ուրարտական առանձնատան ավերակներում, Մեծամորում, որոնք լավ կոկած և փայլեցված են: Քարե անոթները լայն տարածում ունեին Աքեմենյան Պարսկաստանում:[408] Հայաստանում հայտնաբերված սկահակներն իրենց զուգահեռներն ունեն Պերսեպոլսի քարե անոթների հավաքածուներում, որտեղ կան նաև քառանկյուն անոթներ (մ.թ.ա.V-IVդդ.): Հայաստանում մ.թ.ա. V-IVդդ. քարե սկահակները սակավ հանդիպողներից են, բայց դրանք լայն տարածում են ստանում հատկապես ուշ հելլենիստական շրջանում: Արտաշատում և Արմավիրում քարե անոթներ հանդիպում են համատարած մ.թ.ա. II-Iդդ.,[409] երբեմն էլ մ.թ. I-II դդ. շերտերում: Քարե անոթների առկայությունը դամբարաններում (Արտաշատ, Գառնի, Հացավան, Սևան, Մալիշկա, Գեղադիր, Սիսիան) և բնակելի տներում թույլ է տալիս ասել, որ դրանք

---

[405] ***Ժ.Դ.Խաչատրյան***, Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում, էջ 84-87:
[406] ***Б.Б.Пиотровский***, Искусство Урарту, с. 102-103, рис. 66-68.
[407] Նույն տեղում:
[408] ***E.F.Schmidt***, Persepolis, II, Chicago, 1957, pl. 53, 2,5; 63, 1.
[409] ***Ժ.Դ.Խաչատրյան, Ա.Գ.Կանեցյան***, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, ՀՍՍՀ ԳԱ, ԼՀԳ, 1974, № 9, էջ 79; ***Ժ.Դ.Խաչատրյան***, Արտաշատի VII բլրի 1973-1975թթ. պեղումների արդյունքները, ԼՀԳ, 1978, № 8, էջ 65; ***Ժ.Դ.Խաչատրյան***, Հնագիտական հայանագործություններ Գեղադիրում, էջ 84-87, նկ. 2-3:

օգտագործվել են նաև պաշտամունքային արարողությունների ժամանակ: Դրվել են պաշտամունքային անկյուններում: Այդ են փաստում Այ Խանումի տաճարում հայտնարերված գրանիտե ոչ խորը թասերը, որոնք թեև շրջանաձև են, բայց Լիսիանի անոթի նման ցածր ոտքեր ունեն և հորիզոնական կտրած պսակներ:[410] Քառանկյուն անոթներ, զարդատուփեր և կափարիչներ են գտնվել Արմավիրում, Արտաշատում, Եղեգնաձորի Մալիշկա գյուղում պատահարար բացված դամբարանում (երկ.՝ 10.6սմ, լայն.՝ 5.2սմ, հաստ.՝ 0.8սմ): Վերջինս տափակ կափարիչ է, վրան՝ շփումից առաջացած ձվաձև փոսիկ (ՊՊԹ. 26031): Կապտավուն օձաքարերով մշակած բարակապատ կափարիչի մի կես էլ գտնվել է Արմավիրում: Այն ունի թեք կտրած եզրեր, մի կողմի վրա անցք՝ գարդատուփին ագուցելու, հորիզոնական պտտվելու համար:

Հետաքրքիր կերտվածք ունի Արտաշատի Բ համալիրում հայտնարերված թուխ պորֆիրիտե քառակուսի զարդատուփը (աղ.XI,4) (չափերը՝ 6x6սմ, բարձր.՝ 2սմ), հարթ շուրթով: Ներքուստ եզրին ունի կլորավուն ելուստ, մեջը՝ անցք՝ հորիզոնական շարժվող կափարիչն ագուցելու համար: Մակերեսը ներսից և դրսից ոդորկ է: Ճիշտ նման մի զարդատուփ, բայց սպիտակ կավճաքարից, հայտնի է Մինգեչաուրի կարասային թաղումից: Կափարիչն ամրացնելու անցք չունի: Հեղինակային տուփի նշանակությունը (ինչ լինելը) հայտնի չէ:[411]

Բազմատեսակ քարերի երկիր Հայաստանում քարագործությունը կամ քարամշակությունը զարգացել է վաղագույն ժամանակներից: Քարամշակության մեջ ևս աշխատանքի բաժանումը կատարվել է շատ վաղ ժամանակներից, Ուրարտուից ոչ ուշ: Քարտաշները օրավուր մեծ պահանջարկ վայելող շինարարության համար քարեր էին մշակում, իսկ քարե կենցաղային իրեր, կիրառական արվեստի տարրեր, առարկաներ պատրաստող վարպետների խումբն առանձին էի: Տեղարնիկ վարպետներն օգտագործել են բոլոր այն քարատեսակները, որոնք եղել են տվյալ տարածքում: Հայաստանում հայտնարերված քարե սկահակները, գարդատուփերը, տարրեր չափերի թասեր ու գավաթներ պատրաստվել են տեղում, տեղական հումքից:

Լիսիանի դամբարանում քարե առարկաները չորսն են: Դրանցից երկուսը գնդեր են, մեկը՝ պորֆիրիտից (տրամ.՝ 5.2սմ, քաշը՝ 117.9գ), մյուսը՝ սպիտակ քարից (տրամ.՝ 2.6սմ): Գնդաձև քարերը սովորարար խորհրդանշում են երկրագունդը: Երրորդը սպիտակ քարը քառանկյուն իր է, մի կողմում՝ երկթեք կտրած (երկ.՝ 8սմ, բարձր.՝ 2.8սմ, լայն.՝ 2.6սմ): Այն մի ծայրում կախելու համար ունի հատուկ անցք: Առարկան բոլոր կողմերից մտշված է, հնարավոր է՝ գործածվել է իբրև սրաքար: Չորրորդը կարծր քարե անիվ է՝ կենտրոնում անցք (տրամ.՝ 3.6սմ, լայն.՝ 0.8սմ):

---

[410] ***Henri-Paul Francfort***, Foulles d' Ai Khanoum, III, Le Sanctualre du Temple a niches indentées, 2, Les trouvailles, p. 21, pl. 12, № 2, 6, 10, 12-15, pl. 13, № 10, pl. IX, № 10.

[411] ***С.М.Казиев***, Археологические раскопки в Мингечауре, Альбом кувшинных погребений, Баку, 1960, с. 24, табл. XVIII, рис. 6.

ԶԵՆՔԵՐ

Սիսիանի դամբարանի գտածոներում զենքերն ըստ գործածության լինում են. պաշտպանական (վահաններ, զրահներ) և հարձակիղական: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում պաշտպանական զինատեսակները՝ վահանների ումբոնները (2 հատ) և զրահի շրջանաձև (դիսկաձև) թիթեղներ (2 հատ): Ումբոնները կոնաձև են՝ պատրաստված արծաթե ոսկեջրած բարակ թիթեղից: Ներքևում՝ լայնացող պսակո վրա ունեն անցքեր՝ վահանի կենտրոնին ագուցվելու համար (բարձր.՝ 15 սմ, պսակի տրամ.՝ 20սմ, մասամբ թերի) (աղ. XIII,$_1$): Դամբարանի նյութերում ամբողջական վահաններ կամ այլ բեկորներ չկան (գուցե և մեզ չեն հասել), ուստի դժվար է որոշել, թե վահանն ինչպիսի ձև է ունեցել:

Հայաստանում հայտնաբերված զինվոր պատկերող կավե արձանիկների վրա վահանները երկարուկ են, օվալաձև, կենտրոնում վերից վար իջնող ռելիեֆ գծով մակերեսը երկու մասի է բաժանված: Սակայն կավե արձանիկների վահանների ումբոնները կոնաձև չեն:[412] 163թ. Հայաստանը նվաճելու պատվրն Լուկիոս Վերոսի կտրած շքադրամբ դարձերեսին պատկերված ձեռքերը կապած երկու հայ զինվորների գլխավերևում ռազմական ավար զենքերի շարքում կան օվալաձև վահաններ, որոնք նույնպես վերից վար ուռուցիկ մաս ունեն:[413]

Կոնաձև ումբոններով վահաններ մեծ քանակությամբ հայտնի են ուրարտական շրջանից: Սարգոն II-ի (մ.թ.ա. 714թ.) արշավանքի ժամանակ Սուսասիրից տարած ավարի մեջ հիշատակվում են և վահաններ, դրանք կուրացուցիչ վայլով, ծանր ու թեթև վահաններ են, շան, վայրի ցլի, գլուխ-ումբոններով, առյուծի, հրեշի՝ կախված ննջասենյակի աջ ու ձախ կողմերում:[414]

Սիսիանի ումբոնները ամենայն հավանականությամբ, ուրարտական վահանների նմանությամբ ամբացված են եղել շրջանաձև վահանների կենտրոնում. առայսօր մեզ հայտնի միակ եզակի օրինակներն են և լիարժեք պատկերացում են տալիս շքահանդեսային վահանների այդ տեսակի մասին:

Սկավառակներ. պատրաստված են արծաթե բարակ թիթեղից, քիչ ուռուցիկ են և երկու եզրերին՝ դեմ դիմաց, ունեն չորս զույգ անցքեր՝ շապիկին կարելու համար (աղ.XI,$_5$) (տրամ.՝ 9,2 սմ): Դամբարանի զրահաշապիկների վրա որևէ մնացորդ չի հայտնաբերվել: Արտաշատում ևս գտնվել են երկաթե թեփուկավոր զրահների բեկորներ: Սկավառակազարդ զրահները

---

[412] *Ж.Д Хачатрян*, Об античной коропластике Армении, ВДИ, Москва, 1979, № 3, с. 99-101, рис. 12-13.
[413] *Զ.Պտուկյան*, Հայաստանի վերարերյալ հռոմեական դրամներ և մեդալիոններ, Վիեննա, 1971, տախտ. 27,$_5$:
[414] *Б.Б.Пиотровский*, Искусство Урарту, с. 36-37.

հայտնի են դեռևս մ.թ.ա. III հազարամյակից:[415] Դրանք կաշվե կամ ամուր զործվածքից են, հարդարված մեկ կամ մի քանի սկավառակաձև թիթեղներով: Ինչ վերաբերում է թիթեղե թեփուկավոր զրահներին, ապա դրանք Հին Արևելքում, այդ թվում Հայաստանում, հանդես են զալիս մ.թ.ա. II հազարամյակի կեսերից և շարունակում են զոյատևել հետագա դարերում:[416]

Սարգոն II-ը Մուսասիրից տարած ավարի մեջ հիշատակում է . "9 тканей, одежда божественности его, на которую нашиты золотые диски".[417] Իսկ Ռուսա II-ի բանակի մասին ասում է. "... не страшился его многочисленны панцирных воинов...":[418]

Սիսիանի արծաթե սկավառակը ևս ամրացվել է կաշվե զրահի վրա:

Արծաթե կլոր լարով օղակները տարբեր չափերի են (տրամ.՝ 4,3 սմ և 3 սմ): Դրանք կարող էին օգտագործվել հագուստը և կոշիկը ամրացնելու համար (աղ.XI,6):

Սիսիանի դամբարանից ունենք նաև ոչ մեծ թվով հարձակողական զինատեսակներ՝ դաշույն (մեկը) (աղ.XIII,3), նիզակ (երեքը) (աղ.XIII,4-6), տեզ (երկուսը) (աղ.XIII,8,10) և նետասլաք (երեքը) (աղ.XIII,9,11): Բոլորն էլ երկաթից են: Հելլենիստական շրջանում զենքերը բացառապես երկաթից են: Պատրաստված են մեծ փարպետությամբ զինագործ դարբնի կողմից, կռելու, կոփելու, կտրելու և եզրերը հեսանելու եղանակով, դրանք նախորդ շրջաններից ժառանգած զինատեսակների կատարելագործված նմուշներն են՝ հելլենիստական զինատեսակներին բնորոշ առանձնահատկություններով:

Նետասլաքները երկու տիպի են՝ եռաթև (երկ.՝ 4-6 սմ, պոչով՝ 8-11սմ, լայն.՝ 2,8-4,7սմ) և քառանիստ: Հայաստանի անտիկ շրջանի հուշարձաններից հայտնաբերվել են մեծ թվով տարատեսակներով նետասլաքներ՝ երկթև, եռաթև և քառանիստ: Ամենատարածվածը եռաթևն է, կնշանակի այն եղել է ամենագործածականը: Արտաշատ մայրաքաղաքի միայն I բլրից հայտնաբերվել է երեք հազարից ավելի նետասլաք, որոնցից հազար յոթ հարյուրը գտնվել է հյուսիսարևմտյան փողոցում բացված դաբրնոցներից[419]: Եռաթև նետասլաքներ հայտնաբերվել են Գառնիում,[420] Արմավիրում.[421] Այգեշատում.[422] Կարմիր բլուրում:[423] Ընդունված կարծիք է, թե եռաթև նետասլաքները հանդես են եկել ասորեստանյան շրջանում, իսկ լայն տարածման շրջանը եղել է մ.թ.ա. IIդ.[424]:

Հայաստանում երկաթե եռաթև ամենավաղ նետասլաքը հայտնաբերվել է Օշականի №

---

[415] Նշվ. աշխ., էջ 39-40:
[416] Նշվ. աշխ., էջ 40-47:
[417] *Б.Б.Пиотровский,* Искусство Урарту, с. 36.
[418] *И.М. Дьяконов*, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2-3, с. 235.
[419] *Б.Н.Аракелян*, Арташат I, Основные результаты раскопок 1970-1977гг., Ереван, 1982, с. 30, табл. XXIX-XXX
[420] *Ж.Д. Хачатрян*, Гарни V, Античный некрополь (результаты раскопок 1956-1972гг.), Ереван, 1976, табл. XX)
[421] *Г.А Тирацян*, Культура Древней Армении VI в. до н.э.- III в.н.э., Ереван, 1988, с. 139, рис.36
[422] *Ռ.Մ.Թորոսյան, Ֆ.Ի.Տեր-Մարտիրոսով*, Ուշ հելլենիստական ժամանակաշրջանի դամբարաններ, Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում, ՊԲՀ, 1976, № 2,էջ 2,66, սուղ. II, 6:
[423] *А.А.Вайман, Г.А. Тирацян*, Кармир-Блурский некрополь эллинистического времени, ВОН, 1974, № 8, с. 66, табл. III, 2
[424] *K.Doerner, Th. Goell,* Arsameia am Nymphaios, Berlin, 1964, p. 276; *Г.А. Тирацян,* Древнеармянская керамика из раскопок Армавира, ИФЖ, 1971, N 1, с. 226, табл. IV, 1,2

25 ղամբարանում և թվագրվում է մ.թ.ա. VIդ. կեսերով:[425] Ըստ Մովսես Խորենացու՝[426] Հայկ Նահապետի՝ Բելի վիա արձակած նետը եղել է եռաթև. «*Զայս ոսկեայ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յառքայն, լի քարշէ զլայնալիծն, դիպեցուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ սէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն*...»: Եռաթև նետասլաքները Հայաստանում, հանդես գալով մ.թ.ա. VIդ., լայն տարածում են ստանում մ.թ.ա. II-IIIդդ. և հարատևում են մինչև VIIIդ.[427]:

Ձենքերից մյուս երեքը փոքր չափերի նիզակների եռանկյունաձև շեղբեր են (երկ.՝ 10-12 սմ), միջնաջիղ, խողովակաձև կոթառով: Շեղբերը սահուն անցումով միաձուլված են կոթառներին: Երեք նիզակներն էլ ինչ-որ չափով թերի են: Նիզակներ հայտնաբերվել են Արտաշատում.[428] Գառնիում,[429] Արմավիրում.[430] Մինգեչաուրում.[431] Կանբրքյոյում,[432] Այ-խանումում,[433] և այլ վայրերում:

Տեգերը (նետվող փոքր նիզակ) երկուսն են, ունեն ձգված տերևաձև շեղբ, խողովակաձև կոթառ, սահուն միաձուլված են շեղբին (շեղբի երկ.՝ 7 սմ, լայն.՝ 2,5 սմ, պահպանված կոթառով երկ.՝ 10,5 սմ): Նման տեգեր անտիկ հուշարձաններում հաճախ են հանդիպում (Արմավիր,[434] Գառնի, Արտաշատ[435] և այլն):

Դաշույնը երկսայրի է (ղաստակը թերի), շեղբը վերին սայրում բավականին լայն է (5 սմ): Նեղ միջնաջիղը հասնում է մինչև կեսը (երկ.՝ 20,5 սմ): Դաշույններ հայտնի են Արտաշատից[436], Գառնիից[437] (I-IIդդ.) և Արմավիրից[438]: Նմանօրինակ դաշույնները հագվելուղեպ հանդիպող զինատեսակներից են:

---

[425] ***С.А Есаян, А.А.Калантарян***, Ошакан I, Основные результаты раскопок 1971-1983гг., Ереван, 1988, с. 74-75, табл. L II, 10.

[426] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս.Յարութիւնեան), Տփղիս, 1913, I, ԺԱ (նմանութիւն Երևան, 1991):

[427] ***Ա.Ս Բալաբրաբյան***, Ձենքերը V-VIII դարերում, ՊԲՀ, 1965, N 4, էջ 242-243, աղ. I, 10,11, 14-17, II, 1-3:

[428] ***Б.Н. Аракелян***, Арташат I, с. 30, табл. $XXX_{1,2}$.

[429] ***Б.Н. Аракелян***, Гарни II, Результаты раскопок 1951-1955гг., Ереван, 1957, с. 45, рис. 11.

[430] ***Г.А.Тирацян***, Культура древней Армении, с. 138, рис. 35,11.

[431] ***С.М.Казиев***, Археологические раскопки в Мингичауре, Альбом кувшинных погребений, Баку, 1960, табл. $XXXV_{3,4}$.

[432] ***M. Mellink***, Archaeology in Asia Minor, American journal of Archaeology, 1966, № 2, p. 153; H.Alkim, Exploration in Turkey , 1965, 1966, Anatolica 11, 1968.

[433] Henri-Foul Francfort, Fouilles d'ai Khanoum. III, Paris, 1984, Le Sanctuaire du Temple a niches, indentees. 2. Les trouvailles, p. 67, pl. 24. №2 (1872); XXIX, № 1089.

[434] ***Г.А.Тирацян***, Культура древней Армении, с. 139.

[435] Арташат I, табл. XXXI.

[436] Арташат I,с.30, табл. XXXII.

[437] Гарни I, с. 49, рис. 40; Гарни II, с. 45, рис 11; Гарни V, рис. 3,4.

[438] ***Գ.Ա. Տիրացյան***, Հնագիտական աշխատանքները Արմավիրում, ԼՀԳ, № 5, նկ. 3,6:

ԳԵՄՄԱ

Դամբարանից հայտնաբերված միակ կնիքը սարդիոնից է: Գրեթե շրջանաձև (1.3x1.1սմ), վերին մասում ուռուցիկ, հարթ մակերեսին պատկերված է մենամարտի տեսարան (աղ.XIX,₈): Կենտրոնում կանգնած մարդը, որն ավելի բարձրահասակ է, ձախ ոտքը առաջ դրած, յայն բացած, հենված աջ ոտքին, նիզակով հարվածում է թշնամու գլխին: Նա մորուքավոր է, մեծ քթով և գլխին կոում է հարթ գդակ: Ըստ երևույթին, տեղացի է: Իսկ դիմացինը, որը նիգակն ուղղել է հակառակորդի փորին, ավելի կարճահասակ, սաղավարտով է, ամենայն հավանականությամբ, պարսիկ է: Ի տարբերություն նման բովանդակություն ունեցող մյուս կնիքների՝ այստեղ տեղացու թիկունքին կանգնած է երայիը բաց, թաթով ինչ-որ բան բռնած արջ: Ազատ կոմպոզիցիայով կերտած այս կերպարները հստակ են, համաչափությունները՝ մասամբ խախտված, նկատելի են որոշ մանրամասներ: Տվյալ գեմմայի գուգահեռները մեզ հայտնի չեն: Պատրաստված է «հունա-պարսկական» գլիպտիկայի ոճական առանձնահատկություններով, հմուտ վարպետի կողմից, լավատեղյակ ժամանակաշրջանի գլիպտիկայի նվաճումներին:[439] Կատարման տեխնիկայով, պատկերների վերարտադրությամբ գեմման ավելի մոտ է մ.թ.ա. V-IVդդ. կնիքներին: Եվ դա պատահական չէ, որովհետև այդ ավանդույթները շարունակվեցին ոչ միայն հելլենիստական, այլև ուշ անտիկ դարաշրջանում:[440] Հայաստանը հարևան երկրների նման գտնվում էր այդ մշակույթի ազդեցության շրջանակներում: Շարունակվեցիկ ոչ միայն թեմաները, ոճական առանձնահատկությունները, այլև կիրառության մեջ մնացին աքեմենյան շրջանի գլանաձև և մյուս ապի կնիքները: Դրա խոսուն վեայություններից են Արտաշատում հայտնաբերված կնքաղրոշմների արխիվներում պահպանված Աքեմենյան գլանաձև կնիքներով դրոշմված կնքաղրոշմները: Սիսիանի կնիքը կարող է պատկանել մ.թ.ա. III-II դարերին, ավելի վաղ, քան դամրարանի մյուս նյութերը: Լկն, հավանարար, ագուցված է եղել վերը նկարագրված ոսկե առյուծագլուխ ապարանջանի բնում և պատկանել է թագավորական կամ իշխանական (աշխարհիկ իշխանություն խորհրդանշող) գարդատեսակների դասին: Հեծյալի կամ հետիոտնի հաղթական մենամարտը շատ տարածված թեմա էր: Թշնամուն եաղթելը պատերազմում և մենամարտում համարվում էր հզորության և ուժի արտահայտություն: Արտաշատում հայտնարերված արխիվում կան բազ-

---

[439] *Ժ.Դ.Խաչատրյան*, Դիտողություններ Հայաստանի հելլենիստական գլիպտիկայի մասին, ԼՀԳ, 1974, № 7, էջ 99,100, նկ. 2:

[440] ***Zores D.Chacatrjan***, Achalmenldische Traditionen im postacbalmendischen Armenien, Archaologische Mitteilungen aus Iran und Turan, and. 32, Berlin, 2000, s. 43-49, Abb. 1,2; ***Ж.Д.Хачатрян***, Отражение Ахеменидских традиций в эллинистическом и позднеантичном периодах, Научные труды, вып. III, Гюмри, 2000, с. 3-45.

մաթիվ նմանատիպ բովանդակության կնքադրոշմներ, այդ թվում հայկական թագով հեծյալի մենամարտը հոպլիտի հետ պատկերով:[441] Որսորդությունը նույնպես դիտվում էր ոչ միայն որպես զվարճություն, այլև քաջություն, հերոսություն ցուցարերելու միջոց: Մենամարտի և որսորդության դրվագներ պատկերելը հայ արվեստագետ-վարպետների հիմնական թեման էր երկար ժամանակ:

[441] ***Zores Khachatrian***, The archives of sealings found at Artashat (Artaxata). Bulletin de correspondance hellemique, supplement 29, 1996, p. 367, fig. 5-6.

ՈՒԼՈՒՆՔՆԵՐ, ԱԱՏԱՆՈՒ ՔԱՐԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Սիսիանի դամբարանից հայտնաբերված գտածոներում ուշագրավ են ուլունքներն ու մատանու քարերը: Զարդարանքի ամենատարածված այդ առարկաներն աչքի են ընկնում իրենց գույների, օգտագործած նյութերի, պատրաստման տեխնիկական հնարների և ձևերի բազմազանությամբ: Հելլենիստական և ուշ անտիկ շրջանի դամբարաններում ուլունքները գանգվածարար հանդիպող զարդատեսակներից են: Հելլենիստական շրջանում, ի տարբերություն երկաթի լայն տարածման և վաղ հայկական շրջանի, գերակշռում են ապակե (վանակատ) մածուկից և ապակուց պատրաստված ուլունքները: Դրանք իրենց ձևերով և գույներով քարե ուլունքների պարզ ընդօրինակություններն են: Հարուստ դամբարաններում հանդիպում են հիմնականում ոսկե և արծաթե ուլունքներ, տարբեր գույների քարերի ու ապակիների հետ միասին: Այդ առումով Սիսիանի դամբարանը բացառություն չէ: Պահպանված մատանու քարերը սարդիոնից են, մեկը՝ բազմանիստ, մյուսը՝ ուռուցիկ, չորսը՝ կիսագնդաձև, սպիտակ, ոսպաձև, կարմրավուն իայլերով: Ցավոք մատանիները մեզ չեն հասել:

Քարե ուլունքները սարդիոնից են, շեղանկյունաձև և գլանաձև, կանաչավուն սպիտակ կետերով (աղ.XIX,$_{10}$), օձաքարից՝ տակառաձև, օրսիդիանից՝ բրգաձև կախիկ (աղ.XVIII,$_{1}$), գրաֆիտից, փոքր ձվաձև, ազաթից՝ գլանաձև, լայնքով ու երկայնքով արվեսծ առևակոսներով, լեռնային բյուրեղից՝ ձվաձև (աղ.XVIII,$_{2}$) և այլն:

Փաստ է, որ հնում մարդը, չկարողանալով բացատրել բնության շատ երևույթներ, կյանքը, մահը և այլն, անպաշտպան լինելով զանազան արհավիրքներից, իրեն շրջապատող իրերին և առարկաներին վերագրում էր գերբնական հատկանիշներ, դրանք գերհզոր էին: Նրանք չար ուժերից պաշտպանվելու, դժբախտություններից հեռու մնալու կամ հաջողության, երջանկության հասնելու համար օգտագործում էին հմայական պահպանակներ, թալիսմաններ, հավատում դրանց և վերագրում զանազան կախարդանքներ, մոգություններ: Թանկագին և կիսաթանկագին քարերից շատերը, ըստ իրենց գույների, ձևերի և մի շարք հատկանիշների, ծառայում էին որպես հմայիլներ, հուռութք և թալիսմաններ: Քարե մատանին կամ մատանիների ակնաքարերը հանդես էին գալիս երբեմն որպես հմայիլ կամ որպես թալիսման:

Փիրուզը ոսկերչության մեջ տակավին վաղնջական ժամանակներից լայն կիրարկում ունեցող ամենագեղեցիկ և լավագույն քարերից էր: Պարսիկներն այն կոչում էին «ֆերուզա»-

երջանկարեր քար: Փիրուզն ունի երկնագույն, լազուրիտի պես մպքուր և վճիտ գույն, երբեմն էլ կանաչավուն-կանաչ խնձորի գույն, որի պատճառով պարսիկներն այն նմանեցնում էին Կովկասի, Հիմալայների սառցադաշտերից հոսող լեռնային կատաղի վտակների հետ:

Փիրուզի լավագույն հանքերը գտնվում էին Իրանում (Նիշապուր), Սինայում, և իրավամբ այն կոչվում էի «արևելյան, իրանական կամ էլ արարական» քար: Սինայի փիրուզը եգիպտացիներն օգտագործում էին դեռևս IV-III հազարամյակներում: Միաժամանակ փիրուզ քարն օժտված էի, ըստ նախապաշարմունքների, մոգական, հմայական հատկանիշներով: Նա երջանկություն էի բերում սիրահարներին և ըստ ավանդության՝ առաջացել է իրար չհասած սիրահարների գերեզմանների վուա: Այն ամրապնդում էի սիրտը, հեռացնում վախը, փրկում կայծակից, օձերն ու կարիճները անհաս էին այն կրողներին: Վերջապես փիրուզը հաղթության, հաղթանակի խորհրդանիշ էը:

Փիրուզին վերագրվող սնոտիապաշտական ավանդույթները փոխանցվում էին սերնդեսերունդ, հատկապես Մերձավոր Արևելքի երկրներում՝ Իրանում, Կովկասում, Միջին Ասիայում և այլուր:

Նռնաքարը տարածված և առավել մատչելի քարերից էի: Նրան ևս վերագրում էին կախարդական զանազան հատկանիշներ և կրում որպես հուռութք, հմայիլ: Այն կրողին տալիս էի իշխանություն, կրքոտ սեր, ճանապարհորդությունների ժամանակ պաշտպանում դժբախտ պատահարներից, բուժում տենդը և դեղնախտը: Խաչակիրները այն կրում էին, որպեսզի պաշտպանվեն թույներից և վերքերից:[442]

Սիսիանի և Հայաստանի մյուս դամբարաններում ու բնակավայրերում ամենաշատը հանդիպում են սարդիոնե ուլունքները և մատանիներ՝ սարդիոնե ակերով (աղ.XVIII,2), իսկ III-IV դարերում՝ ամրողջական մատանիներ:

Պատճառը՝ նախ Արևելքը հայտնի էի իբրև կարմիր քարերի հայրենիք: Սարդիոնը մինչև այսօր էլ Կովկասում և Արևելքում համարվում է սիրված քարերից մեկը: Նա իր պայծառ, կարմրավուն գույնով հիշեցնում է կրակ և արյուն: Անտիկ աշխարհում կարմիր քարերը, հատկապես նոնաքաբը և սարդիոնը, սովորական դարձան Ալեքսանդր Մակեդոնացու Արևելք կատարած արշավանքից[443] հետո: Դրանցից պատրաստում էին կնիքներ և մատանու քարեր: Ըստ երևույթին Արևելքը քարերի հետ միասին հույներին փոխանցեց նաև դրանց հետ կապված ավանդությունները: Հույները, որ վատ բուժողներ չէին, դժվարին պահերին հաճախ էին դիմում կախարդական միջոցների և ադոթքների:[444]

Բոլոր այն քարերը, որ հանդիպում են հայաստանյան դամբարաններում, ունեն տեղական ծագում: Հայաստանում կան համապատասխան հանքավայրեր (ագաթ, լազուրիտ (աղ.XIX,8), դիորիտ, օնիքս և այլն), իսկ սարդիոնը հայտնի է մի շարք վայրերում: Մխիթար Հերացին (XIIդ.) իր «թանկագին քարերի և նրանց բուժիչ հատկությունների մասին» գրքում սարդիոնի (սանդիքսի) մասին գրում է, որ կան դրա տարբեր տեսակները, և այն հայտնի է

---

[442] *А.Е.Ферсман*, Очерки по истории камня, Т.1, Москва, 1954, с. 224; նույնի՝ Рассказы о самоцветах, с. 142.
[443] *М.И.Максимова*, Боспорская камнерезная мастерская, СА, 1957, № 4, С. 78-79; *В.И. Марковин*, Сердолик-"Камен счастья". Новое в Советской археологии. Москва, 1965, с. 272.
[444] *А. А. Оганесян*, История медицины в Армении, Т. II, Ереван, 1946, с. 67.

շատ տեղերում, դրա տեսքը նման է կտրած մսից հոսող ջրին: Սարդիոնը հանգստացնող և հեշտացնող է, օգնում է արյունահոսության ժամանակ: Եթե նրանով մաքրես կամ քսես շարժվող կամ կեդտոտ աչամին, ապա այն կառողջանա:[445] Հայաստանում, որտեղ հաճախ էին երկրաշարժերը, XVII դարում գտնում էին, որ սարդիոնը փրկում է մարդուն փլատակների տակ մնալուց:[446] Նա օգնում է նաև հեշտ ծննդարերելուն. հեռացնում է չար ոգիներին, պաշտպանում թշնամուց:

Վրացական ձեռագրերում (XՀ.) սարդիոն-սերդոլիսին վերագրվում է ուռուցքներ և վերքեր բուժելու հատկություն:[447]

Ահա քարերին վերագրվող այդ հատկություններն էին պատճառը, որ դրանք ուղեկցում էին մարդկանց և՛ այս, և՛ անդրշիրիմյան աշխարհում, քանի որ մարդը, կենդանի մնացողների աշխարհից հեռանալով, կյանքը շարունակում էր մեռյալների աշխարհում: Նրա հետ գենքերից, սննդից, տարբեր անոթներից ու առարկաներից բացի, դնում էին նաև նրա գարդերից քարե ուլունքներն ու մատանիները, որոնք մեծ մասամբ լինում էին սերդոլիկից: Սարդիոնը հնուց տարբերակվում էի՝ տղամարդու և կանացի: Տղամարդունն ավելի դարչնագույն էի, կոպիտ, իսկ կանացին՝ վարդագույն, դեղնավուն, թափանցիկ:[448] Հետաքրքրական է, որ Սամթավոյի բրոնզեդարյան դամբարաններում մուգ-կարմիր-դարչնագույն սերդոլիկե ուլունքները անխտիր գտնվել են տղամարդկանց գերեզմաններում, իսկ բաց վարդագույն-կարմրավունը՝ կանանց:

Քարե ուլունքներից ուշագրավ են և ագաթից պատրաստվածները: Միշտ ընտրվում էի տարբեր գույների համակցությամբ հատվածներ (աղ.XVIII,$_2$): Քարե ուլունքները բացառապես կրկնում են բրոնզի շրջանից եկող ուլունքների ձևերը: Այդպիսին են նաև օրսիդիանե բրգաձև կախիկն ու տակառաձև կանաչավուն սպիտակ բծերով ուլունքը: Օրսիդիանը բնական ապակի է: Լկն մեծ դեր է խաղացել մարդկության կյանքում, սկսած քարե դարից մինչև մեր օրերը: Օրսիդիանից պատրաստվել են ինչպես գործիքներ ու գենքեր (նետասլաքներ, դանակ), այնպես էլ մանր առարկաներ՝ ուլունքներ: Հայաստանը հարուստ է օրսիդիանի հանքավայրերով, որոնք սև, մոխրագույն, դարչնագույն և այլ գույների են: Օրսիդիան և դրանից պատրաստված առաքկաներ արտահանվել են ինչպես հարևան, այնպես էլ հեռավոր երկրներ:[449] Սեծ հետաքրքրություն է ներկայացնում գրաֆիտե ուլունքը, որը հազվադեպ է հանդիպում: Գրաֆիտե մի ուլունք էլ հայտնի է Արտաշատից:[450] Սև գույնի ուլունքները կապված էին մահվան, սգի հետ:

Օձաքարը կենցաղի մեջ մտավ և լայն տարածում ստացավ աքեմենյան, իսկ Հայաստանում, գերազանցապես հելլենիստական շրջանում: Օձաքարից պատրաստվում էին փոքր

---

[445] *Ա.Ա. Օգանեսյան*, նշվ. աշխ., էջ 131.
[446] *Կ.Պ. Պատկանյան*, Драгоценные камни, их названия и свойства по понятием армян XVII в., Ереван, 1979, с. 32-33.
[447] *Г.Ф.Чурсин.* Амулеты и талисманы кавказских народов. Махачкала, 1929, с. 20.
[448] *В.И. Марковин,* Сердолик- "Камень счастья". с. 272.
[449] *Ռ.Ս.Բաղալյան*, Կովկասի վսնակատը, եանքայվայրերի շահագործումն ու հումքի տարածումը նեոլիթ-վաղ երկաթի դարաշրջաններում (ըստ նեյտրոնային ակտիվացման անալիզների), պատմ. գիտ. դոկտորի աստիճանի հայցման ատենախոսություն, սեղմագիր, Երևան, 2002, էջ 3-35:
[450] *Ժ.Դ.Խաչատրյան*, Արտաշատ II, էջ 90, նկ. 43,$_1$:

չափերի, տարրեր տեսակի անոթներ, գարդատուփեր, սկահակներ, հավանգներ, ճարմանդներ, ուլունքներ և այլն, որոնք ամենայն հավանականությամբ ևս օժտված էին հմայական հատկանիշներով:[451] Թերևս, դրանով պետք է բացատրել համեմատարար հեշտ մշակվող գեղեցիկ քարից պատրաստված ուլունքների հանդես գալը հելլենիստական շրջանում:

Ուշագրավ են լեռնային բյուրեղից պատրաստված օվալաձև ուլունքն (աղ. XVIII,2) ու գրեթե շրջանաձև (2.5x2սմ), երկու կողմից տարբեր ուռուցիկությամբ (7 և 5մմ) խոշորացույցը (աղ. XIX,2): Լեռնային բյուրեղը սպիտակ, թափանցիկ կվարց է: Խրուստալ-բյուրեղ բառը ծագում է հունարեն χρΟσταλλος - սառույց[452] բառից: Լեռնային բյուրեղին վերագրվում էին մի շարք հմայական, հուռութ հատկանիշներ: Ծեծած բյուրեղի փոշին բուժում էր հին վերքը, մաքրում ատամների նստվածքը, պահպանում վատ երազներից, կազմում էր աչքեր բուժող ղեղարաղադրիչներից մեկը և այլն:[453] Բյուրեղից պատրաստված գավաթի շուրթ և ուլունքներ հայտնաբերվել են Արտաշատի VIII բլրում, արևմտյան դամիարանադաշտում.[454] Գեղաղիրի հելլենիստական սարկոֆագի նյութերում.[455] Գառնիում: Լեռնային բյուրեղից պատրաստված գնդաձև, ձվաձև և այլ կերտվածքի ուլունքները սովորական են Դրիմի I-IIդդ. դամբարանների համար:[456] Ինչ վերաբերում է լեռնային բյուրեղե խոշորացույցին, այն առաջին անգամ է հանդիպում Հայաստանում և, անկասկած, ծառայել է գուշակություններ կատարելու համար:

Ուշագրավ է սաթե (խեժ) ուլունքը (աղ. XVIII,2): Արևագույն, թափանցիկ, կենդանական ծագում ունեցող այդ քարը մարդկությանը հայտնի է դեռևս մ.թ.ա. III հազարամյակից: Այն հիշատակվում է Հոմերոսի «Ոդիկականում», Պլատոնի, Հիպոկրաաի, Սոֆոկլեսի, Էսքիլեսի և այլոց մոտ:[457] Հերոդոտոսը, Թեոֆրաստը, Պլինիոս Ավագը վկայում են, որ Սկյութիայում հանդիպում են «ոսկե վառվող քարեր»: Սաթը հիվանդություններ բուժող քար էր:[458] Սաթի բուժիչ հատկանիշների մասին գիտեին և Իբն Սինան[459] ու Ալ-Բիրունին:[460] Բիրունին նշում է, որ սաթը պաշտպանում է չար աչքից: Սաթն իր գույնի պատճառով կապվում էր արևի պաշտամունքի հետ: Ոչ միայն գարդարանքի, պերճանքի առարկա էր, այլև հիվանդություններից պաշտպանող հմայիլ (հուռութք):[461]

Հայաստանում սաթը հայտնի է ուշ բրոնզի դարաշրջանից, հայտնաբերվել է Լճաշենում, Լոռի բերդի դամբարաններում, ուրարտական հուշարձաններում, Կարմիր բլուրում, Արգիշտիխինիլիում, Օշականում:[462] Անտիկ շրջանի հուշարձաններում համեմատարար քիչ է

---

451 *Ժ.Դ.Խաչատրյան*, Հնագիտական եայտնագործություններ Գեղաղիրում, էջ 87:
452 *Կ.Պ. Պատկանյան*, նշվ. աշխ., էջ 30-31:
453 Նույն տեղում:
454 *Ժ.Դ.Խաչատրյան*. Արտաշատ II, էջ 87, նկ. 44,7:
455 *Ժ.Դ.Խաչատրյան*. Հնագիտական հայտնագործություններ Գեղաղիրում, էջ 92:
456 *Е.М.Алексеева*, Классификация бус некрополя у дер Ново-Отраное, МИА, № 155, Москва, 1970, с. 164, 165.
457 *Н.И.Корнилов, Ю.П.Солодова*, Ювелирные камни, Москва, 1982, с. 200.
458 *Н.А. Богданова*, Семантика и назначение некоторых из амулетов из могильников первых веков н.э. юго-западного Крыма, История и культура Евразии по археологическим данным, Москва, 1980, с. 80.
459 *Ибн Сина*. Канон врачебной техники, Ташкент, 1956, с. 324.
460 *Бируни*, Собрание сведении о познании драгоценностей, Ташкент, 1963, с. 197.
461 *Н.А.Богданова*, նշվ. աշխ., էջ 80:
462 Սաթի մասին գրականությունը և .ծագման խնդիրները տե՛ս *Е.М. Алексеева*, Античные бусы Северного Причерноморья, Археология СССР, САИ, Г1-12, Москва, 1978, с. 21-23 և հտ; *С.А.Есаян, А.А.Калантарян*, Ошакан I, էջ 75-76:

հանդիպում: Սիսիանից բացի, սաթ հայտնաբերվել է Արտաշատում և Գառնիում:[463] Պատճառը ապակե ընդօրինակություններն էին, որը էժան էր և մատչելի: Սաթը թանկ արժեր, ուստի անհաս էր չքավորներին և հիմնականում հանդիպում է ունևոր իռավի դամբարաններում:

Բազմագան ու բազմագույն են նաև Սիսիանի դամբարանի մածուկե (ադ. XVIII,₁), ապակե ուլունքներն ու մատանու ակեաքարերը: Ուշադրության արժանի է ակնաքարերից հատկապես ապակե կաթնավուն շերտի վոա կապույտ շրջանի մեջ պատկերված օվալաձև ուռուցիկ ոսկեջրած աչքը (երկ.՝ 1,6սմ) (ադ.XIX,₄): Արտաշատում հայտնաբերվել են և փղոսկրե աչքեր, որոնցից մեկի սպիտակուցը մարմարից է, ոիրը՝ բաց կանաչ ապակուց: Մյուսի բիբը բացակայում է: Աչք-գարդն ուներ պաշտամունքային նշանակություն: Այն կրողը օժտվում էր գերբնական հատկությամբ: Աստվածներն ունեն այնպիսի ունակություն, որոնց սարսափեցնող հայացքին ոչ մի մահկանացու չի կարող դիմանալ: Հունական դիցաբանության մեջ դա Գորգոնա Մեդուզան էր: Հիշենք Մովսես Խորենացու (II, 42) վկայությունը Եղվանդի չար աչքի մասին, որի դեմ առավոտները՝ արշալույսը բացվելիս, որձաքարե վեմեր էին ոռնում: Նրա հայացքի չարությունից դրանք կտոր-կտոր էին լինում: Հռոմեական շրջանի այդպիսի աչքեր հայտնաբերվել են Եգիպտոսում:[464] Մատանու քարերի ապակե ընդօրինակություններ են կաբմրա-շագանակագույն, ուռուցիկ, երկաբավուն (երկ.՝ 2 սմ), մուգ կանաչավուն, քիչ ձվաձև (երկ. 1,9 սմ), դեղնավուն, երկու սպիտակ իայտեր ուռուցիկ (երկ.՝ 1,2 սմ), մուգ դեղնավուն և շագանակագույն, միլեֆիորի տեխնիկայով պատրաստված, շրջանաձև ուռուցիկ ակնաքարեր:

Ապակե մածուկե ուլունքները տարատեսակ են, բազմագույն, կերտված տեխնիկական տարբեր հնարների կիրառմամբ (միլեֆիոր-հազարան ծաղիկ, ցանցաձև, զնդաձև ժապավենատիպ, կոնաձև և երկկոնաձև, մուգ կապույտ, սպիտակ, երկնագույն, հարդարված կաթնագույն և դեղնավուն գիգգագներով, ալիքաձև, գծաքաշ գարդերով, ցցուն և հարթ աչքերով (աչքի ուլունք) (ադ.XVIII,₁):

Հաճախ հանդիպող զարդատարրերից են «աչքերը»՝ դասավորված մեկ կամ երկու շարքով, երբեմն էլ խառը: Աչքերով ուլունքներ հանդիպում են գրեթե բոլոր հելլենիստական դամբարաններում, ավելի սակավ նաև մ.թ. առաջին դարերում (Գառնի և այլն): «Աչքերով» ուլունքները հանդես են գալիս մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբից և հարատևում են մինչև միջին դարեր: Լայնորեն տարածված են անտիկ աշխարհում:[465] Թեև ուլունքները՝ աչքերով, թե այլ տիպի, ընդունված է (ադ.XVIII,₁) համարել եգիպտական, թեև այդպիսիք պատրաստվել են արևելյան Միջերկրականի երկրներում՝ Սիրիա, Պաղեստին, Փյունիկիա և արտահանվել որպես հմայիլներ ու թալիսմաններ: Ըստ իրանական, հնդկական և միջինասիական ժողովրդական հավատալիքների՝ նման ուլունք կրողին երջանկություն և հարստություն

---

[463] Гарни II, с. 78, рис. 57.
[464] ***Axel Von Saldern, Birgit Nolte, Peter la Baume, The Elisabeth Haevernick***, Glaser der Antike, Sammlung Erwin Oppenländer, Römisch-germanisches Museum, Köen, 1975, Fig. 34-35.
[465] Այդ մասին տե՛ս Гарни V, с. 109-110:

էին սպասվում:[466]

Լևպակե ուլունքներից հետաքրքիր են երկշերտ մանր ու մեծ ուլունքները: Դրանք պատրաստվում էին հետևյալ կերպ: Գնդաձև կամ ձվաձև ուլունքները ծածկվում էին ոսկու նրրաթիթեղով (ֆոլգայով), ապա նորից պատվում ապակու թափանցիկ շերտով (աղ.XVIII,₁): Այս եղանակով պատրաստված ուլունքները թափանցիկության շնորհիվ ստանում էին ոսկեգույն գեղեցիկ տեսք: Ոսկեգօծ ուլունքներ պատրաստվել են Եգիպտոսում մ.թ.ա. IV դարում:[467]

Ուշագրավ իրողություն է, որ Հայաստանում ամենավաղ ոսկեպատ ուլունքները հայտնաբերվել են Զրառատի մ.թ.ա IVդ. պատկանող դամբարանում: Այդօրինակ ուլունքների գյուտերը սովորական են հելլենիստական շրջանի դամբարաններում, կեշանակի, թե դրանք մեծ տարածում են ունեցել անտիկ աշխարհում:[468] Հելլենիստական շրջանին բնորոշ են և երկշերտ ապակե, ոսկե գարդարուն փայլաթիթեղի միաշերտով անոթները:

Առանձին խումբ են կազմում մուգ կարմիր ապակե, կապտա-կանաչավուն թաղանթով պատված սկավառակատիպ (0,9 x1,3 17 հատ) և եռանկյունաձև (3 հատ, 1,1x1,8սմ) ուլունքները (երեք անցքով) (աղ.XIX,₁): Արտաշատից հայտնաբերվել է և մուգ կարմիր ապակե գդալ՝ արամեերեն արձանագրությամբ, որը չի ընթերցվում:[469] Հայտնի է, որ ռուբինի կարմրագույն ապակի ստանալու համար ոսկի էին խառնում, իսկ արյունագույն կարմիր ստանում էին պղնձի օգնությամբ: Կարմիր գույնի ապակին համեմատարար թանկ արժեր: Կարմիրը կապվում էր արևի հետ և աստվածների ու թագավորների գույնն էր: Աստվածներին պատկերող Արտաշատի մարմարե և կավե արձանիկները ներկված են կարմիր գույնով:

Մանր առարկաներից կարելի է հիշատակել ապակե ճարմանդը՝ կազմված ակոսավոր գոտիներից (տր.՝ 2.3 սմ, բարձր.՝ 1.2 սմ): Ապակե ճարմանդներ հաճախ են հանդիպում մշակութային շերտերում ու դամբարաններում:

---

466 *Н.Г.Борозна*, Некоторые материалы об амулетах-украшениях населения Средней Азии. Сб. Домусульманские верования и обряды Средней Азии. Москва, 1975, с. 289; *Н.А. Богданова*, Նշվ. աշխ., էջ 81.
467 *A.Kisa*, Das Glassim Altertums, I, Leipzig, 1908, p. 128.
468 *Е.М. Алексеева*, Նշվ. աշխ., էջ 27-29:
469 *Ж.Д.Хачатрян*, Стеклоделие в древней Армении (II-I века до нашей эры), ИФЖ, 1975, № 1, с. 256.

ՍԻՍԻԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆ, 1972 թ.

Դրամներ

Հայաստանի պատմության թանգարանում 15 դրամներ գրանցված են որպես Սիսիանի դամբարանում հայտնաբերված: Հայտնի չէ, սակայն, արդյոք սա այն ամե՞նն է, ինչ եղել է դամբարանում, քանի որ դրամները հավաքվել են բնակչներից, որոնք մինչև հնագետների ժամանումը հասցրել էին այն մասամբ թալանել: Դրամներից 14-ը արծաթյա են, մեկը՝ ոսկյա: Արծաթե դրամները մեծ մասամբ վատ վիճակում են, շատ հատվածներում կամ գրեթե ամբողջապես քայքայված են: Արծաթե դրամները մաքրվել են ոչ բավարար խնամքով և պատված են ռագմաթիվ խագերով: Երկու պարթևական դրախմաներ թերի են: Ոսկե դրամը գերազանց վրճակում է:

Դրամների խումբը ռադկացած է Սելևկյան Անտիոքոս VII Եվերգետի (մ.թ.ա. 138-129 թթ.) չորս տետրադրախմաներից, Աթենքի մեկ տետրադրախմայից (մ.թ.ա. շուրջ 50 թ.), մ.թ.ա. I դարի առաջին կեսի պարթևական ութ դրախմաներից՝ Սիհրդատ II-ից մինչև Որոդ II-ը, և Թրակոայի արքա Լիսիմախոսի ոսկե ստատերի արևմտավրացական մեկ ընդօրինակությունից: Մեկ արծաթե դրամ, խիստ քայքայված լինելու պատճառով, մաքրված չէ և մնում է անորոշ: Այս խմբում Անտիոքոս VII-ի դրամներն ամենալավն են, Որոդ II-ինը՝ ամենակոտսերը՝ թոդարկված մ.թ.ա. 40-ական թվականների առաջին կեսից ոչ ուշ:

Դրամների ցուցակը

1. Տետրադրախմա, արծաթ, Աթենք, մոտավորապես մ.թ.ա. 50 թ.:
   13.06 գ, 28.1 մմ, 11 ժ, ՀՊԹ 18643/1:

Դիմ. Աթենասի գլուխը՝ սաղավարտով, աջ: Կետավոր շրջանակ:

Դարձ. վերից վար՝ A/ΘE AP/XI TI [M]OΣ [Δ]H M [ETPI]: Բու, ամֆորայի վրա կանգնած, դափնեպսակով շրջապատված: Դաշտում աջից՝ Իսիսը կանգնած ձախ:

Head, B., *Historia Numorum*, Oxford, 1911, p. 386.

2. Տետրադրախմա, արծաթ, Սելևկյան թագավորություն, Անտիոքոս VII Եվերգետ, 138-129 թթ.: Թոդարկված է Անտիոքում:
   11.70 գ, 28.9 մմ, 12 ժ, ՀՊԹ 18643/3:

Դիմ. Արքայի գլուխը, ապարոշով, աջ:

Դարձ. աջից՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΝΤΙΟΧΟΥ↓, ձախից՝ [ΕΥ]ΕΡ ΓΕΤΟΥ↓: Աթենասը կանգնած, ձախ, դափնեպսակով շրջապատված: Արտաքին դաշտում ձախից՝ մենագիրը, որի տակ՝ Α տառը:

Houghton, A., Lorber, C., and Hoover, O., *Celeucid Coins*. A Comprehensive Catalogue. Part 2. Seleucus IV through Antiochus XIII, Lancaster/London, 2008 (այսուհետև՝ *Celeucid Coins*, Part 2), no. 2061 (1).

3. Նույնը: Թողարկված է Կապադովկիայում:

11.38 գ, 27.7 մմ, 1 ժ, ՀՊԹ 18643/2:

Դարձ. ΒΑΣΙΛΕΩΣ ΑΝΤΙΟΧΟΥ↓ / [ΕΥ]ΕΡ ΓΕΤΟΥ↓: Դաշտում ձախից՝ Τ, աջից՝ Α: Արտաքին դաշտում ձախից՝ , որի տակ՝ Α:

Celeucid Coins, Part 2. no. 2150 (1).

4. Նույնը:

12.36 գ, 25.8 մմ, 1 ժ, ՀՊԹ 18643/4:

Դարձ. ΒΑΣΙΛΕΩΣ ΑΝΤΙΟΧΟΥ↓ / ΕΥΕΡΓΕΤΟ[Υ]↓: Դաշտում ձախից՝ Τ, աջից՝ Α: Արտաքին դաշտում ձախից՝ (՞), որի ասակ՝ Α (՞):

Celeucid Coins, Part 2, no. 2150 (1).

5. Նույնը (՞):

10.59 գ, 25.4 մմ, 12 ժ, ՀՊԹ 18643/5:

Դարձ. Հագիվ նշմարվում է տիպը, մանրամասները պարզ չեն (դաշտում աջից՝ Α):

Celeucid Coins, Part 2, no. 2150 (1?).

6. Դրախմա (ռեկոր), արծաթ, Պարթևստան, Միհրդատ II, 123-88 թթ.:

0.98 գ, ՀՊԹ 18643/7ա:

Դիմ. Արքայի կիսանդրին՝ ապարոշով, ձախ:

Դարձ. Ադեղնավորը գահին նստած, աջ:

Sellwood, D., *An Introduction to the Coinage of Parthia*, London, 1980 (այսուհետև՝ **Sellwood**), Type 26 կամ 27.

7. Դրախմա, արծաթ, Պարթևստան, Միհրդատ II, մ.թ.ա. 123-88 թթ.:

2.02 գ, 19.7 մմ, 12 ժ., ՀՊԹ 18643/13:

Դիմ. Արքայի կիսանդրին, խույրով, ձախ:

Դարձ. Վերևում՝ ΒΑΣ[ΛΕΩΣ]←, աջից՝ [ΒΑΣ] ΙΛΕΩ[Ν]↓, ներքևում՝ [Μ]ΕΓ[ΑΛΟΥ]←, ձախից՝ ΑΡΣΑ[ΚΟΥ] [ΕΠ]ΙΦΑΝ[ΟΥ]↓: Ադեղնավորը գահին նստած, աջ:

Sellwood, Type 28.?.

8. Դրախմա, արծաթ. Պարթևստան, անհայտ արքա, մ.թ.ա. 90-ականների վերջ – 80-ականների սկիզբ: Թողարկված է Ռագայում:

3.44 գ, 19.7 մմ, 12 ժ., ՀՊԹ 18643/10:

Դիմ. Արքայի կիսանդրին, խույրով, ձախ. խույրը զարդարված է եղջյուրով և եղջերուների շարքից կազմված կատարով,

Դարձ. վերևում՝ ΒΑΣΙΛΕΩΣ→, աջից՝ ΜΕΓΑΛΟΥ↓, ներքևում՝ ΑΡΣΑΚΟΥ←, ձախից՝ ΘΕΟΠΑΤΡΟΥ ΝΙΚΑΤΟΡΟΣ↓: Ադեղնավորը գահին նստած, աջ:

Sellwood, Type 33.6.

9. Դրախմա (բեկոր), աբծաթ, Պարթևստան, անհայտ արքա, մ.թ.ա. 90-ականների վերջ - 80-ականների սկիզբ:

0.83 գ, ՀՊԹ 18643/7բ:

Դիմ. Արքայի կիսանդրին, խույրով, ձախ:

Դարձ. Գրությունից երևում է միայն. վերևում՝ ΑΣ→, ձախից՝ ΘΕΟΠΑ ⊥: Ադեղնավորը գահին նստած. աջ:

Sellwood, Type 33.

10. Դրախմա, արծաթ. Պարթևստան, անհայտ արքա, մ.թ.ա. 80-ական – 70-ական թթ. առաջին կես:

2.72 գ, 20.5 մմ, 1 ժ., ՀՊԹ 18643/8:

Դիմ. Արքայի կիսանդրին. ապարոշով, ձախ:

Դարձ. Վերևում՝ ΒΑΣΙΛΕΩΣ→, աջից՝ [ΜΕΓΑΛΟΥ]↓, ներքևում՝ [ΑΡΣΑΚΟΥ]←, ձախից՝ ΘΕΟΠΑΤΟΡΟΣ [Ε]ΥΕΡΓΕΤ[ΤΟΥ]↓: Ադեղնավորը գահին նստած, աջ:

Sellwood, Type 30.(15?).

11. Դրախմա, արծաթ, Պարթևստան, անհայտ արքա, մ.թ.ա. 70-ական թթ.:

1.74 գ, 18.2 մմ, 1 ժ., ՀՊԹ 18643/9:

Դիմ. Արքայի կիսանդրին, խույրով, ձախ. խույրը զարդարված է աստղով:

Դարձ. վերևում՝ ΒΑΣΙ[ΛΕΩΣ] ΜΕΓ[ΑΛΟΥ]→, աջից՝ [ΑΡΣΑΚΟΥ]↓, ներքևում՝ [ΑΥΤΟΚΡΑΤΟΡΟ]Σ [ΦΙΛΟΠΑΤΟ]ΡΟΣ←, ձախից՝ ΕΠΦΑΝΟΥΣ ΦΙΛΕΛΛΗΝΟ[Σ]↓: Ադեղնավորը գահին նստած, աջ:

Sellwood, Type 31.

12. Դրախմա, արծաթ, Պարթևստան, Որոդ II, մ.թ.ա. 57-38 թթ.: Թողարկված Ի: Եկրատանում:

2.32 գ, 20.0 մմ, 12 ժ., ՀՊԹ 18643/11:

Դիմ. Արքայի կիսանդրին, ապարոշով, ձախ:

Դարձ. Վերևում՝ [ΒΑΣΙΛΕΩΣ Β]ΑΣΙΛΕ[ΩΝ]→. աջից՝ [ΑΡΣΑΚΟΥ]↓, ներքևում՝

[Ε]ΥΕΡΓ[ΕΤΟΥ ΔΙ]ΚΑΙ[ΟΥ]←, ձախից [Ε]ΠΙΦΑΝΟΥΣ [ΦΙΛ]ΕΛΛΗΝ[ΟΣ]↓: Ադեղնավորը գահին նստած, աջ. աղեղի տակ ⋔ (?) մենագիրը:

Sellwood, Type 45.10 (?).

13. Դրախմա, արծաթ, Պարթևստան, Որոդ II, մ.թ.ա. 57-38 թթ.: Թողարկված է Եկբատանում:

3.15 գ, 20.2 մմ, 1 ժ., ՀՊԹ 18643/12:

Դիմ. Արքայի կիսանդրին՝ ապարոշով, ձախ:

Դարձ. Վերևում՝ ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΒΑΣΙΛΕ ΩΝ→, աջից՝ ΑΡ ΣΑΚ[ΟΥ]↓, ներքևում՝ [ΕΥ]Ε[ΡΓΕ]ΤΟΥ ΔΙΚΑΙ[ΟΥ]←, ձախից՝ ΕΙΠΦΑ[ΝΟΥΣ] [ΦΙ]ΛΕΛΛΗΝ[ΟΣ]↓: Ադեղնավորը գահին նստած, աջ. աղեղի տակ ⋔ մենագիրը:

Sellwood, Type 45.9, 46.8 կամ 47.5.

14. Լիսիմախոսի ստատերի բարբարոսական ընդօրինակություն, ոսկի:

6.80 գ, 19.1 մմ, 11 ժ., ՀՊԹ 18644:

Դիմ. "Ալեքսանդրի" գլուխը, աջ:

Դարձ. "Աթենասը" գահավորակին նստած, ձախ. աջ ձեռքում՝ "Նիկե", հետին պլանում՝ նիգակ, ներքևում՝ եռաժանի, երկու կողմից՝ ադավադված հունարեն գրությունը գծիկներով արված այունակների տեսքով;

Капанадзе, Д.Г., *Грузинская нумизматика*, Москва, 1955, Табл. I, 16.

15. Արծաթե դրամ (դրախմա), անորոշ (սելևկյա՞ն), խիստ քայքայված, պղնձային նստվածքներով պատված:

2.60 գ, 18.2 մմ, ՀՊԹ 18643/6:

Մ.թ.ա. II-I դդ. սելևկյան դրամներ, որպես կանոն՝ տետրադրախմաներ, հայտնաբերվում են Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններում, Վրաստանում դրանք բացառություն են: Սելևկյան արքաների դրամների շարքում Անտիոքոս VII-ի տետրադրախմաների գտածոներն ամենաառատն են: Դրանք հանդիպում են Հայաստանում և Ադրբեջանում արձանագրված բոլոր գանձերում (Առնակունքի գանձ՝ 17 դրամ, Արտաշատի՝ 10, Կաբալայի՝ 36, Խինիսլիի՝ 51, Բարդայի՝ 2), ինչպես նաև՝ առանձին դրամագյուտերի ձևով; հատկապես Հայաստանում: Առնակունքի, Աբտաշատի գանձերում և Ամսիանի դամբարանում պարունակած Անտիոքոս VII-ի 31 տետրադրախմաներից բացի, ՀՊԹ-ի ժողովածուի մեջ կան նույն արքայի այլ տետրադրախմաներ ևս: Դրանք ծագում են Աբտաշատի 1971թ. պեղումներից (ՀՊԹ 19006/29), Արծվանիստ գյուղում բացված դամբարանից (ՀՊԹ 14093), Բջնի գյուղի շրջակայ-

քից (ՀՊԹ 14506)[470], Քասահրի բազիլիկայի մոտից (ՀՊԹ 15992)[471]: 2001 թ. թանգարանը ձեռք բերեց Անտիոքոս VII-ի չորս տետրադրահմաներ (ՀՊԹ 19979/1, 4-6), 2004-ին՝ ևս երեքը, որոնց հետ կար նաև աթենական «նոր ոճի» մեկ տետրադրախմա: Վերջին յոթ դրամները, որոնք հայտնաբերվել են Արտաշատ մայրաքաղաքում կամ մերձակայքում, լավ պահպանված են, ինչը մտածել է տալիս, որ դրանք զանձերի մաս են կազմել: Տարբեր տարիների հայաստանաբնակներից ձեռք բերված վեց այլ տետրադրահմաներ նույնպես. հավանաբար, հայտնաբերվել են Հայաստանում (ՀՊԹ 13312, 14536, 17534, 18598, 18896/17-18):[472]

Աթենքի «նոր ոճի» տետրադրախմաները ևս Հայաստանում և Ադրբեջանում բավական հաճախ հանդիպող դրամներից են, մինչդեռ Վրաստանում սրանք հազվադեպ են:[473] Մ.թ.ա. II-I դարերում թողարկված այդ դրամներից 5 օրինակ հայտնի է Խինիսլիի զանձից (Пахомов 1966, IX. 2080, 1-5), երկուսը՝ Արտաշատի 1972 թ. զանձից (ՀՊԹ 19798/10, 19877/5): Վերը հիշատակվեց մի աթենական տետրադրահմաի մասին (ՀՊԹ 20029/1)՝ ձեռք բերված Անտիոքոս VII-ի երեք տետրադրահմաների հետ միասին, որոնք հայտնաբերվել են Արտաշատ մայրաքաղաքի տարածքում: ՀՊԹ-ում կա Արտաշատում հայտնաբերված ևս մի տետրադրահմա (ՀՊԹ 19979/1), և մեկ ուրիշը՝ գտնված Լոռա գյուղի մոտ (ՀՊԹ 14262):

Մ.թ.ա. II-I դդ. պարթևական դրախմաները, հատկապես մ.թ.ա II դ. վերջում և I դ. առաջին կեսում թողարկվածները՝ մինչև Որոդ II-ը ներառյալ, շատ տարածված են ինչպես Հայաստանում և Ադրբեջանում, այնպես էլ Վրաստանի կենտրոնական ու արևելյան շրջաններում: Դրանք առկա են Լաոռնակունքի (Միհրդատ I-ից Որոդ II-ը), Արտաշատի (Միհրդատ I-ից մինչև **Sellwood**, Type 33-ը), Խինիսլիի (Միհրդատ I-ից Միհրդատ III-ը) զանձերում: Ինչպես տեսնում ենք, Լիսիանի դամբարանում դրամների կեսից ավելին կազմում են պարթևական դրահմաները, որոնք վերաբերում են Միհրդատ II-ից մինչև Որոդ II-ը ընկած ժամանակահատվածին: Գանձերի և բազմաթիվ առանձին դրամագյուտերի տվյալները վեայում են, որ Իրերիայում, Մդվանքում և Ատրպատականում, ինչպես նաև Հայաստանում՝ առնվազն նրա արևելյան մասում, պարթևական դրահմաները համընդհանուր տարածում ունեին: Թեև Միհրդատ II-ի և Որոդ II-ի դրախմաները գերակշռում են հայտնաբերվող դրամների ընդհանուր զանգվածում, սակայն այսպես կոչված պարթևական «մութ շրջանի» արքաների դրամները (մ.թ.ա. 80-70-ական թթ.) նույնպես բավականաչափ առատ են: Սա այն ժամանակահատվածն է, երբ Տիգրան II-ի թագավորությունը գտնվում էր իր վերելքի ճանապարհին և գերիշխող դիրք ուներ տարածաշրջանում, մինչդեռ պարթև Արշակունիները զբաղված էին ներքին երկպառա-

---

[470] ***Пахомов Е.А.***, *Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа*, Баку, 1954, VI.1533, ***Մուշեղյան Խ.Ա.***, *Հայաստանի դրամական գանձերը*, Երևան, 1973, էջ 53, ծան. 5:

[471] ***Пахомов Е.А.***, *Монетные клады…*, 1954, VI.1534, **Մուշեղյան**, 1973, էջ 53, ծան. 5:

[472] Խ. Մուշեղյանը նշում է (**Մուշեղյան**, 1973, էջ 53), որ Անտիոքոս VII-ի տետրադրախմաներ են գտնվել նաև Ապարանում և Օովինարում՝ չեղելով աղբյուրը: Նույն էջի ծան. 5-ում հիշատակված ՀՊԹ № 14088-ը Անտիոքոս VII-ի դրամ չէ: Իսկ Պախոմովը գրում է (**Пахомов**, *Монетные клады…*, 1949, V.1347), որ այդ արքայի պղնձե դրամ է՝ հայտնաբերվել Ոսկեվազ գյուղում (նաև՝ **Մուշեղյան**, 1973, էջ 53, ծան. 5, № 8838): Իրականում դա Անտիոքի քաղաքային պղնձե դրամ է, թողարկված մ.թ.ա. 42/1 թ. (= ***Roman Provincial Coinage***, vol. I, № 4222): ՀՊԹ-ի ժողովածուի մեջ կա, սակայն, Անտիոքոս VII-ի մեկ պղնձե դրամ, որը հայտնաբերվել է Գառնիի ամրոցի շրջակայքում (ՀՊԹ 18259/2):

[473] Ե. Պախոմովը հիշատակում է միայն մեկ օրինակ՝ գտնված Սուխումիում, որի իսկության վերաբերյալ, սակայն, նա կասկած է հայտնել, **Пахомов**, *Монетные клады…*, 1954, VI.1528:

կությունները կարգավորելու և արևմուտքում ու արևելքում արտաքին թշնամիներին դիմագրավելու խնդիրներով: Այդուհանդերձ. պարթևական այդ արքաների դրախմաները[474] թափանցել են ոչ միայն Ատրպատական, Ադվանք, Իրերիա, որոնք Տիգրան Մեծի գերիշխանության տակ էին, այլև՝ Հայաստան, և այժմ հայտնաբերվում են տարբեր կարգի գտածոների ձևով (գանձերում, դամբարաններում կամ որպես կորսված դրամներ):[475] Ինչ վերաբերում է Սիսիանի դամբարանին, այստեղ ևս Միհրդատ II-ի և Որոդ II-ի դրախմաներից բացի ներկա են նաև **Sellwood** 33, 30, 31 սերիաները:

Հայաստանում շրջանառած դրամների կազմին բնորոշ չէ միայն Լիսիմախոսի ոսկե ստատերի բարբարոսական ընդօրինակությունը՝ առայժմ միակը հայաստանյան դրամական գտածոներում: Թրակիայի աքքա Լիսիմախոսի ստատերները՝ թողարկված մ.թ.ա. 306-281 թթ., և դրանց հետագա ընդօրինակությունները Թրակիայի, Մակեդոնիայի և Փոքր Ասիայի ինքնավար քաղաքներում մ.թ.ա. II դ. ընթացքում շատ տարածված էին մերձսևծովյան շրջաններում:[476] Արևմտյան Վրաստանում (կամ Կոլխիսում) այդ ստատերների ընդօրինակման նախատիպ են դարձել ղարձերեսին՝ ներքևում, եռաժանու պատկերով օրինակները:[477] Ինչպես հատուկ է բարբարոսական ընդօրինակություններին, պատկերներն ու գրությունները. սկզբում որոշ չափով մոտ լինելով բնօրինակին, հետգհետե ավելի են աղավաղվում ու կոպտանում: Ընդօրինակությունների այս ամբողջ շարքը Դ. Կապանաձեն թվագրում է մ.թ.ա. I – մ.թ. II դարերով:[478] Սիսիանի օրինակը համեմատարար վաղ թողարկումներից է և կարող է տեղավորվել այն ժամանակահատվածի մեջ, որին պատկանում են դամբարանի մյուս դրամները: Համենայն դեպս, դժվար թե այն թվագրվի մ.թ.ա. 40-ական թթ. ավելի ուշ, նկատի ունենալով Որոդ II-ի դրախմաները, որոնք ամենակրտսերն են խմբում:

Ռուբեն Վարդանյան

---

[474] Մասնավորապես՝ **Sellwood** 33, 30, 34, 31 տիպերը, որոնք թողարկվել են 80-70-ական թթ.. Վարդանյան Ռ., Հայաստանի պատմության պետական թանգարանի պարթևական դրամների ժողովածուն, *Դրամաշրջանառությունը Հայաստանում. Հանրապետական գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ*, Երևան, 1998, էջ 29: Քանի որ այս սերիաների վերաբերության եարցը դեռևս վերջնականապես լուծված չէ. այստեղ դրանք հիշատակվում են ըստ Դ. Սելվուդի տիպաբանական դասակարգման, որպեսզի բոլորին ճանաչելի լինեն: Տես նաև **Vardanyan R.**. Some remarks on the arrangement of the Parthian "Dark Age" com series. *Parthica* 8.2006, Pisa-Roma 2007, pp. 105-129.

[475] Դրանք կան Սառնակունքի (**Մուշեղյան**, 1973, էջ 75, 76, 101-106 = **Sellwood**, Types 33,30,40), Արտաշատի (**Sellwood**, Types 33), Խինիսլիի (**Пахомов**, *Монетные клады*..., 1966, IX.2080. с.17-19 = **Sellwood**, Types 33, 30, 34, 31, 38. 39, 40) գանձերում: Սոանձին գտածոների վերաբերյալ տես՝ ***Пахомов Е.А.***, Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, Баку 1926-1966, вып. I-IX, **Абрамишвили, Т.Я.**, Каталог парфянских монет Государственного музея Грузии, Тбилиси, 1974, с. 130-132, **Մուշեղյան Խ.Ա.**, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983, էջ 35:

[476] Ե. Պախոմովի կողմից արձանագրված 111 օրինակներից 105-ը հայտնաբերվել են Կրասնոդարի մարզում, հիմնականում՝ մերձափնյա տարածքներում: Մնացած 6-ը գտնվել են Վրաստանում, առավելապես նրա արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջաններում (**Пахомов**, *Монетные клады*..., 1926, I.17; 1938, II.316, 317; 1949, V.1328; 1957, VII.1703; 1959, VIII.1912): Ե. Պախոմովի կողմից հիշատակված բարբարոսական ընդօրինակություններից միայն մեկն է ծագում Կրասնոդարի մարզից. մյուսները հայտնաբերվել են Վրաստանի արևմտյան կեսում, մեծամասամբ՝ ափամերձ շրջաններում՝ Աջարիայում և Աբխազիայում (**Пахомов**, *Монетные клады*..., 1926, I.20, 21; 1940, III.651, 666-668; 1949, IV.1010; 1949, V.1329, 1330; 1959, VIII.1913; 1966, IX.2077):

[477] Բյուզանդիոնում դրանք թողարկվել են մ.թ.ա. 195-100 թթ. ընթացքում, տես, օրինակ, NFA. 1898, nos. 405-406; **Classical Numismatic Group**. Inc., Mail Bid Sale 46, June 24, 1998, no.227, Պոնտոսի Կալլատիս և Տոմիս քաղաքներում, Միհրդատ VI-ի օրոք, 89-72 թթ., տե՛ս, օրինակ, **Frank Sternberg AG**, Fernauktion, 18.Dezember 1999 im Zürich, nos. 131-135; **Frank Sternberg AG**, Auktion XXXV im Zürich, 2000, nos. 219. 220):

[478] ***Капанадзе Д.Г.***, Грузинская нумизматика, Москва, 1955, с. 40, 169.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սիսիանի դամբարանը՝ Հայաստանի ուշ հելլենիստական շրջանի վերնախավի վառ հուշարձան

Վաղ միջնադարյան հայկական գրավոր աղբյուրների համաձայն՝ Հայաստանի թագավորները թաղվել են Դարանաղյաց և Անգեղ տան գավառներում.[479] սակայն մենք դեռևս հնարավորություն չունենք դրանք ուսումնասիրելու: Սիսիանի դամբարանը Հայաստանի հելլենիստական շրջանի վերնախավին պատկանող մեգ հայտնի երկիրոդ դամբարանն է: Ուստի ավելի է կարևորվում նրա դերը՝ հելլենիստական շրջանի ազնվականության ապրելակերպը, ճաշակը, թաղման կառույցները, ձևերն ու ծեսերն ուսումնասիրելու համար:

Առաջին դամբարանը, որ պեղվել է1917թ. Ս.Վ. Տեր-Ավետիսյանի կողմից, էրգրումից ոչ հեռու գտնվող Դարույնքի (Հասան դալա) կուրգանն[480] է: Հողային աշխատանքների ժամանակ բացված երկու նույնատիպ կուրգաններից նա միայն մեկն է կարողացել պեղել: Դամբարանը եղել է ուղղանկյուն կառույց՝ շարված լավ մշակած բաց մոխրագույն սալերով: Շարվածքը եղել է չոր, միայն անկյունային զանգվածեղ քարերն են միացած եղել «ծիծեռնակապոչ» կապերով: Թաղման խցիկը եղել է նույն սալ քարերից անհնամ շարած սալահատակի տակ: Այն ունեցել է արկղի տեսք (2x2,5 մ): Հրատարակված է դամբարանի հատակագիծը, սակայն կտրվածքները բացակայում են, և որևէ բան ասել ծածկի ձևի մասին հնարավոր չէ:

Դամբարանից հայտնաբերվել են ոսկե օվալաձև մանյակ, ծայրերում՝ եղջյուրակիր (այծի) առյուծի գլխաքանդակներով, մատանի, ոսկե երկու մեդալիոն, առյուծապատկեր (տր.՝ 5սմ), դրոշմագարդ մամլածո ոսկե կրծքազարդ՝ մարդու գլխի պատկերով, դրոշմակերտ ոսկե խողովակներ, արծաթե կիսագնդաձև թաս, կավե (կարմիր գույնի) լավ փայլեցրած յոթ սավոր, գունավոր քարերից եբկու կարմիր, մեկ կապույտ «ձու» և կարմիր ներկի կտորներ: Մեզ է հասել միայն, վերոհիշյալ մանյակի լուսանկարը: Ս.Տեր-Ավետիսյանը և Յա.Ի.Սմիռնովը կուրգանները համարում են հելլենիստական մշակույթի ազդեցության արդյունք, որի համար հիմք են ընդունում հայտնաբերված նյութերը և դրանք թվագրում են մ.թ.ա. III-II դդ.:[481] Կուրգանը նյութերի առատությամբ և շքեղությամբ շատ է գիջում Սիսիանի դամբարանին: Կնշանակի այն պատկանել է ավելի ցածր աստիճանի վրա գտնվող անձնավորության: Այդ առու-

---

[479] ***Մովսես Խորենացի***, III, 27; ***Փավստոս Բուզանդ***, IV, 24:
[480] ***С.В. Тер-Аветисян***, Курганы Хасан-Калы, Известия кавказского историко-археологического института, том VI, Тифлис, 1926, с. 71-88.
[481] Նույն տեղում:

մով ուշագրավ է Մովսես Խորենացու հաղորդումը. Արտաշեսը թագավոր դառնալուց հետո իր երախտավորներին պարգևներ տալիս. «Նույնպես տալիս է քաջ և պատվավոր Արգամին նրան խոստացած երկոորդական գահը, նաև հակինթներով զարդարված պսակ, երկու ականջներին գինդեր, մի ոտքին կարմիր ագանելիք, իրավունք ունենալ գործածելու ոսկե գդալ և պատառաքաղ, և ոսկեղեն գավաթներով խմելու: Եվ այս պատիվներից ոչ պակաս տալիս է իր դայակ Սմբատին, բացի երկու գինդերից և կարմիր կոշիկից»:[482] Այսինքն՝ թագավորի կողմից, ըստ գրված դիրքի, սահմանվում էր կարգ տվյալ անձնավորությանը ընծայել համապատասխան կահ-կարասի, ըստ գույնի՝ տարազ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք զարդեղեն, կենցաղային սպասք և այլն:

Թաղման ծիսակատարության նպատակն էր, անկախ հանգուցյալի դիրքից, դեպի անդրշիրիմյան աշխարհ ճանապարհելը, այնտեղ նրա անալը թեթևացնելը, չար ուժերից պահպանելը, անվտանգությունն ապահովելը: Դամբարանում, բացի կենդանության օրոք գործածած իրերից ու առարկաներից, դրվում էին նաև մտերիմների ընծաները, թաղման ծածկոցին կարվող վերոհիշյալ ոսկե մանր գարդերը, զանգակներ, թալիսմաններ, խնկարկման անոթներ, ցանցկեն բրոնզե կախիկներ և այլն:

Սիսիանի դամբարանի, թեկուզ մեզ մասամբ հասած ոսկե, արծաթե իբերի գեղարվեստական մետաղի, ոսկե և արծաթե դրամների, կահ-կարասին, բազմազան ու բազմատեսակ առարկաների առատությունն ու շքեղությունը (15 հ.), փաստում են դամբարանի տիրոջ՝ Արախսզատի բարձրաստիճան անձնավորություն կամ ավելի հավանական է Սյունիքի նախարար լինելը: Այդ մասին հավաստում են նաև մեդալիոնների պատկերները, Նիկե-Վիկտորիայի ատրիբուտներով Անահիտը, Աթենասը, արև-արծիվները: Ինչպես վերը տեսանք, Ա.Փերիխանյանի կարծիքով ռամբակ-(«թաս») տերմինը և Արախսզատ անունը միջին իրանական (պարթևական) և միջին մարական ծագում ունեն: Դա արդյունք է Սյունիքի աշխարհագրական դիրքի, Մարաստանի հետ ունեցած էթնիկական, կուլտուր-լեզվական և պատմական աղերսների: Արախսզատ նշանակում է «աստվածների կողմից պաշտպանվող» կամ «աստվածների հովանավորության տակ ծնված»:[483] Նման մեծաշուք արտահայտություններով իրենց մեծարում էին թագավորները կամ նրանց մոտ կանգնած մարդիկ: Արտաշես I-ը (մ.թ.ա. 190-160թթ.) Թեղուտի և Զանգեզուրի արամեերեն արձանագրություններում իր ընդարձակ տիտղոսաշարում իրեն անվանում է «թագակեր», «հաղթական», «իշխանությամբ օժտված»: Այս էպիտետը Քսանթոսի եռալեզու արձանագրության (հունարեն, արամեերեն, լիկիերեն) հետ համեմատելով՝ Վ.Լիվշիցը բացատրում է որպես Միհր-Ապոլոնի հովանավորության տակ գտնվող:[484] Սիսիանի դամբարանը պատկանում է մ.թ.ա. I դարի երկրորդ կեսին և խոսուն վկայությունն է հայ մարդու գեղեցիկի նկատմամբ ունեցած հակումների ու ձգտումների՝ իրեն շրջապատել թանկարժեք և բարձրարվեստ առարկաներով: Նման ապրելակերպը բնորոշ էր հայ իշխող

---

[482] *Մովսես Խորենացի*, III, 27:
[483] *Ա.Գ.Պերիխանյան*, Ук. соч., с. 80-81.
[484] *В.А. Лившиц*, Трилингва из Ксанфа и надписи Артаксия, VIII всесоюзная конференция по древнему Востоку, посвященная памяти академика В.В. Струве, Тезисы докладов, Москва, 1979, с. 54-55; *А.Г.Периханян*, Материалы к этимологическому словарю древнеармянского языка, ч. I, Ереван, 1993, с. 6.

վերնախավին: Այն ավելի շատ էր ենթարկվում հելլենիստական մշակույթի ներգործությանը: Սիսիանի դամբարանի գտածոներում քիչ չեն ներմուծված առարկաները ի նշան տարբեր երկրների հետ ունեցած առևտրական և մշակութային աշխուժ կապերի: Տեղական թե ներմուծված՝ գեղարվեստական իրերը բնորոշում են Հայաստանի վերնախավի գեղագիտական ճաշակն ու հակումները:

Հայաստանի մ.թ.ա. II- մ.թ.III դդ. մշակույթը շատ ընդհանրություններ ունի հելլենիստական աշխարհի, հատկապես Սիրիայի և Փոքր Ասիայի մշակույթների հետ, մշտապես հաղորդակ նրանցում իրականացվող նոր արարքներին և մշակութային ձեռքբերումներին, փոփոխություններին, որոնց ազդեցությունը նկատելի է Հայաստանի նյութական մշակույթի բոլոր ճյուղերում:

ЗАКЛЮЧЕНИЕ

Сисианская гробница – яркий памятник армянской знати позднеэллинистического времени

Согласно армянским раннесредневековым письменным источникам армянских царей хоронили в провинциях Даранахяц и Ангех Тун[485], проводить исследования в которых мы пока не имеем возможности. Сисианская гробница– второй из известных нам могильников, принадлежащих армянской знати эллинистического периода. В связи с этим неоценима его роль в исследовании образа жизни аристократии эллинистического периода, ее вкусов, погребальных сооружений того времени, типов захоронений и похоронных обрядов. Первый могильник такого порядка, раскопанный С.В. Тер-Аветисяном в 1917 г., –курган Даруйнк (Хасан кала), находящийся неподалеку от Эрзрума[486]. Он успел раскопать лишь один из двух однотипных курганов, открытых во время земляных работ. Склеп представлял собой прямоугольное сооружение, сложенное из хорошо обработанных светло-серых плит. Кладка была сухой, только угловые массивные камни были соединены скрепами в виде «ласточкина хвоста». Погребальная камера из таких же плит помещалась под полом, также выложенным плитами, но не столь тщательно. Она имела форму ящика (2 х 2,5 м). План могильника опубликован, однако разрезы не приведены и неизвестен вид перекрытия. В могильнике найдены золотое овальное ожерелье с львиными головками на концах, увенчанными рогами горного козла, кольцо, два золотых медальона с изображением льва (диам. 5 см), золотое нагрудное украшение с изображением человеческой головы, выполненное штамповкой, изготовленные тем же способом золотые трубочки, серебряная чаша полушаровидной формы, семь хорошо лощенных кувшинов из красной глины, яйца- из цветных камней (два красного цвета, одно синего) и кусочки красной краски. До нас дошел лишь фотоснимок змееголового ожерелья. Исходя из анализа рассмотренного материала С. В. Тер-Аветисян и Я. И. Смирнов увязывают эти курганы с культурой эллинистического

---

[485] ***Мовсес Хоренаци***, История Армении, III, 27; ***Павстос Бузанд***, История Армении, IV,24.

[486] ***С. В. Тер-Аветисян***, Курганы Хасан-Калы, Известия кавказского историко-археологического института, том VI, Тифлис, 1926, с. 71-88.

периода и датируют их III – II вв. до н. э.[487] Курган в Даруйнке как по количеству находок, так и по роскоши, заметно уступает Сисианской гробнице, т. е. он принадлежал человеку, стоявшему на более низкой общественной ступени. С этой точки зрения заслуживает внимания сообщение Мовсеса Хоренаци о том, что Арташес, став царем, одарил своих благодетелей: §Храброму и почтенному мужу Аргаму он жалует обещанный второй престол, усыпанный яхонтами венец, пару серег для ушей, красную обувь для одной ноги, право пользоваться золотой ложкой и вилкой и пить из золотых кубков. Такие же примерно почести, кроме пары серег и красного ботинка, он воздает своему воспитателю Смбату».[488] Другими словами, царь устанавливал для данного лица, в соответствии с занимаемым им положением, утварь, какой он должен пользоваться, цвет одежды, вид металла, из которого должны быть сделаны его украшения и посуда и др.

Целью погребального обряда было, независимо от социального положения покойника, проводить его в подземный мир, облегчить его существование в нем, защитить от злых сил, обеспечить безопасность. В погребение помимо предметов, которыми покойник пользовался при жизни, ставились также дары от близких, сделанные специально для погребения мелкие золотые украшения, пришиваемые к покрывалу, бубенчики, талисманы, кадила, сетчатые бронзовые подвески и др.

Хотя материалы из Сисианской гробницы дошли до нас не полностью, их обилие и роскошь–разнообразные золотые и серебряные предметы, металлические изделия, золотые и серебряные монеты (15 шт.), домашняя утварь, свидетельствуют о том, что гробница принадлежит высокопоставленному лицу Арахсзату или, по всей вероятности, нахарару из Сюника. О том же говорят сюжеты медальонов, Анаит, снабженная атрибутами Нике-Виктории, Афина, солнце-орлы. Согласно А. Периханян, термин *рамбак* – чаша и название Арахсзат среднеиранского (парфянского) происхождения, что является следствием географического положения Сюника, его этнических, культурных, языковых и исторических связей. Арахсзат означает охраняемый богами или рожденный под покровительством богов.[489] Так называли себя цари или их приближенные. Например, Арташес I (190-160 гг. до н. э.) в арамейских надписях Техута и Зангезура в обширном списке своих титулов называет себя «венценосцем», победоносным, §облеченным властью». В. Лившиц, сравнивая этот эпитет с трехъязычной надписью Ксанфа (на греческом, арамейском и ликийском языках), объясняет его как находящийся под покровительством Митры-Аполлона»[490].

Гробница Сисиана относится ко II половине I в. до н. э. Он является

---

[487] Там же.

[488] ***Мовсес Хоренаци,*** История Армении, Ереван, 1990, II, 47 (пер. Г. Саркисяна).

[189] ***А. Г. Периханян,*** Арамейская надпись на серебряной чаше из Сисиана, ИФЖ, 1971, N 3, с. 80-81.

[490] ***В. А. Лившиц,*** Трилингва из Ксанфа и надписи Артаксия, VIII всесоюзная конференция по древнему Востоку, посвященная памяти академика В. В. Струве, Тезисы докладов, Москва, 1979, с. 54, 55; ***А. Г. Периханян,*** Материалы к этимологическому словарю древнеармянского языка, ч. I, Ереван, 1993, с. 6.

свидетельством того, что высшему сословию Армении, которое все больше попадало под влияние эллинистического искусства, было присуще стремление к роскоши–золотым и серебряным изделиям, как и высокохудожественным дорогостоящим изделиям из металла и другого материала. Среди материалов Сисианской гробницы немалое количество составляют привозные предметы, свидетельствующие о торговых и культурных связях с разными странами, об их оживлении. Как местные, так и привозные художественные изделия позволяют составить представление о вкусах и пристрастиях высшего сословия Армении.

Культура Армении II вв. до н. э.-III в н.э. связана с эллинистическим миром, особенно с Сирией и Малой Азией, причем эллинистическое воздействие заметно во всех областях культуры.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԵՀ - Բանբեր Երևանի Համալսարանի

ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների

ՀԺՊ – Հայ ժողովրդի պատմություն

Հպթ – Հայաստանի պատմության թանգարան

Հպհ – Հնագիտական պեղումներ Հայաստանում

ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես

АГСП – Античные города Северного Причерноморья

ВГМГ – Вестник Гос. музея Грузии

ВДИ – Вестник древней истории

ВИА – Всеобщая история архитектуры

ВОН – Вестник общественных наук, АН Арм ССР

ГИМ- Государственный исторический музей

ИФЖ – Историко-филологический журнал

КСИИМК– Краткие сообщения института истории материальной культуры

КСИА – Краткие сообщения института археологии

Л – Ленинград

М – Москва

МАК - Материалы по археологии Кавказа

МИА – Материалы и исследования по археологии СССР

МКА – Материальная культура Азербайджана

СА – Советская археология

САИ- Свод археологических источников

СПБ – Санкт-Петербург

ТГЭ – Труды государственного Эрмитажа

ЭО – Этнографическое обозрение

AMI – Archaologische Mitteilungen aus Iran

CAH – The Cambndge Ancient History

Աղյուսակների ցուցակ

Աղ. I. 1, 2 Տեղադրական հատակագիծ (դամբարանը վերևից)

3.Դամբարանի հատակագիծը

4.Դամբարանի կտրվածքը1-1

5. Դամբարանի կտրվածքը 2-2

Աղ. II 1.Դամբարանի ներքին տեսքի վերակազմություն

2. Կավե սարկոֆագ

3. Կավե արձանիկների վրա պատկերված թախտերի ձևեր

Աղ.III 1, 2 Կահույքի մետաղյա մասեր

3,4 Բազկաթոռ, ոտքերի տակի աթոռակով

6,7 Աթոռ, ոտքերի տակի աթոռակով

8. Կահույքի ոտք ձուլելու կաղապար (գիպս, Արտաշատ)

Աղ.IV 1.Արծաթյա թաս՝ առևակոսներով, նետաբույսի տերևներով, խաղողի ոճավորված վագերով

2. Նույնի գրչանկարը

Աղ.V 1. Նեհավենդի մոտ «Կարենների գանձարանի» մեջ գտնված արծաթյա թասը (պահվում է Բեռլինի թանգարանում)

2.Արծաթե կիսագնդաձև թաս

3-5. Արծաթե նիսագնդաձև թասեր

Աղ.VI 1.Արծաթե սկահակ՝ պսակի տակ գրված արամեերեն արձանագրությամբ

2.Արամեերեն արձանագրություն

Աղ. VII 1-4. Արծաթե ապարանջաններ, ոտքի

Աղ. VIII 1. Արծաթե շերեփ՝ այծի գլխի քանդակով

2.Արծաթե գդալ՝ բադի գլխով

3.Արծաթի գդալի պոչ՝ ոճավորված օձի գլխով

4.Արծաթե գդալ (թերի)

5.Արծաթա փոքր գդալ՝ փորագիր պոչով

6.Արծաթյա գդալի բեկոր

7.Արծաթյա գդալ շրջանաձև, պոչը թերի

Աղ. IX 1-3 Արծաթե կանթերի մասեր

4. Արծաթե աշտանակի ձող

5. Բրոնզե թիակներ

6. Արծաթե թիթեղներ

7,8 Ապակե ճարմանդներ

Աղ. X 1,2 Բրոնզե գավաթ՝ քանդակազարդ կանթով

3, 4 Արծաթե թասեր

5.Պղնձե կաթսայի վերին մաս

6 Պղնձե կաթսա՝ շարժական կանթով

7, 8 .Պղնձե թասեր

Աղ.XI 1.Բրոնզե աշտանակ

2. Փայտե մեծ արկղի բրոնզե ծխնիներ

3. Պորֆերիտե զարդատուփ

4. Պորֆերիտե զարդատոպի (Արտաշատ)

5. Լանջապանակի թիթեղ

6. Բրոնզե օղեր

7-10. Քարե գնդաձև, անվաձև, բազմանկյուն իրեր

Աղ.XII 1.2 Խեցեղեն գնդաձև ջրամաններ

3-5. Ձնարակաձ տափաշշեր

Աղ. XIII1.Արծաթե ումբոն

2. Բրոնզե գանգակներ

3. Դաշույն

4-6.Նիզակների շեղբեր

7, 8, 10, Տեգերի ծայրեր

9, 11. Նետասլաքներ

Աղ. XIV Դրամների ցուցակ

1. Աթենք, մոտավորապես մ.թա. 50թ., տետրադրախմա

2. Սելևկյան թագավորություն, Անտիոքոս VII Եվերգետ

3. Նույնը

4. Նույնը

5. Նույնը

6. Պարթևստան, Ամիրդատ II, դրախմայի բեկոր

7. Նույնը, դրախմա

8. Պարթևստան անհայտ արքա, մ.թ.ա. 90-ականների վերջ-80-ականների սկիզբ, դրախմա

9. Նույնը, դրախմայի բեկոր

10. Պարթևստան, անհայտ արքա, մ.թ.ա. 80-ականների վերջ-70-ականների առաջին կես, դրախմա

11. Պարթևստան, անհայտ արքա, մ.թ.ա. 70-ականների վերջ, դրախմա

12. Պարթևստան, Որոդ II, դրախմա

13. Նույնը

14. Լիսիմախոսի ստատերի բարրարոսական ընդօրինակություն

15. Անորոշ, դրախմա, խիստ քայքայված:

Աղ.XV. 1,2 Գավազանի (ակինակի դաստակի) գլխիկներ

3.Ոսկե առյուծագլուխ ապարանջան

4.Ոսկե առյուծի ոճավորված գլուխներով ապարանջան

Աղ.XVI1.Ոսկե մատանի՝ նռնաքարով

2.Ոսկե ականջող՝ նռնաքարով

3,4 Ոսկե կախիկներ՝ նռնաքարով

5-7 Ոսկե մատանիներ

8 Ոսկե կախիկներ՝ հատիկավոր զարդով

9.Ոսկե կախիկներ

10-17.Ծածկոցին կարելու ոսկյա զարդեր

Աղ.XVII1. Մրծաթե ոսկեջրած մեդալիոն՝ Աթենասի գլխի պատկերով

2.Արծաթե ոսկեջրած մեդալիոն՝ ամպրուկի վրա կանգնած արծվի պատկերով

3.Արծաթե ոսկեջրած մեդալիոն՝ հաղթական դիրքով կենդանու վրա կանգնած արծվի պատկերով

4. Նույնը

5.Մրծաթե ոսկեջրած մեդալիոն՝ Նիկա-Վիկտորիայի պատկերով

Աղ.XVIII 1,2 Քարե, ապակու և ապակու մածուկե ուլունքներ

Աղ.XIX 1. Սկավառակաձև և եռանկյունաձև ուլունքներ

2. Մատանու ակ

3. Մպակե ճարմանդ

4. Մատանու ակ

5,7,8, Մատանու ակեր

9. Աարդիոնե գեմմա և գիպսե դրոշմ

10. Մատանու քարեր

11. Խաղափուլ

12. Ապակյա սրվակ

Список таблиц

Таблица I

1.2. План гробницы (вид сверху)

3. План камеры гробницы

4. Разрез гробницы 1-1

5. Разрез гробницы 2-2

Таблица II

1. Реконструкция интерьера гробницы

2. Глиняный саркофаг

3. Изображение различных типов лож на терракотовых статуэтках

Таблица III

1.2. Металлические части мебели

3.4. Кресло и скамейка для ног

6.7. Стул и скамейка для ног

8. Литейная форма ножки мебели

Таблица IV

1. Серебряная чаша с каннелюрами листьями sagittana и стилизованной лозой винограда

2. Рисунок той же чаши

Таблица V

1. Серебряная чаша, обнаруженная близ Неговенд в кладе "Каренов" (сохраняется в музее Берлина)

2-5. Полусферические серебряные чаши

Таблица VI

1. Серебряная ваза с арамейской надписью

2. Арамейская надпись

Таблица VII

1-4. Серебряные браслеты для ног

Таблица VIII

1. Серебряный ковш с изваянием головы козла

2. Серебряная ложка с головой утки

3. Серебряная ложка со змееголовой ручкой

4. Серебряная ложка (фрагмент)

5. Маленькая серебряная ложка с врезным орнаментом на ручке

6. Обломок серебряной ложки

7. Фрагмент сферической ложки

Таблица IX

1-3. Части серебряных дужек

4. Серебряный стержень канделябра

5. Бронзовые лопаточки

6. Фрагменты серебряных изделий

7.8. Стеклянные пуговицы

Таблица X

1.2. Бронзовый кубок с орнаментированной ручкой

3.4. Серебряные чаши

5. Верхняя часть медного котла

6. Медный котел

7.8. Медные чаши

Таблица XI

1. Бронзовый канделябр

2. 3. Бронзовые скобы от большого деревянного ящика

4. Шкатулка из порфирита

5. Шкатулка из порфирита (Арташат)

Таблица XII

1.2. Керамические шарообразные кувшины

3-5. Поливные фляги

Таблица XIII

1. Серебряный умбон

2. Бронзовые колокольчики

3. Кинжал

4-6. Лезвия копий

7.8.10. Наконечники дротиков

9.11. Наконечники стрел

Таблица XIV Монеты

1. Афины (около 50 г. до н.э. тетрадрахма)

2-5. Селевкидское царство, Антиох VII Эвергет

6. Парфия, Митрдат II (фрагмент драхмы)

7. Парфия, Митрдат II драхма

8. Парфия, неизвестный царь (конец 90 – начало 30 гг. до н.э.) драхма

9. Парфия, неизвестный царь (конец 90 – начало 30 гг. до н.э.) фрагмент драхмы

10. Парфия, неизвестный царь (конец 80 –первая половина 70 гг. до н.э.) драхма

11. Парфия, неизвестный царь (70 гг. до н.э.) драхма

12-13. Парфия, Орот II, драхма

14. Варварское подражание статера Лисимаха

Неопределенная драхма, плохой сохранности

Таблица XV

1,2 Головка посоха (жезл, акинак)

3. Золотой браслет с львиными головками

4. Золотой браслет со стилизованными львиными головками

Таблица XVI

1. Золотые подвески с гранатовой вставкой

2. Золотая серьга с гранатовой вставкой

3,4. Золотые подвески с гранатовой вставкой

5-7. Золотые кольца

8. Золотые подвески, украшенные зернью

9. Золотые подвески

10. Золотые нашивки

11-17. То же

Таблица XVII.

1. Серебряный с позолотой медальон с изображением головы Афины

2. Серебряный с позолотой медальон с изображением стоящего на молнии орла

3. Серебряный с позолотой медальон с изображением орла, стоящего на небольшом животном

4.То же

5.Серебряный с позолотой медальон с изображением Ники-Виктории

Таблица XVIII

1,2 Каменные, пастовые и стеклянные бусы

Таблица XIX

1. Пастовые бусы дисковидной и треугольной формы

2. Каменная вставка перстня

3. Стеклянная пуговица

4. Каменные вставки перстней (колец)

5-7,8. Стеклянная вставка перстня

9. Гемма из сердолика и ее гипсовый слепок

10. Каменные вставки перстней

11. Игральная кость

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

ТАБЛИЦЫ

ԱՂՅՈՒՍԱԿ I



ԱՂՅՈՒՍԱԿ II



1

3



2

ԱՊՅՈՒՄԱԿ III

ԱՊՅՈՒՍԱԿ IV



1





2

ԱՂՅՈՒՍԱԿ V

5

4

3

2


1

0 2

ԱՂՅՈՒՍԱԿ VI




Ղ Ղ Ռ Ք Ի Ն Ա Ն Ա Ն Ա

ԱՂՅՈՒՍԱԿ VII



ԱՂՅՈՒՍԱԿ VIII



ԱՂՅՈՒՍԱԿ IX



ԱՂՅՈՒՍԱԿ X

0 4







0 2

ԱՂՅՈՒՍԱԿ XI







0 2

ԱՂՅՈՒՍԱԿ XII



ԱՂՅՈՒՍԱԿ XIII



ԱՂՅՈՒՍԱԿ XIV



ԱՂՅՈՒՍԱԿ XV

ԱՂՅՈՒՍԱԿ XVI

ԱՂՅՈՒՍԱԿ XVII

ԱՂՅՈՒՍԱԿ XVIII

1

2

0 1

ԱՂՅՈՒՍԱԿ XIX

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 5
ԴԱՄԲԱՐԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 8
ԹԱՂԱՆ ՃԵՍԸ 12
ԴԱՄԲԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ 16
Կահույք 16
Աշտանակներ 23
ՈՍԿԵ ՏԱՐԲԵՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՎ ԶԱՐԴԵՐ 26
Գավազանների գլխիկներ 27
Ապարանջաններ 29
Ականջօղ և մատանիներ 31
Մեդալիոններ 35
Այլ զարդեր 43
ԱՐԾԱԹԵ ՍՊԱՍՔ ԵՎ ԶԱՐԴԵՐ 48
Թասեր և սկահակներ 48
Ապարանջաններ 55
Գդալներ և շերեփ 56
ԲՐՈՆԶԵ ԱՊԱՍՔ 59
Գավաթ 59
Կաթսաներ, թասեր և այլ առարկաներ 61
ԽԵՅԵՂԵՆ 64
ԱՊԱԿԵ ՍՐՎԱԿ 66
ՔԱՐԵ ԱՆՈԹՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ 69
ՁԵՆՔԵՐ 71
ԳԵՄՄԱ 74
ՈՒԼՈՒՆՔՆԵՐ, ԱԱՏԱՆՈՒ ՔԱՐԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ 76
ԴՐԱՄՆԵՐ(Ռ.Վարդանյան) 82
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 88
ЗАКЛЮЧЕНИЕ 91
Համառոտագրություններ 94
Աղյուսակների ցուցակ 95
Список таблиц 98

ОГЛАВЛЕНИЕ

История раскопок.....5
Архитектура гробницы.....8
Ритуал захоронения.....12
Описание и изучения материалов гробницы.....16
мебель.....16
канделябры.....23
Золотые предметы и украшения.....26
головки посоха.....27
браслеты.....29
кольца и серьги.....31
медальоны.....35
другие украшения.....43
Серебряная утварь и украшения.....48
чаши и кубки.....48
браслеты.....55
в) ложки и половник.....56
Бронзовая утварь.....59
а) кубок.....59
б) котлы, чаши и другие предметы.....61
Керамика.....64
Стеклянный флакон.....66
Каменные сосуды и другие предметы.....69
Оружие.....71
Геммы.....74
Бусы, камни колец и другие предметы.....76
Монеты(Р.Варданян).....82
Заключение (на арм.).....88
Заключение.....91
Список сокращений.....94
Список таблиц(на арм.).....95
Список таблиц.....98

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

21

ԺՈՐԵԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԻՍԻԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Հրատ. խմբագիր՝ Ա.Մահակյան
Լուսանկարիչ՝ Ռ. Հակոբյան

LIMUSH PRINTHOUSE

Ֆորմատ՝ 60x84 1/8, թուղթ օֆսեթ, N 1:
Ծավալ՝ 7.75 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 300:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Ք. Երևան, Տերյան 72, հեռ. 58.22.99
E-mail: info@limush.am

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0114981